

ԲԱԳԻՆ


digitised by A.R.A.R. @

թիվ 9-10

ՀՈՎՏ. - 1971 ՍԵՊՏ. - 2048.

Գ Ո Ւ Ն Ե Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ձ. ՆՈՒՐԵԱՆ	Կանչը
Ա. ԱՐՓԻՆԷ	Սիճոյի եւ Սփիկի
* * *	Վերջին գրութեան
Յ. ԳՅՈՒՆԵ	Ղօզանց յանրժուրեան
Յ. ԳՅՈՒՆԵ	Սեւ վերքը
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Լուսամտի կանխեղները
Յ. ՁՈՐԵՑԻ	Հայկական ուղեւորավէպ
* * *	Հայաստանի երիտասարդ բանաստեղծութեան առաջնական պատկերը
Ն. ՋԱՐԵԱՆ	Դաւիթ Յովհաննէս
Գ. ՅՈՎՀԱՆՆԵՍ	Եթէ ուզենաս մի օր...
>	Վերջերց
>	Երէկ տօն էր
Ռ. ԱՐԱՄԵԱՆ	Յովհ. Գրիգորեան
ՅՈՎՀ. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Լուսամտի զոգին դրամ չն
>	Հոգեհանգիստ
>	Պատերազմ եւ խաղաղութիւն
Ս. ՅԱՊՈՒՏԻՎԵԱՆ	Ջուլիետ Գրիգորեան
Ջ. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Քայլում եմ դէպի
>	Յագրատարելով տարածութիւնը
>	Վերածնունդ
Մ. ՍԱՐԳՍԵԱՆ	Արմէն Մարտիրոսեան
Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ	Հեռում մշուշների միջով
Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	Արձագանց
>	Քաղաքային սէր
>	Մայրամուտ
Պ. ՍԵՒԱԿ	Արտակ Ոսկանեան
Ա. ՈՍԿԱՆԵԱՆ	Անազուի երկյարկանի եկեղեցի
Գ. ԷՄԻՆ	Եւրի Սահակեան
Ե. ՍԱՀԱԿԵԱՆ	Տարւայի հինգերորդ եղանակը
Հ. ԷԳՈՅԵԱՆ	Հանգչող աստղերը
>	Քաղաքի ծայրամասում
>	Դէպի երեկոյ շարժումը օրը...
Վ. ԴԱՒԹԵԱՆ	Անհիտ Պարսամեան
Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ	Մնկախա կանաչ խոտի մէջ
>	Ատոգորի վրայ
Ս. ՋՈՒՈՅԵԱՆ	Մի մարդ կար
Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ	Առողջ սրտումների մանապարհին
ՅՈՎՀ. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Թէ ինչպէս շահեւտացաւ բանաստեղծութիւնը
Ե. ՍԱՀԱԿԵԱՆ	Բանաստեղծութիւնը սէր է
Հ. ԷԳՈՅԵԱՆ	Բառի օրոնումը
* * *	Գրականութեան զայրերը, գայլը...
* * *	Դժուարը իրենից հասում լինելն է...
* * *	Վերջին գայլին հանգանակով
Խ. ԱՍՈՅԵԱՆ	Խաւարի ոգին
Վ. ՋԱՆՈՅԵԱՆ	Հեռու տեղ մը
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Արեւ
Ս. ՅԱԿՈՑԵԱՆ	Երկրորդ պատը
Է. ՍԱՐԱՅԵԱՆ	Որպէսզի մնաս
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Գիշեր - ցերեկ
Հ. Տ. ՍԱՐԳՍԵԱՆ	Յնիք
Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Յանախանք
Ք. ՃԻՆՊԱՇԵԱՆ	Մանուկը
* * *	Լուրեր յետագում յօդուածներու եւ նորութիւններու մասին
Ս. ՋԵՅԹՂԵԱՆ	Կնոջ սը կեանքը
Մ. ԷՍԻԻ	Էօժէն Իոնեսկո
* * *	Փայլօ ներսումս



Բազմը

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍԻԻ

Ք. 80ԲԲ. ԹԻԻ 9 - 10

ՍԵՊՏ. - ՀՈՒՆ. 1971

ԳԵՐՈՒԹ

Կ Ա Ն Ձ Ը

Առաջին օրէն, երբ կանչող հնչեց ու վերադարձի
Տա՛հ հովան դիմաց պարզեցին մարդիկ յոյսի առաքաստ՝
Այրող օրերու անապատին մէջ դուն տուիր ինձի
Խաբկանքն անխնայ հողիդ ու ջուրիդ եւ արցունք առատ:

Անտրտունց անող սերերու անշէջ կրակին թափուող
Սառնահունչ մերժում, որ արցունքի ծռ'վ շուտով կը դառնայ,
Հայաստա՛ն բարի, եղար միշտ այդպէս, եղար կրկնուող
Ծարա՛ւ դուն միայն, իմ հայրենայտանն շրթներուս վրայ:

Արտասահմանի գեղափ, այլ օտար տարածքին նետուած
Ունիս հազար մարդ ու հարի՛ւր հազար եւ դեռ անլին,
Որոնք ամէն օր հրաշքիդ համար լուռ, բազկատարած
Կ'աղօթեն ու հե՛ւ՛ կը սպասեն որ թե տաս իրենց յոյսին:

Ո՞ր լարին դայչիմ, եւ հրաշագօր դիմեմ ո՛ր երգին,
Սիրած ըլլալու ներմակ ազանին որկելու համար,
Որպէսզի անոր ալ խոնջ թեւերէն երբ յանկարծ փրթին
Փետուրներ վրան հոգիիդ լնին՝ ըլլաս ապշահար,

Սարսառ'ս նաեւ, խղճի խայթերու տենդագար դողով
Ու պահ մը գոնէ՛ հատնող կարօտի իմ մռայլ կռծին
Դէմ ըլլաս գթատ եւ իմ երգերուս մէջէն տրամաբով՝
Ականջ տաս միայն կարօտիդ ժայռի՛ն գարնող ալիքին:

(«Էսէ Երեւան» շարքէն)

ԱՇՈՏ ՆՈՒՐԵԱՆ

digitised by

A.R.A.R.@

Ա. ԱՐՓԻՆԷ

ՄԻՆՏԻ ԵՒ ՍՔԻՓԻ

— Իո՛հ', Սինտի, — կը սաստեմ ցած ձայնով, երբ փողոցէն եկող պըզտիկ ազմուկ ձը Սինտին իր կոշումին կը հրաւիրէ, — Իո՛հ', այսօր Շարաթ է, դորժ ու դպրոց չկայ, բոլորը կը քնանան տակաւին, իո՛հ'...

Դունչը ինձի երկարած կը ծօտենայ, կը նստի ետեւի սաքերուն վրայ ու՝ կ'ըր ազուոր աչքերուն մէջ խընդրանք, պաղտտանք դրած, կարծես կ'ըսէ:

— Տէ՛ս, արեւը ինչպէ՛ս կը փայլէ... Թող անոնք վերը քնանան. մենք երթանք քիչ մը քայլենք, վազվզենք, մաքուր օդ չնչնեք...

Քանի մը օրուան ընթացքին սորված է արդէն, թէ տան հիւրը խնդրանք մերժող չէ:

— Պտո՛յտ է ուզածդ, — լա՛ւ, — կ'ըսեմ, ու սեղանին վրայէն կը վերցընեմ վզին շղթան:

Ուրախ-ուրախ կը ցատկէ ոտքի ու միասին կ'ելլենք դուրս:

Այլ ու ձախ, մարդերու զմրոխտին մէջ նստած ու ճաղկազարդ գօտիներով պծնուած բաց դոյն, աղուոր սուսեր:

Ճնր. Երբքի գրեթէ միանէ ու իրարու կպած, բարձր ու դորշ շէնքերուն որքա՛ն նման...», կ'անցնի մաքէս:

Կը քայլենք ծառուղիէ երկայնքին: Գիշերուան անձրեւէն թափած, զեղնած տերեւներու կոյտեր շոգի ու բոյր կ'արձակեն արեւի շողերուն տակ:

Սինտին ականջները սրած՝ երբեմն կը վազէ, կը կորսուի թուփերուն ետեւ: Գիտեմ, ճազարներ կը հետապնդէ: Քիչ ետք, ցողէն, կամ տակաւին թաց տերեւներէն թրջած, սմբած՝ կ'ելլէ դուրս:

Երբ կը մտնենք ձօտակայ պուրահին մէջ՝ զով օդը կը շոյէ դէմքս: Սաղարթներուն արանքէն ինկող արեւին ճառագայթները կը պատեն տիրող մըռու ու լաւթիւնը կը խզուի միջատներու բզզիւնով, թռչուններու դայլարով:

Քրոջս մանչերը որքա՛ն շուտ մեծցան, կը մտածեմ ու կը ժպտիմ՝ ինչու լով Ռեքիին մանկութիւնը, մեր արկածախնդրական թափառումները...

Օր մը, երբ տակաւին հազիւ չորս տարեկան էր ան՝ իր լսած մէկ պատմութենէն խորապէս տպաւորուած՝ հայտնաբերեց ուշիմ աչքերը ինձի ուղղած, հարցուց:

— Մեր կողմերն ալ թագուած, պահուած զանձիք կա՞ր:

— Ձեմ գրտեր, կա՞ր: — պէտք է

մատնադարան Հանդիպեմ, գիրքերը պրպտեմ, քարտէսները ուսումնասիրեմ...

Չմտադաւ: Շարունակ յիշեցայ ինչի: Ու օր մըն ալ, բռնեցի գիրուկ թաթիկէն ու Սքիփին ալ մեզի հետ առած՝ նշանք դուրս:

Իր պզտիկ բաճը ամուր բռնած՝ զրեթէ կը վազէր ու շարունակ հարցումներ կ'ընէր.

— Պիտի գտնե՞նք գանձը...

— Ձեմ գիտեր, պիտի վանանք:

— Ես խորունկ, շա՛տ խորունկ պիտի փորեմ...

— Այո, գիտեմ, որ պիտի փորես, որպէսզի գտնենք...

— Ես ուժով եմ...

— Այո, դուն քաջ եւ ուժով մանչ մըն ես:

— Ես հայրիկիս հետ քնսըլ կ'ընեմ ու դայն վար կը ձգեմ...

— Հայրիկդ խոչոր մարդ է, ինչպէ՞ս կ'ընես ատիկա...

— Ինքը կը սորվեցնէ ինձի:

Երբ մասնք պուրակին մէջ՝ լըջացաւ յանկարծ ու աւելի ամուր բռնեց ձեռք:

— Մայրիկս կ'ըսէ, որ օձեր կ'ըլլան սյուեղ...

— Ոչ, Սքիփին եթէ տեսնէ՝ կը վախցնէ ու կը փախցնէ զանոնք:

Վաղեց Սքիփին ետեւէն:

Ձեռքս ունէի թղթիկ մը, որ իրրեւ թէ ցոյց կու տար ուղղութիւնը, մօտաւոր տեղը, երկա՛ր տարիներ առաջ թաղուած գանձի մը:

— Սպասէ՛, — կանչեցի, — տե՛ս, սա ծառին վրայ խաչ մը դծուած է.

այդպէս կ'ընէ այս թուղթը: Հիմա պիտի քայլենք դէպի այլ ու վեցերորդ ծառին աակը պիտի փորենք...

Համրեցինք ծառերը ու կանգ առինք:

Կարծես վախցաւ յանկարծ:

— Փորէ՛, — ըսի, — ուժով տղայ ես, դորձածէ բաճգ:

Սկսաւ զործի: Լուս էր ու լուրջ:

Օղնեցի իրեն, բայց յուսախար՝ նայեցաւ ինձի ու ըսաւ.

— Ձեա՛յ... ուրիշները գտեր ու արե՛ր տե՛ս:

— Փորէնք յաջորդ ծառին տակը, — խրատուեցի ես, — թերեւս էոն է պահուած:

Յոյսով լեցուած՝ հետեւեցաւ ինձի ու սկսաւ եռանդով փորել:

Յանկարծ, հրճուանքի ճիչերը լեցուցին ամբողջ պուրակը:

— Հո՛ս է, հո՛ս է, գաա՛յ, գաա՛յ,

— կը գոչէր աչքերէն շողեր արձակելով ու հողին մէջէն ոսկեզոյն շառ դեղեցիկ մետաղէ տուփ մը դուրս հանելով:

Երջանկութենէն կը հեւար ու թաթիկներովը տուփին վրայի հողերը կը մաքրէր:

— Բա՛ց, — ըսի, — բաց, որ տեսնենք ինչ կայ մէջը:

Հրճուանքը տասնապատուեցաւ...

Ի՞նչ կ'ուզէք, որ չգտնուէր տուփին մէջ... Աշխատեցայ ու մարգարտեայ մանեակներ, օղեր, դարդասեղներ, սպարանջաններ, մատանիներ, ամբողջ տուփ մը լեցուն գանձով ու գոհարներով...

Բոյրքը կեղծ, բոյրքը աչքէ ելած, վնասուած, կտորած, կամ խանութներէ տասը-քսան անքի գնուած, բայց մանուկի մը երեւակայութիւնը հըրահարող, անասճման երջանկութիւն պարզեւող, երազը իրականութեան վերածող ճշմարիտ զգանձ մը, զոր նոյն օրն իսկ լեցուցեր էի աղուոր տուփի մը մէջ ու տարեր թաղեր:

Յիշեցի այս բոյրքը, մինչ Սինտին առջեւէս կը վազէր: Այդպէս վազեր էր նաեւ Ռիքին տարիներ առաջ դէպի տուն, ոսկեզօծ տուփը ամուր սեղմած կտորձեին, ու երջանկօրէն ցոյց էր տուեր զայն թէ՛ մեծերուն եւ թէ՛ մանաւանդ, խաղընկերներուն:

Այսօր, իր ծննդավայրի օտար լեզուով բարբառող, իր մայրենի լեզուին գրեթէ անձանօթ, այդ երբեմնի փոքրիկ չքմբիչը՝ արուեստագէտի շնորհներով օժտուած ռուսամատենչ երազող մըն է՝

վեց ոտք հասակով: Այժմ ան իր մտքի բանով կ'ուզէ պիզել անցեալը ու աստիճանաբար կ'ուզէ զարթոնք և զարթոնք անհրաժեշտ է իրեն վերադարձնել կորսուած, մոռցուած, անթիւր անձնակերպութեամբ գանձերը:

Օր մը, կը յիշեմ, երբ դեռ երեխայ էր, խաղերի հետ կ'ուզէ իրեն վերադարձնել ու շիտաթեան ակնարկելով գրչեց՝

— Որովհետեւ հայ եմ ես:

Ու անցնող տարիներուն հետ ականջ տուաւ իր հոթեան խորքէն բարձրացող ծայրին. իր ցեղին, իր նախահայրերուն, իր արեան ծայրին, որ կը մղէր դէնք պեղելու տնցեալը, հասնելու անոր ահուճին, ճաննայու, գտնելու ինքզինքը, իր հայութիւնը...

Ու կարգաց, կարգաց ինչ որ դատաւ գրողարաններուն մէջ:

Երբ դեռ մէկ ասրեկան անգամ չըկար՝ իր յուրը դիպուած գոյնզգոյն խաղախմբերուն մէջէն ձեռքը իսկոյն կ'երկարէր պատկերազարդ գրքոյկներուն: Անոնք է, որ հմայք ու արժէք ունէին իրեն համար:

Անգամ մը, դրացի բարի ծերունի մը նշմարելով ատիկա՝ զարմացած, խնդացեր էր ու ըսեր. «Այս մանչը ուսումնական պիտի ըլլայ...»:



Դէպի տուն մեր ճամբուն վրայ, Սինտին զարձակ ճագարներ հետապնդեց, ու երբ հասանք՝ աղաքը արդէն էլէր, հասցնելով նախաճաշեր ու մարդաղաշտ էին մեկնել:

Սինտին վերվար փնտոց գտնո՞ք. զարձաւ անհանգարտ. պարտէղին շրջանը ըրաւ քանի մը անգամ ու ի վերջոյ եկաւ նստաւ ոտքերուս մօտ: Քիչ ետք, ելաւ ոտքի ու պաշտ շարժելով՝ աչքերը ինծի սեւեւեց, Ձփորձեց սակայն կրկին կամքը պարտադրել, աներեւութիւն ընել:

Կը դիտեմ Սինտին ու կը յիշեմ Սքիփին... Եղբիկի ազուր աշքերով Սքիփին, որ տարիքը տուաւ ու հիւանդացաւ, Տեսնելով անոր տոտապիլը՝ որոնցին հնազանդիւ անանարուժին ու հաղաղ քան զարգանող ներարկում մը վերջ տրուաւ անոր կեանքին: Տուն գտնուել ետք, այր ու կին, իրենց յուզումէն սթափած՝ յանկարծ յիշեցին, թէ շան դիակը պէտք էր կիզել տային ու անհունը պարտէղին մէջ թաղէին:

Ինչ պիտի ըսէին աղոց... Օրերէ ի վեր արցունք թափող աղոց... Ու Սքիփիին իրբեւ անկողին ծառայող բարձր՝ տարին թաղեցին պարտէղին ետեւ, մշտադաւարի մը տակ:

Տարիներ շարունակ, փոքրիկ կրկն դպրոցէն դարձին, ծաղիկներ քաղեց ու զրաւ հոն, ուր կը կարծէր, թէ իր սիրելի Սքիփիին անհունը կը հանդիպէր... Քանի մը տարի, իրենց մօր հնազանգած ըլլալու համար, տղաքը մնացն ուսանց շունի: Բայց օր մըն ալ, ցուցափեղկին մէջ խաղացող շնիկները երբ կը դիտէին՝ անոնց մէջ տեսան կլորիկ, աւուրիկ Սինտին ու մեծ ու փոքր չըրցան բաժնուիլ անկէ: Գնեցին զայն ու բերին տուն:

Սինտին նման չէ ազնուական Սքիփիին: Խաղ սիրող, մարդամօտ շնիկ մըն է: Խեղացի ալ է: Արդէն գիտէ կրկին հրամանները գործադրել: «Լստէ՛, խօսէ՛, ձեռք թօթուէ՛, մեռած ձեռքի՛ր», եւայլն, եւայլն: Բայց Սինտին զլիստով մեղքը, որ իր տէրերուն արտոնքութիւն, նոյնիսկ մտահոգութիւն կը պատճառէ՝ իր բրած աստիճան պտոյտներուն ընթացքին, տուններուն առջեւ, կառածներուն մօտ կամ մարդերուն վրայ մանուկներու կողմէ մոռցուած, կամ հոն դրուած ինչ որ տեսնէ, — զնդակ, կօշիկ, ձեռնոց, լուսան, կամ խաղալիք, — կ'առնէ ու տուն՝ իր տէրերուն կը բերէ...

— Ամօթ է, Սինտի՛, ամօթ է ու անվայել ինչ որ կ'ընես, — կ'ըսեմ, — դիտե՛ս, թէ գողութիւն է ատիկա եւ գողութիւնը շատ գէշ բան է, շատ մեծ յանցանք է: Տէրերդ կը արտոնողին, կը մտահոգուին: Կը վախենան, որ գրայտներէն

նշմարողներ կ'ըլլան ու անունդ կը վարկաբեկութի, իրենց արժանապատուութիւնը կը վերաւորուի:

Սքիփին իր կերպերուն մէջ Ծանրութիւն մը ունէր: Աշքերուն, իր ազուոր աշքերուն մէջ՝ պիտի ուզէիր ըսել ժարդկային խմացակունութիւն մը կայ: Ինչպէ՛ս Հաւատարմորէն, զիտակցորէն կը հակէր վաթրիկներուն վրայ՝ կը հետեւէր սղոց ուր որ երթային: Կը սպասէր անոնց ծառ, մինչև ետ դառնային ու վա՛յ էք հկէր, Եթէ զանոնք յանդիմանող մը, կամ անոնց վրայ ձեռք բարձրացնող մը գտնուէր...:

Սինտին կը նայի աշքերուս՝ կիսասխտութի կողմերով. կը նայի կէս մը նեղւած, կէս մը վշտացած ու կարծեա կ'ըսէ.

— Ես աղաքը նուա՞ց կը սիրեմ միթէ... Ձե՛ս տեսներ որքա՛ն անհամբեր ու անհանդարտ կը դառնամ, էրբ անոնք տունը չեն: Անոնց հանդէպ ունեցած սէրս ալայցուցանելու համար է, որ ճամբուս վրայ դուստ ատարկաներս տուն, իրենց կը բերեմ ու այդ բանին համար դիւ կը յանդիմանեն...:

Իր ջիւղով կատարեալ կուսմէ՛ մըն է Սինտին: Այդպէս էր նաեւ Սքիփին:

Մասնաւորապէս շուներու համար պատրաստուած լաւագոյն ուտելիքներուն, պահածոններուն արհամարհանք միտայն ունի: Կը ծոփ ամանին վրայ, կը հոտտէ քանի մը անգամ ու սրանեղած՝ կը հեռանայ, կարծես ըսել կ'ուզէ.

— Ինչպէ՛ս կ'անկնկալէք, որ հայկական կերակուրները համտեսող մը ատիկա ուտէ...

Եւ, չ'ուտեր: Կը սպասէ, որ իր ամանը լիցուի եղինձով, միտի կամ հաւի աղուոր պատաներով, բանջարեղէնով, Հայկական ձեւով պատրաստուած որեւէ

ուտելիքով: Մեծ ախորժակով կուլ կուտայ մա՛նուանդ իրեն նետուած անուշադէնի կտորները ու այնպէ՛ս լաւ կը ծագքէ: պատրաստէ՛ տո՛րթը...

Ականջները սրած՝ յանկարծ ցատկեց ոտքի: Մտտի մը բունին վրայ կը տեսնեմ արագաշարժ սկիւռի մը գեղեցիկ պոչը, որ սաղարթներուն մէջ կը կորսուի խօսոյն: Յուստիսար՝ Սինտին կուզայ ծօտս կրկին, կ'երկարէ ժարձանդին վրայ ու զլուխը կը դնէ առջեւի թաթերուն: Քիչ ետք, սակայն, ուրախ-ուրախ հաջելով կը վազէ դէպի դուռը: Տղաքը վերագարձեր էին: Պուշը շարժելով ու հաջելով կ'երթայ մէկէն միւսը: Կեւայիչ սասուժներով կը ցատկէ անոնց հասակն ի վեր, կը լղէ անոնց ձեռքը:

Սլիկա երջանիկ է: Աշխարհը իրն է...

Կը յիշեմ, թէ աղաքը հաւասարապէս կը սիրէին նաեւ Սքիփին: Երկուքն ալ յորդ արցունք թափեցին անոր համար. բայց Խիթին երբեք չ'օտեսցաւ այն եղելիին, որուն տակ իբրեւ թէ թաղւած էր Սքիփին. մինչդեռ Կրէկը, որ այժմ ասանըչարս տարեկան ուշիմ պատանի մըն է՝ տակաւին երբեմն ծաղիկներ կը դնէ հոն:

— Կրէ՛կ, ո՛ւր է թաղուած Սքիփին, — կը հարցնեմ, իբրեւ թէ տեղեակ չեմ, երբ կը ծօտեանայ ինծի:

Ժպիտք բռնկարար կը սրբուի աշքերէն. իսկոյն կ'ուղղուի պարտէզին ետեւը, հոն, ուր ժարգը իր թաւէը չէ տարածած ու կը ծոփ գետին: Գրեթէ ծունկի՛ կը հակի հողին վրայ ու ձեռքը կ'անցընէ անոր վրայէն կրկին ու կրկին, զայն ողորկ դարձնելու, մաքրելու շարժումներով մը, բայց կը զգամ, թէ մասններուն հետ իր միտքն ու հոգին են, որ շոյեն յիշատակը իր սիրելի Սքիփինին:

Ա. ԱՐՓԻՆԷ

«ՎԵՐՋԻՆ ԳՐՈՒՍԻՄԵՍ»

«Այսու ուզարկում եմ ձեզ վերջին գրուածն՝ Տուիրուած սիրելի Պարոյր Սեւակի յիշատակին»:

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ



ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Հայրիկան պատանած այս տարուան ծանրադէպ աղէտը Պարոյր Սեւակի արկածին պարզան էղաւ, որուն առջեւ ոչ ոք, գրեթէ՛ ոչ ոք կրցաւ անտարբեր մնալ: Սուրբ համաշխարհայեան էր ու ժողովրդայեան խաւը, Ամենայն Հայոց Կաթողիկոսն սկսեալ մինչև վերջին սկսեակները արձանագրեցին այդ առիթով ապրած իրենց յուզումները, տմանք արձուցով, ուրիշներ՝ բանաստեղծութեամբ:

Սեւակին պատանած արկածին պատճառած ցնցումէն անմասն չէր կենար մնալ ու շմուշ երիտասարդ ու զգայուն բանաստեղծ Ռիմա Գառօնէ, որ աղետին (17 Յունիս) անմիջապէս Լոս Գըրի առաւ իր պաշտօնը թիւնները եւ 28 Յունիս Թուակիր համակի ժը մէջ Ներքիակած՝ փութացուց Վեյքինգի, գրելով՝



ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ

«Այսու ուզարկում եմ ձեզ վերջին գրուածն՝ Տուիրուած սիրելի Պարոյր Սեւակի յիշատակին»:

ՎԵՐՋԻՆ ԳՐՈՒՍԻՄԵՍ:

Սեւակի Տուիրուած բանաստեղծութիւնը թերեւ Ռիմայի գրած իրապէ՛ս վերջին գրուածը էղաւ, որովհետեւ, ինչպէս ծանօթ է, իր սուգին զիջ ժամանակ անց, իր կարգին, սուգ ժը մէջ մէկը, Ժողովուրդի շրջանով Պարոյրը ծոցին մէջ:

Մենք մտածելին կրտսեր ուղարկուած, անմիջապէս առաջինին ճակատագրին եւթարկուած սղբացեալ Ռիման իր վերջին համակին մէջ, ի մէջ ալլուց, զեռ կը գրէր.

«Սիրելի Պարոյր Սեւակի դառն ու անակնկալ մահը մենք վիշտ է ամենէնս համար, իսկայ ցրականութիւնը ձեռքից տուց մի քեռ երիտասարդ, բայց մտնով հասուն եւ եարուտա բանաստեղծի:

«Աւելի դառնագիւ է այն եայի համար, որ կարողացի է ըմբռնիմել մրա գրուածքները: Դեռ ինչէն զուճակով ծագիկմար պիտի սփռէ իսկայ սրտերի մէջ մեր վաղամեռ բանաստեղծը»:

Սեւակը Ռիմա Գառօնէի կրկին տարբեր ունէր եւ թէն զեռուս մենք անկատարութիւններ կապած էր իր անունին, բայց արգէն նուաճածը կը բաւէ եւ իրեն՝ իրբեւ անմահութեան պատկ, եւ մեղի՛ իրբեւ միթարութիւն:

Ռիմա Գառօնէի առիթով՝ Նոյնը կարելի է ըսել, ափսոս:

Յաջորդարար կու տանք իր ողբը՝ Սեւակի մասին, եւ բանաստեղծ հոր ողբը՝ իր մասին:

ՂՕՂԱՆՁ ՅԱԻԵՐԺՈՒԹԵԱՆ

Սիրելի Պարոյր Սեալի անմեռ յիշատակին

Քոյրը յաճախ է խնդրում մեծ եղբոր խաղալիքները,
 Երբ մեծանում է՝ նրա գրքերը.
 Թէեւ չի կարող կարգալ, հասկանալ գրքի տառերը,
 Տառերով կազմած բարդ-բարդ բառերը
 Ուրում է սակայն նրա գրքերը.
 Իսկ երբ մեծանում, հասակ է նետում՝
 Նրա մտքերը, օգնող ձեռքերը,
 Ուզում է բանալ սրտի մարմնիք իր եղբոր դիմաց,
 Կամ սփռափայտով մեղմել ու բուժել եղբոր վերքերը:

••

Մանկութեան օրում յաճախ ուզում է
 Մի թերթ ներմակ թուղթ՝ եղբոր տեսարակից
 Որտեղ կարող է միայն խօսքով,
 Մի կար գիծ գծել,
 Վերջն ալ այդ թուղթը բերանը տանել
 Ու միայն ծծել...
 Եւ երբ եղբայրը մի ներմակ թղթի
 Դժոււմ է, ներկում կարմիր խնձորը,
 Քոյրը վազելով կանչում է մօրը,
 Որ օգնի իրեն, իր եղբոր նման
 Ինքն էլ իր հերթին գծի մի խնձոր...

Մանուկ չեմ թէեւ. բայց ճոյրդ եմ յաւերժ,
 Դիւթել եմ անչափ տառած բերքերդ
 Ամեն երգերդ,
 Եւ Անյոնի քա Ջանգալատան
 Ղօզանջի կազին,
 Տն՛ր ինձ, խնդրում եմ,
 Տն՛ր ինձ մի թերթ թուղթ,
 Ղօզանջս գրեմ...
 Գրեմ զօզանջը քա յաւերժութեան...

**

Վարդապետը դիւրեց աշխարհն իր դողանջով,
 Այնպէս ետգով, մտքով, մեռաւ...

Վարդապետը սինեց ծագիկներն իր բալոր
 Քայց չճնաղ իր կեանքը

Հողմը տարաւ...

Վարդապետը մեռաւ,

Կորուստ եղբրական,

Սակայն անմահացաւ ոսկի գրչովդ,

Ո՛վ դու հայոց հաճախ

Երգդ գերք շարական

Թող դողանքի յաւերժ մարդկանց հոգում:

Ո՛վ դու անբախտ երգի՛չ

Որ ննչիլ ես ահա,

«Հողը քեքեւ լինի» քող քեզ վրայ,

Պայծառ հոգիդ որպէս յաւետ անմար տանար

Անծայր սինգերում կանգուն մնաց:

Գարեք կը գան, կ'անցնեն,

Կը շնչես նորից դու,

Խօսերդ ուժ կը տան ժողովրդիդ,

Կ'ապրեն օրենկով քեզ

Սերունդները գալիք,

Ողբո՛յն անմեռ, երգիդ, մտիդ, սրտիդ...

Զգացումներով նուրբ

Յանրժացրել ես դու,

Երգի տառապանոժ տարբ մշակին,

Յանրժացի՛ր, Սեւակ, քող անվերջ դողանքի

Հայոց արնոտ սրտում

Յրգը քո շինե...

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ

digitised by

A.R.A.R.@

Ս Ե Ի Վ Է Ր Ք Ը

Միրասուն գառակիս՝
Ռիմա Գառուէի յիշատակին

Փնտռեց, շա՛տ փնտռեց
Ազատ Ռահմանն իր կորած ուզող-
Ու մի օր յանկարծ, մեծ համբի վրայ,
Բազդադին մօտիկ, վաղ լուսաբացին
Անցնող Բարուանի մէջ, գտաւ նրա՛ն՝
Մանր բռն մէջքին, նայումէք տրտում,
Փունջ ու բոժոժով կուրծքը զարդարուն:
— Օ՛, քաղա՛ն ուզտա, — խինդեց խելագար
Բարձր բզաւեց անշոյն Ռահմանը. —
— Գտա՛յ վերջապէս, գտայ եեզ կրկին... —
Թռաւ, փաթաթուեց պարանոցովը
Իր կորած ուզտի:
Ու կրկին, կրկին բզաւեց, կանչեց.
— Հէ՛յ, Ալլա՛հ, Ալլա՛հ,
Փա՛ռէ քա զարգա՛հե,
Գտա՛յ վերջապէս ես իմ քառլանին.
Է՛յ, Քարուանապե՛տ, ո՛րտե՞զ ես, արի՛,
Արի՛, տրձակիր շարքից իմ ուզտը,
Ցա՛ծ բեր իր բեռը. քո՛զ ուզտա տանեմ:

❖

Քարուանը կանգնեց:
Բոժոժ ու զանգակ տակաւ առ տակաւ
Մնչացան, հանգան...
Ներկաներն ամէն, սեից, զարմանքից
Ողջ շուարեցին:
— Այս էլ նոր ձեւի սուգակութի՛ւն:
— Մի՛նա՛կ է, քէ դեռ պիտի հաւաքուեն
Բեղունիներ վայրի... —
Ասում են, խօսում,
Մինչ Քարուանապետն վրայ է հասնում:
— Է՛յ, ո՛վ ես եղբայր, ինչո՞ւմն է քանը,
Ո՞րտեղից եկար եւ ի՞նչ ես ուզում:
— Շամից եմ գալիս ես, Քարուանապետ,
Ամիսներ է, որ համբայ եմ կտրել,
Որանել, փնտռել ու՛ հիմա գտել...
Իմ ուզտն եմ ուզում:

— Քո ուզտը, ի՞նչպէս...
 — Իմ ուզտը, էլի՛, որին պահել եմ
 Ու մեծացրել տասներկու տարի:
 — Եւ յետո՞յ...
 — Յետոյ կորցրի՛ նրան ու հիմա գտայ:
 — Քո՞ ուզտն է դա... ինչի՞ց իմանամ:
 — Ալլա՛նն է վկայ:
 — Բացի Ալլանից, որ լուսւմ է միշտ,
 Ուրիշ փաստ ունե՞ս:
 — Իմ ուզտի սրտին, սգրուկի նման,
 Մի սեր աչի կայ... — ասաց Ռահմանը
 Եւ իր աչքերում արտասուք ցուաց:
 — Խե՛նք է այս մարդը, կամ՝ մի խաբերայ...
 Թող արե՛ք գնահատէ՛: —
 Այս ու այն կողմից կանչեցին մարդիկ:
 — Խե՛նք եմ, խաբերայ՞...
 Այդպէ՛ս է՛ք դատում կեանքում ամէն ինչ:
 Ես պահանջում եմ:
 Կա՛յ նշմարութիւն, որ վկայ չունի, եւ չի՛ ունենայ՝
 Քանի այդպէս է՛ք դատում աշխարհում...
 Խե՛նք, կամ խաբերայ՞... տուէ՛ք իմ ուզտը,
 Տուէ՛ք որ գնամ:
 — Կապեցէ՛ք սրան, մտն ենք Բաղդադին-
 նրան կը յանձնենք մենք Մեծ Ղազի՛ն,
 Այս դատաստանը քող մա կատարի:
 Եւ կապուեցին քշուառ Ռահմանի
 Ձեռք ու ստները, իր ուզտին դրին
 Ու ճամբայ ընկան:

**

Յենուած մտաբնէ՛ մախշուն բարձրին,
 Կարապի փետուրից էլ ներմակ-փրփուր
 Փարթոսը գլխին,
 Այ՛ ձեռքին թասքէ՛ս,
 Ղարամն իր կողքի նիւթադէն դրած՝
 Նստած էր Ղազին իր բազմոցի մէջ,
 Իսկ նրա առջեւ Ռահմանն էր կանգնած:
 — Լսի՛ր ինձ, Ռահմա՛ն,
 Խելիք հաւաքիք, եւ յետոյ խօսիր:
 Ասա՛, խաբուել ես չէ՞ յիշածից դու չար
 Ու սուտ ես խօսել: Քէ չէ՛, հեմց հիմա,
 Ես պատուել կը տամ կուրծքը այս ուզտի,
 Թէ՛ սուտ դուրս եկաւ՝
 Լեզուդ կը կտրեմ, որ երբեք, երբեք էլ սուտ չխօսի-
 Եւ կը վնասես այժե՛քը ուզտի:
 — Մտադ եմ ես, ակ՛ր,
 Ալլանը վկայ՞, ես սուտ չեմ խօսել:

Եւ Մեծ Ղազիի արգար հրամանով
 Մորթեցին ուզող եւ սիրող բերին...
 — Ա՛հ, Ալլա՛հ, Ալլա՛հ,
 Փառքդ մե՛ծ, Ալլա՛հ... — գոչեց Ռահմանը: —
 Արնոտ այն սրտին, մինչ խորքը խրուած,
 Տգրուկի մման, սեւ վերք էր բառած:
 Ղազին գունատուեց:
 Ողջ ներկաներին զարմանքը պատեց.
 — Ռահմա՛ն, որտեղի՞ց գիտէիր դու այդ,
 Ասա՛ ինձ, որդիս, — շշմեաց Ղազին:
 Ռահմանը խօսեց.
 — Տէ՛ր, եօթն ամիս սրանից առաջ,
 Երբ եօթն անգամ լուսինն իր պայծառ,
 Լրիւ դէմքով է նայել անսահման
 Այս անապատին,
 Մի արմաւենու շուֆի տակ,
 Եւ հենց՝ իր աչքի առաջ,
 Մեռու իր ձագը...
 Օ՛ր, տէր դատաւոր, իր որդին, գիտե՞ս,
 Իր սրտի հատար, իր խնդն գառակը:
 Նայեց ու նայեց, շատ նայեց երկար...
 Նայեց սիրասուն մեռած գաւակին,
 Եւ իր աշտարակ հասակով յանկարծ
 Նա փլուեց գետին...
 Ծալուեց, կծկուեց. ասես, սուր ցաւից
 Դարձաւ մի կոյտ քար: Աչքերը փակեց,
 Ու կուրծքը յետոյ նա սեղմեց տափին,
 Իր սիրտը խոցուեց, ասես, բեղուիկի բունաւոր նետից:
 Ա՛հ, ուզող, տէր իմ,
 Աստճոյ ստեղծած այդ ամասունը,
 Որ իր ռոգ կեանքում ամէն սանգանքի եւ չարչարանքի
 Համբերում է միշտ, սոկում, դիմանում,
 Էլ չդիմացաւ գաւակի ցաւին,
 Փախա՞ւ ու կորա՞ւ...
 Եւ ես հասկացայ, եւ ես գգացի
 Ծաւը այդ վերքի...
 Այդպիսի մի վերք էու առջեւ կանգնած՝
 Ռահմանն էլ ունի...

Օգոստոս, 1971

ԱՐԱՅ ԳԱՌՕՆԷ

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ**ԼՈՒՍԱԽՈՐԶԻ ԿԱՆԹԵՂՆԵՐԸ****(Պ. ՍԵՒԱԿ ԵՒ ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՕՆՑԻ)**

Յուզումի, փոքորկալի մտածումներու եւ խոր ապրումներու այիքն-
բուն վրայ ապրեցայ այս քանի մը ամիսները :

Հայաստանի հորիզոնէն Արագածի կանթեղները կը խորտակուէին
մարմնապէս, սակայն հոգեկան կանթեղները իրենց անմար լոյսերը կը տա-
րածէին Հայաստանի եւ արտաշխարհի ամբողջ տարածքին սփռուած հայու-
թեան սրտին եւ մտքին մէջ :

Եւ ի՞նչ յուզումնալի տուգերով եւ ցրտալի արտայայտութիւններով :

Երեսոյքը համտեսայկական ապրում մը ունէր, վեր' մեր սովորական
կեանքի չափանիշներէն :

Ու այդ հոգեկան վերելքը դէպի Արագածի անմար կանթեղը՝ հայ ժո-
ղովորդի մշակոյթի եւ ըմբռումներու վերալաց իրողութիւնն է, որ մեր
հոգին կը պարուրէ հայարտութեամբ եւ հրճուանքով :

Գացին մարմնեղէն Սեւակն ու Տարօնցիին, բայց լոյսերը բացավառ կը
մնան հայոց աշխարհին մէջ :

Յուզումի արտակարգ տարրը ծնունդ առաւ Պարոյր Սեւակի արկածա-
հարութեան ցնցումով : Ու նաեւ՝ Սողոմոն Տարօնցիի անսպասելի մահուամբ :
Իրարու ետեւէ : Այս երկու սիրելի բանաստեղծները ձեռք ձեռքի տուած՝ ան-
ցան մեր հորիզոններէն ու մեզ մղեցին կեանքի փիլիսոփայութեան խոր-
հարդներուն :

Մխիթարութիւնը մնաց ա՛յն՝ որ անոնք անմահ են...

**

Պարոյր Սեւակը Արագածի երաբուխներէն մէկն էր : Եթէ Լուսաւորչի
կանթեղը յաւիտեան կախուած պիտի մնայ Արագածի բարձունքին, ապա,
Պարոյր Սեւակի ԲԱՆԻՆ հրաբուխը միշտ պիտի ցնցէ հայ հոգին եւ այս բա-
նաստեղծը պիտի վերածէ Բեգաս երկվարդի մը :

Բազմանուտ այս գրագէտը եղաւ մտքի պոռթկում մը՝ մեր նորագոյն
բանաստեղծութեան մէջ : Արտաքին բռնիքով հարուստ, բայց միշտ ներաշ-

խարհային խորհուրդով աուցուն: Թռիչք եւ խորութեան քափանցում իրարու հակադիր են: Եթէ բանաստեղծը գտած չէ զանոնք հաւատարակչառ զազտ-նիքը, որ իր սաղանդէն կը բխի, եւ չունի լեզուի նկունութիւն եւ հարազատութիւն, այս մեծ կառոյցը փուլ կու գայ:

Սեւակը եղաւ թռիչքի եւ խորասուզման վարպետը: Թռիչքով՝ գրաւեց ընթերցողը, իսկ խորութեամբ՝ մտածումի եւ ըմբռնումի մղեց եւ ընթերցողը, ե՛ւ բննադատը:

Այս երկու յատկութիւններու միաձուլումը Սեւակի կառոյցները թէ՛ ամուր խորիսիւի վրայ կը պահեն եւ թէ՛ վերասլաց թռիչքը կը պատկերեն մեր մտքին առջեւ:

Իրմէ սրտալի բարեւ մը ստացած եմ միայն: Անմնայէս ծանօթներ չենք: Եւ գաղափարներով գտնուած ենք հակադիր բեւեռներու վրայ: Բայց արեւսում աւ գրական թռիչքները վեր են մեր քաղաքական հակամարտութենէն:

Քարձր սաղանդով այս բանաստեղծին կորուստը սիրտը մղկտացուց:

Թող Քյւ Բանի մը խօսքերը յետ մահու յարգանք մը նկատուին վաղա-մեռիկ բանաստեղծին:



Հոգեկան տպաւորութիւններու ճամբաս շատ երկար է: Այսօրը եւ յիս-ծանեակը գիրար կը խաչանեն: Ու երբ բանաստեղծ Սաղմոն Տարօնցիի կարաստով կը մորմոքիմ, ետ կ'երթամ յիսունըվեց տարի: Կը յիշեմ 1915ի Յուլիսին Պալատուխ-Մանակերտի նահանջը, երբ եւ ալ նահանգող ժողովուրդի պահակներէն մէկն էի: Տեսակ մը ազատարար էի Սաղմոնին եւ իր մօրը, որ փոխադրուէին Կովկաս:

Ու այս տղեկը, տակաւին աշակերտ, գուրգուրանքը կը վայելէր Յ. Թումանյանին, ու այդ ճամբով ալ բանաստեղծ դարձաւ Սաղմոն Տարօնցին: Այսօրուան պէս կը յիշեմ, թէ ինչպէս իր բանաստեղծ հայրը. Սաղմոնը տե-գատրեմ սրբանոց մը, ուր հայերէնի ուսուցումը խնամեով կը կատարուի: Այդ օրն իսկ կատարուեցաւ անոնց բազմակերպ: Հետագային ուրախութեամբ հետեւեցայ Տարօնցիի բանաստեղծութիւններուն, որոնք տարուէ տարի աւ-նացան ու գարգացան՝ իր նոյն եւ երաժշտական հայերէնով. զինք դարձնե-լով ուշագրաւ դէմք մը՝ Հայաստանի բանաստեղծներու հայրին մէջ:

1970ին, Հայաստան այցելութեան շրջանիս, առիթն ունեցայ Բանի մը անգամ խօսակցութիւն ունենալու մեր բանաստեղծին հետ: Գրական կալուա-ծէն մերս համակարծիք էիմք, բայց կը մնայինք հաւատարիմ էազմական մեր տարրեր դաւանանքներուն: Ուրախութեամբ կրցայ հաստատել, որ գրա-կանութիւնն ու արուեստը վեր կը մնային մեր հակամարտ դիրքերէն:

Երբ «ՊԱՏՄ ՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆԻ ԱՇԽԱՐՀԻ» հատորս լոյս տեսաւ, գնա-հատական ճամակ մը ստացայ Սաղմոն Տարօնցիէն (1957ին), ուր կը մտո-նանշէր, թէ իմ յիշատակած ԲԵՆՍԷՆ իր հայրն է: Ես անտեղեկ էի, թէ Բենսէ ծածկանուն կրողը ինձի հանդիպող Սաղմոնի հայրն էր:

Տարօնի նուիրուած հատորիս բանասիրական մասի ծանօթագրութեան մէջ կը գրէի — «Տարօնի բանասիրութեան, բարբերու եւ սովորութիւննե-րու մասին ընթերցողները լրիւ գաղափար մը կրնան ունենալ՝ դիմելով «Աղ-բազրական Հանդէս»ի Ե. եւ Զ. հատորներուն, ուր Բենսէ ստորադրութեամբ ընդարձակ ուսումնասիրութիւն մը կայ Պալատուխ գաւառի մասին»:

Ուրախ եմ ըսելու, որ Ս. Տարօնցիի քանկերով մեկտեղանեցան Բենեդիկտի ազգագրական աշխատանքները եւ հրատարակուեցան Երեւանի մէջ:

••

Մտարւն Սողոմոն Տարօնցիի յիշատակով, ահա, աչքիս առջեւն էլ'անցնին երեւ հրիտասարդներ, Տարօնի ծագիկներով, մամաւանդ Մովսէսարի ճնծաղիկի ժպիտով ու մեխակներու բուրմունքով գեղազարդելու հայաստանեան գրականութիւնը:

Սողոմոն Տարօնցի, Նորեմց եւ Դաշտեմց ծաղկաւէտ խումբ մրն էր, անբաժան, գոնէ իմ աչքիս:

Անոնք կու գային լեռնաշխարհէ մը, որ արեան ծով դարձած էր: Մովսէսարն ու Սիփանը կը մնային անդիի հորիզոններու մշուշին մէջ: Այս որբացած տղեկները, իմ աչքերու առջեւ, քայլ կը նետէին Մուշէն (1916ին) դէպի Շիրակ, որբանոցային կեանք մը ապրելու:

Քարի գաւակ այս պատմիները տասը տարի անցած՝ արդէն բանաստեղծական բեմին վրայ էին, Մովսէսարի եւ Սիփանի բարձունքներով:

Անշուշտ, իբրեւ միտքարանձախ երկարատեւ ճամբուս, ուր *խաշուածը* տեսայ եւ *Յարութիւն* առածով կազմարեցի հագիս:

Արդէն կէտ դարէն աւելի անցեալ մը ալիք կու տայ այս համառոտ տողերուն մէջ: Ես ծերութեան հորիզոնէն անդին անցած եմ, իսկ Դաշտեմց եւ Նորեմց՝ Սողոմոն Տարօնցիի եւ Սեւակի սուգերն ապրելով՝ իրենք ալ կը մտնեն տարեցներու հորիզոնին:

Կ'ուզէի, որ Նորեմցն ու Դաշտեմցը Հայաստանի տաղանդաւոր, մոյնիսկ հանճարի կայծեր ունեցող բանաստեղծներուն հետ, միշտ ՅԱՐՈՒՅԵՆՆԵՆ ճամբան բռնեն, դէպի վերելքը հայութեան:

Եթէ փնտռեն վերելքի ճամբան, թող մային դէպի Մասիսի անհասանելի բարձունքը... Վտտահ՝ որ մարմնապէս մեզմէ բաժնուած սիրելի բանաստեղծները տեսապէս իրենց պիտի ընկերանան:

••

Ինճնախօսութիւնս արձանագրեցի համառօտակի: Բայց ամէն ընթերցողի ըմբռնելի է յիսուն տարիներու փոթորկալի ալիքներու անսահմանութիւնը:

Ու երբ կ'անապարէի վերջակէտ մը գտնելու, այն օրերուն նոր սուգ մը սիրտս ճակեց:

Թուղթերուս մէջ գտայ Ռիմա Գառօնէի մէկ նամակը եւ բանաստեղծութիւնը նուիրուած Սեւակին, ցնցող պատահարի բերումով:

Ու հակատագրի ի՞նչ բերմունք: Սրբ երիտասարդ եւ ընդունակ այս բանաստեղծուհին կը սգայ արկածահար Սեւակը, քանի մը օր ետք ի՞նք էս արկածահար կ'ըլլայ Պարսից ծոցի ջուրերուն մէջ:

Լուսաւոր աստղերու կորուստները վիշտով լեցուցին սիրտս, որ յիսուն տարիներու արկածում ունեցաւ:

Մեծ հայր ըլլալ երջանկաբեր է, բայց աշխարհի ամէնէն մեծ վշտահարները մեծ հայրերն են...

Կ. ՍԱՍՈՒՆԻ

3. ԶՈՐԵՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐԱՎԷՊ

«ԵՆՆՅ» Հայը եին յիգանդակամ եւ եայկական ճամբորդու վրայ

ԺԿ.

ԼԵՂԻ ԻՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի 19 Մայիս :
 Արշալույսէն շատ առաջ կ'արթննամ :
 Հողիս տնօրինակ անհանգստութիւնը պատշգամ կը նետէ վիս, ու խոր քունի մէջ թաղուած՝ «Միջազգային պռոնիկիին» դիմաց սիկատէթ-սիկա-
 ութի հտեւէ վառելի կու տայ ինձի...
 Պոլսական օրերուս վերջինն է այս Երեքշաբթին :
 Որոշած եմ երեկոյեան «Թրքանայ» ու վազն առառու, Սեւ Մոլ-էրէկ-
 լի-Ձոնկուլտաք-Ձանդըրը-Անդարա դժով, ուղեւորուիլ դէպի Արեւմտեան
 Հայաստան, դէպի երկիրը ողորմած մեծ ծորս...
 Հայրենիքի սիրոյն պատերազմի դացող իրու զինուորին սիրտը, այո՛,
 քաջութեամբ լեցուն կ'ըլլայ. սակայն երբ ան Հասնի ռազմաճակատ, սրտին
 մէջ պատիկ վախ մըն ալ կը գոյանայ...
 Այդ վախը... քաջութեան վախն է...
 Այդ վախը թէեւ անպնտութիւն կու տայ իր յատկացուցիչին, տուած
 անպնտութիւնն ալ կը թաղմպատկէ թէեւ, սակայն վախ ըլլալէ չի դադրիլ
 ու կը շարունակէ վճռականութեան վերածուելու սահմանուած գողեր անցնել
 զինուորին սրտէն :
 Իմ պարագաս ալ նոյնն է հիմա :
 Ես ալ ինքզինքս տեսակ մը զինուոր կը նկատեմ, ու գալիք օրերը պա-
 տերազմականի պէս կը թուին ինձի...
 Պա՛հ մը, հողիէս, հայրենասիրութենէս, խառնուածքէս ու կիրքերէս

Ուրախ եմ ըսելու, որ Ս. Տարօնցիի ջանքերով մէկտեղուեցան Բենեդիկտի ազգագրական աշխատանքները եւ հրատարակուեցան Նրեւանի մէջ:



Մուռուռն Ազգամոն Տարօնցիի յիշատակով, անա, աչքիս առջեւն կ'անցնին երեւի երիտասարդներ, Տարօնի ծաղիկներով, մանաւանդ Մովսէսարի ձեռագրիկի ժպիտով ու մեխակներու բուրմունքով զեղազարդելու հայաստանեան գրականութիւնը:

Ազգամոն Տարօնցի. Նորենց եւ Դաշտենց ծաղկաւէտ խումբ մըն էր, անբաժան, գոնէ իմ աչքիս:

Անոնք կու գային լեռնաշխարհէ մը, որ արեան ծով դարձած էր: Մովսէսարն ու Սիփանը կը մնային անգիլի հորիզոններու մշուշին մէջ: Այս որբացած տղեկները, իմ աչքերուս առջեւ, Քայլ կը նետէին Մուշէն (1916ին) դէպի Երբակ, որբանոցային կեանք մը ապրելու:

Քարի զուակ այս պատանիները տասը տարի անցած՝ արդէն բանաստեղծական բեմին վրայ էին, Մովսէսարի եւ Սիփանի բարձունքներով:

Անշուտ, իբրեւ միտքարանձիւմ երկարատեւ ճամբուս, ուր *խաչուածը* տեսայ եւ *Տարուժիւն* առածով կազդուրեցի հոգիս:

Արդէն կէս դարէն աւելի անցեալ մը ալիք կու տայ այս համառոտ տողերուն մէջ: Ես ծերութեան հորիզոնէն անդին անցած եմ, իսկ Դաշտենց եւ Նորենց՝ Սոզմոն Տարօնցիի եւ Սեւակի սուգերն ապրելով՝ իրենք ալ կը մտնեն տարեցներու հորիզոնին:

Կուգէի, որ Նորենցն ու Դաշտենցը Հայաստանի տաղանգաւոր, ճշմարիտ հանճարի կայծեր ունեցող բանաստեղծներուն հետ, միշտ ՅԱՐՈՒԹԵԱՆ ճամբան բռնեն, դէպի վերելքը հայութեան:

Եթէ փնտռեն վերելքի ճամբան, Քոյր մային դէպի Մասիսի անհասանելի բարձունքը... Վստահ՝ որ մարմնապէս մեզմէ բաժնուած սիրելի բանաստեղծները տեւապէս իրենց պիտի ընկերանան:



Ինքնախօսութիւնս արձանագրեցի համառոտակի: Բայց ամէն ընթերցողի ըմբռնելի է յիսուն տարիներու փոքորկալի արիւններու անասանանութիւնը:

Ու երբ կ'անապարէի վերջակէտ մը գտնելու, այս օրերուն մար սուգ մը սիրտս նմեց:

Թուրքերուս մէջ գտայ Ռիմա Գառօնէի մէկ մամակը եւ բանաստեղծութիւնը մուրումնաւ Սեւակին, ցնցող պատահարի բերումով:

Ու նակատագրի ի՞նչ բերմունք: Երբ երիտասարդ եւ ընդունակ այս բանաստեղծուհին կը սզայ արկածաւար Սեւակը, Քանի մը օր ետք ի՞նչ եւս արկածաւար կ'ըլլայ Պարօից ծոցի զուրբունք մէջ:

Լուսաւոր աստղերու կտրուտները վիշտով լեցուցին սիրտս, որ յիսուն տարիներու ալեկոծում ունեցաւ:

Մեծ հայր ըլլալ երջանկութիւն է, բայց աշխարհի ամէնէն մեծ վշտահարները մեծ հայրերն են...

Յ. ՁՈՐԵՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐԱՎԷՊ

«ԵՆԵՐ» Հայք էին բնագրական եւ հայկական ճամբարներու վրայ

ԺԴ.

ԼԵՂԻ ԻՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի 19 Մայիս:

Արշալոյսէն շատ առաջ կ'արթննամ:

Հոգիիս անօրինակ անհանգստութիւնը պատշգամ կը նետէ զիս, ու խոր ջունկ մէջ թաղուած՝ «Միջազգային պառնիկին» դիմաց սիկատէթ-սիկատէթի ետեւէ վառելի կու տայ ինձի...

Պոլսական օրերուս վերջինն է այս Երեքշաբթին:

Որոշած եմ Երեկոյեան «Թրքանայ» ու վազն առաւ, Սեւ Մով—էրէկ—լի—Չօնկուլտաք—Չանղըրը—Անգարա գծով, ուղեւորուիլ գէպի Արեւմտեան Հայաստան, դէպի Երկիրը սղորմած մեծ մօրս...

Հայրենիքի սիրոյն պատերազմի դացող իրաւ զինուորին սիրտը, այժմ՝ քաղութեամբ լիցուն կ'ըլլայ. սակայն երբ ան հասնի սաղմաճակատ, սրտին մէջ պատիկ վախ մըն ալ կը գոյանայ...

Այդ վախը... քաղութեան վախն է...

Այդ վախը թէեւ ահազանութիւն կու տայ իր յատկացուցիչին, տուած ահազանութիւնն ալ կը բազմապատկէ թէեւ, սակայն վախ ըլլալէ չի դաշտիլ ու կը շարունակէ վճռականութեան վերածուելու սահմանուած գողեր անցնել զինուորին սրտէն:

Ի՞մ պարագաս ալ նոյնն է հիմա:

Ես ալ ինքզինքս տեսակ մը զինուոր կը նկատեմ, ու դաւիթ օրերը պատերազմականի պէս կը թուին ինձի...

Պահ մը, հոգիէս, Հայրենասիրութենէս, խառնուածքէս ու կիրքերէս

զուրս էլ յիշով եւ Հարցումներու հոթին դառնալով՝ կը բռնեմ զանոնք բովանդակող գիտնութեանս օձիքէն:

— Ո՛ւր կ'երթանք, հը՞, ո՛ւր կ'երթանք... ըսէ՛, ո՞ւր...:

Արեւմտեան Հայաստան, կ'երթանք Մոսկուայ աշխարհ, Տարօն աշխարհ, Փոքր Հա՛յք, Արեւմտեան Մեծ Հա՛յք, Մեծ բանց օտար՝, Մազկանց դաշտե՛ր, Տա՛յք, Հայոց Զոր կամ Վասպուրական...:

Երանելի՛ անուններ, մարդեր, որ Հայոց հին պատմութեան եւ մեր հագեկան աշխարհագրութեան մէջ գոյութիւն ունին միայն. անարդարութեան, մեծերու անտիրա զիւանսպիտութեան ու մեր սեւ բախտին գծած քաղաքական քարտէսները զանոնք հեքիաթ փոխադրելով, դարձուցած են առասպելական զիջարանավայր, ուր մտքով ալ զիւցազն նախնի Հայերը առասպելական ըլլալու աստիճան հրաշալի գործեր, հանճարային սիրանքներ կատարած, հոյակապ քաղաքակրթութիւն հիմնադրած եւ անցած են պատմութեան, անկէ ալ՝ իրենց վեհութեամբ ու վեհագոյն առաքելութեամբ՝ հասած լիզնիլի՛ն...:

Հետեւաբար՝

Իրենց զեղեցիկ երկիրը այժմ կը դանուի... անկարելի աւանդութեան մէջ. այդ հողերը Թուրքիայի վերածած զաժան իրականութենէն զէպի... աւանդական դրախտավայր կամ դրախտավայրի աւանդութիւն ինչպէ՞ս կարելի է ճամբորդել, խենթ ես ուզողս, գիտնութիւնս ի՞մ...:

Հալէպ—Պոլիս ճամբորդութեան ընթացքին, սոմանթիք ու տաք Հայրենադատութիւն մը կ'ենար էութեան մէջ ու զիս երկանկօրէն ա՛յնքան անիրատես կը դարձնէր, որ մեր երիտասարդական ուրախութիւններու, հին Էլիֆբերո՛ւ Պարսկաստանի խորհրդէն հրայրքային նամակներ կը ստանայի, Ու... «Հայաստան, Հայաստան, Հայաստան» կ'երթայի բարով, ուշանալու համար տարիներո՛վ, դարով...:

Ինչե՛ր ունէի տեսնելիք, լսելիք, լիովին ապրելիք...:

Անցեալը, անցեալի հերոսական իրադարձութիւնները վստահութիւն եւ խիզախութիւն կը ներշնչէին ինծի, ու ես, ներսէս, անվեհերի երգեր երգելով կը Հաւատայի,

թէ՛

Լ՛, Լ՛, հրք Հայրենիք հասնիմ սէգ Սիփանայ քաղերը, իրենց ամենի սուրբով վար պիտի իջնեն,

Հայ Յեղափոխութեան ԶԱՅՆԸ պիտի Հնչէ էրզրումի հայոց լեռներէն, Սառոն պիտի ելլէ, պիտի ապստամբի,

Տիգրանակերտ, Մուշ, Պայագիտ զէպի վաճ պիտի ուղարկուիմ հայոց գորբի պտեապամ,

Համագասպը, իր խաւքովը պիտի գայ Բասէն գաւառէն,

Գնդակ պիտի որոտայ Հայ աշխարհի շորս ծագերէն, երկնքի սմպերուն հետ երկրի Թուրքերն ալ պիտի փախին, որ Ազատութեան դրօշակը դարձեալ փայլի, Գաշնակցութեան միշտ փա՛ռէ արուի...:

Այսպէս ու այսպէս:

Արեւմտեան Հայաստանը ազգային-յեղափոխական երգերու Հողային հաւաքածոյ մը դարձած էր ինծի համար ու ես զմեզ անկեղծ զինուոր ենք» երգողի խօսութեամբ եւ յէ քօ լելի՛ շէնչողութեամբ հասած էի Պոլիս:

Սակայն հիմա, երբ որոշած եմ այսօր գրեանայն ու վաղը ճամբորդել

դէպի Անատոլու, երդունակ խանդէս գոյացած քաղցր անիրատեսութիւնս տեղի կու տայ այնպիսի լեզուի իրատեսութեան մը, ուր — կը զգամ, կ'ըմբռնեմ, կը տեսնեմ, կը լսեմ — կ'ըզրուծի հայոց լեռներուն վրայ դայլեր կ'ոռնան, բորենիներ կը շրջին ամէն կողմ, Աղատութեան դրօշը վար կ'առնըրի, սեւ-մութ ամպեր կը կուտակուին ու համոզել կու տան ինծի, թէ եղե՞նքի այն սեւ օրերուն հայերու հետ Հայաստանն ալ տարագրուած է, ամէն տեղ է, ամէն հայու սրտին մէջ, բայց ոչ իր քնական սահմաններէն ներս, որ Արեւելեան Թուրքիան է այժմ, օրբան՝ յետադիմութեան, ոճիբի, նենդութեան եւ բազմապիսի թրջութիւններու...

— «Վտանգը օրուամ Խացու է», — ըսած է Թոն Փափէն:

Բանի որ, Թուրքիոյ մէջ, դէպի Արեւելք կ'երթամ, ի՞մ ալ հացս նոյնը պիտի բլլայ. ո՞վ գիտէ, գայիքին ճակատագրական ինչպիսի՞ հոյիտներէ անցնելու ի՞նչ անօրինակ դժբախտութիւններ վիճակուին ինծի եւ մեծ փորձանքներու ենթարկեն զիս. ի վերջոյ շատ վտանգաւոր ուղիորութիւն մըն է կատարելիքս՝ վիթխարի արդիւններու դէմ պատերազմիլ մը...

Այսպիսի մտածումներով տարուած՝ Երկա՛ր կը մնամ իջեւանած պանդոկիս պատշգամին:

Արշալոյսը կը բացուի...

Վտփորը կը սկսի դունաւորուիլ եւ Պոլիսը հետզհետէ արթննալ...

Ու երբ դարաւոր տաճարներուն առաւօտեան զօղանջը կը տարածուի ամէն կողմ, քաղութեանս վախը ուղղակի՛ ջերմեռանդութեան կը փերածուի: Տաս-ասանբահներորդ սիկառէթս հազիւ վտած՝ կը նետեմ վար. ես ալ ի՞մ կարգիս, նետած սիկառէթէս առաջ փողոց կը հասնիմ ու կը քայլեմ: «Պատերազմական» ճամբորդութեանս նախօրէին՝ կ'արժէ Հայկական եկեղեցի մը երթալ եւ օրհնութիւն մը ստանալ...

ԺԵ.

ՀԱՅ ԵՄ, ՀԱՅՐ ՍՈՒՐԲ...

Նախ, մտածեցի Գուժ Փափու հասնիլ եւ պոլսահայոց բարձրագոյն եկեղեցականին օրհնութիւնը առնել. սակայն յետոյ հրատարեցայ այդ գաղափարէն:

Թերթերէն շատ յաճախ իմացած էի, թէ պատրիարքական տեղապահ Գէորգ Ասլանեան անասլամ մարդ է, ազգին, եկեղեցիին վրասներ կը հասցընէ. Պարոնեանի իսկ սահմանումով՝ նման չեպիսկոպոսի մը օրհնութիւնը կրնար... չօրհնութեան վերածուիլ եւ խանդարել մեծ ուխտադաշտութիւնս: Այ՛, հայ հողիին մէջ տեղ չունեցող այդ տեղապահը թող ըլլայ, ո՞վ կ'ուզէ ըլլայ զիս օրհնողը, վարդապետ մը, խոնարհ քահանայ մը:

Յիշեցի դպրոցական օրերէս ինծի «ճանօթ» եկեղեցականը, անբասիր հայը՝ Զարմայր Մայրագոյն վարդապետականութեան, որ հեղինակն էր մեր կրօնի դասագրքերուն. անով ճանչցած էինք Պոլսոյ Գրիգորը եւ հայոց

միւս լուսաւորիչները. հետեւէ հիսու մեր հոգեւոր ուսուցիչը եղած է ան,
իբր օրհնութեամբ իմ ուղեցոյցս ալ թող ըլլայ...

Կէս ժամ տեւող թափառումէ մը ետք, դարձեալ «Արամարտայի միջոցով ինծի համար կարեւորութիւն կը ստեղծուի Վարդանուհի սպասող հայ մեքենավարի մը հանդիպել:

— Բարի լոյս, հայրենակից:

— Առաջարկեմ, նանս:

— Զարմայր վարդապետը կ'ուզեմ տեսնել, գիտէ՞ք թէ ուր...

— Գիտեմ, գիտեմ, Ֆէրի քէօյ, Ս. Վարդան եկեղեցի. հիմա նոն ըլլալու է, տանիմ քեզ...

— Երթա՛նք:

— Յանուն Հօր եւ Արզույ, այսօրուան առաջին գործս դէպի եկեղեցի,
— կ'ըսէ հայ մեքենավարը ու կը քշէ: Քանի մը փողոց, քանի մը ոլորան,
արդէն կը հասնինք Ֆէրի քէօյ, Ս. Վարդան եկեղեցի:

Այնքան հին եւ այնքան հնազանդ է այս տաճարը, զոր տեսողը պահ մը կը տարուի ենթադրել, որ ոչ թէ Պուլտոյ արուարձաններէն մէկուն մէջ, այլ Պարսկաստանի սահմանամերձ Անզղ գիւղին ծայրամասին կը գտնուի անկիւս եւ իրբեւ տաղերէց, ունի Վարդանանքի Ղեւոնդ քահանան...

Փամուրները մեկնած էին, թերեւս... բաճով ու բրիչով. բակը կը մնային քանի մը այրեր միայն:

— Ի՞նչէ, Զարմայր վարդապետը սեւ ճաստիւմով այդ ծերունին է...

— ցոյց տուաւ մեքենավարը ու շարունակեց ճամբան:

Ես մնացի բակի դրան տողել:

Մեր մանկութեան օրերուն, երբ փողոցը կամ այլ տեղ եկեղեցական մը տեսնէինք, վազելով կը մտնենայինք անոր խնկարոյր փէշերուն ու կը համարձակէինք աջը:

«Անկուրքեան օրերը անցան գնացիմք եւ իրենց հետ տարան այդ աղւոր սփորութիւնը բովանդակող մեր մանուկ հոգին...»

Ու հիմա, Ս. Վարդանի դրան առջեւ կեցած, երբ յարմար առիթին կը սպասէի, որ վարդապետը բաճուէր իր խօսակիցներէն եւ տանձին անկիւն մը մտնեայի իրեն՝ կամայակամայ, պատարանքի ճամբով, հոգիս մանկացաւ դարձեալ ու դարձուց զիս մէկ մայթէն միւսը աջահամբոյրի վազող շրայրիկը...

Այլ առիթի չսպասեցի, գրեթէ վազելով մօտեցայ հայր Զարմայրին, առի աջը եւ երիտասարդի ողջ կորուստով համբուրեցի արջանց եւ այնպիսի վերացումով, որ օրհնողին «Աստուած օրհնէ՛ն օրհնուողին լսել կու տայ Յուսիկ-Սահակ-Ներսէս հայրապետներէն, հայոց պատմութեան օրբազան խորերէն...»

Օրհնուողիս լսել տուաւ:

«Եւ որպէսզի տուածը անեղծ մնար, ու օրհնութիւնը մնար օրհնութիւն, նախամեծար սեպեցի, միւսներու ներկայութեան, վարդապետին կողմէ ինծի ուղղուած եւ ինքնութեանս վերաբերեալ հարցումներուն անճիշտ պատասխանելու հարկադրանքէն դուրս գալ միակ ու գերազոյն ճամբորտութեամբ, եւ հակառակ երեկոյեան «Թրքանալու» որոշումիս, վերջին անգամի մը համար, թողքե՛ր մէջ»

— Հա՛յ եմ, — գոչել, — հա՛յր տարր, հա՛յ...

ԺԶ.

NERELERE GIDIYORSUN?..

Աւշ զիւերին, այլևս իբրև «Թուրք», «AGOT» զինեան մէջ, յափէն քիչ մը աւելի հարբելէ ետք, երբ դուրս ելայ, «Թրքութիւնս» անձիս հաւատացնելու զինով քմայքին յանձնուած, պանդոկի ճամբաս երկարելով, հասայ թաքսի՝ «ազգայնական» անդրանիկ այցս տալու իմ ճնոր արքայիս, Մուսթաֆա Քեմալին, եւ նոյն ատեն, իբրև քան մը փոխանցելու անփոփոխելի ներքինէս:

Ասկէ առաջ բաղձաթիւ անդամներ անցած եմ թաքսիմէն ու քմայտով դիտած Աթաթիւրքը, որ կամարաւոր պատուանդանին վրայ, իր քարեղէն փոքրաւորներէն քայլ մը առաջ, թուրք ոստիկանի շափազանցեալ եւ սոսկ մարմնական հպարտութեամբ կանգնած, ձեռքը առջեւ երկարած, կարծես ճամբայ ցոյց կու տար անցնող օրններուն...

Այս անգամ սակայն, պատուանդանէն քիչ անդին բարձրացած թրքական դրօշին շարադուշակ ծածանքը լսելի դարձնող զիւերային լուսնի մէջ, արձան Աթան բոլորովին տարբեր թուեցաւ ինծի...

Պահուս խորհրդաւորութիւնը անաւորօրէն շեշտակի դարձուց անոր քարեղէն նայուածքը եւ դայրոյթի սպաննական դրօշներում մը առաւ կեցածքին...

Այսքանը բաւեց, որ զինով թրքութեամբ ծպտուած, սակայն զլիւսն տէր մնացող հայութեան հանդէպ... ձեռքը դադարի թաքսիներուն ուղղութիւն ցոյց տալէ, այլ բացուի ինձոր բռնելու ձեւով ու հարցնէ ինծի.

— Nerelere gidiyorsun ? ...

Յետոյ, աւելի բարկութեամբ, աւելի հրամայական, աւելի պահանջկոտ.

— Սէօյլէ՛, ճէրէլէրէ՛ կիսիօրսուն...

Ինք Ղադիթիւրք, ես ալ... «զապարիւրմ» այլևս, անպատասխան չձգեցի...

Ձինք երկա՛ր-երկա՛ր գիտելով, եւ ներսէս, բարձրաձայն, ու... լեզուական մարզանք մը ըրած ըլլալու համար՝ թրքերէ՛ն, ըսի իրեն.

— Կիւնէյ Թիւրքիէյէ, հայը՛ր, Պաթը Երմէնիստան կիսիօրսում, Աթա՛թ, կիսիօրսում տեսնելու իմ հայրենի քաղաքներս, լեռներս, հողս, ջուրս, կ'երթամ տեսնելու Ազրը, Ահոռի լեռները, բարձրագոյն Արարատն ու մեր մայր Արաքսը, Անին ու Արածանին, Կարինն ու Կարսը, Սիփան սարն ու Սասնոյ կատարները, կ'երթամ տեսնելու Թարթուզը, Երզնկան, Մուշը, Մեծարնց զապաթներու վեհութիւնը, Վանը, Երլէ Կամա՛ն Վանայ ծովը, Խաման բախտով թամարի կղզի՛ն եւ փառաւոր եւ դուր կանգուն եկեղեցի՛ն...

«Ժամանակ մը պիտի ապրիմ այն հողերուն վրայ, որոնք պապերուս քրտինքով շաղուած են ու ցեղիս հերոսներուն արիւնով ներկուած...»

«Վստահ եղիք, Քեմալ, արդարութիւնը ուշ կամ կանուխ, զործնակա-

նօրէն պիտի յարգէ թափուած արեան դարաւոր իրաւունքը...

«Անատուրուն, յանձինս քեզի, խորթ Աթա մը ունենալէ առաջ, հարազատ Արամներ ունեցած է, անո՛նց, անոնց յանձնարքներուն, հին ու նոր Վարդաններուն, Մուշեղներուն, Դրօններուն, Անդրանիկին, Մուրատին, մեզի՛,»

ինձի՛ կր պատկանին այդ նուիրական տարածութիւնները, որոնք անցեալին
Հայաստան էին ու Հայաստան պիտի ըլլան զալիքին :

«Հիմա զալիքը ձգենք ապագային...»

«Դաժան ներկան աւերեր ու թրջացուցեր է այդ նահանգները եւ առա-
ւել խստութեամբ ի զօրու կր պահէ քու իսկ հաստատած այդ օրէնքդ, որով
ժեր հողերը զինուորական արգիլեալ գօտի հռչակուած են ու օտարին ծուռը
բազարձակօրէն անկարելի զարձուցած...»

«Սակայն ես պիտի երթամ, Աթա՛...»

«Ինչ պիտի ծանեմ երկիր...»

«Ոտար չեմ երբեք. հողէն՝ հողի, հարազատ դաւակն ու տէրն եմ այդ
տարերուն. «Ֆէրման տէօվլէքըմ օլտուն,

Ֆաթիհ տազլար պէնի՛մ տրք». որքան կ'ուզեն թող չեճանան փր-
մանիդ արգելքները ուխտազնացութեան հանդէպ, անկատար պիտի չձգեմ
զայն. անհրաժէշտ միջոցները ունիմ ինքզինքս թուրք ձեւացնելու եւ, իբրեւ
այդպիսին, արգելքներդ պարտութեան մատնելու :

Վազիթբիս նայէ, զլիֆէքս տես, Ղազի՛ Քեմալ, քաւէլքս եսն դրած
եմ, ուսիս նեատծ վերարկուիս զրդանէն «Հիւրընդունելի կարծիք զիրերը
կ'երեւին, օձիբս աղտոտ է, տնտաքուր փողկապիս հանդոյցը վար ինկած կը
մնայ. անատուցի թուրքի արտաքինս թերութիւն չունի... թրքերէնագի-
տութեանս պէս. կը լսե՛ս զիս. անթերի է նաեւ ամէնէն կարեւորը՝ թրքական
անձնաթուղթս. ճամբորդութեան ընթացքին, հանրապետութեանդ զինուած
կամ անգէն սեւէ պատասխանատուի դայն կրնամ ցոյց տալ անվարան :

«Եթէ նոյնիսկ... մկրտուածութեամբ հարկ ըլլայ փաստել «թրքու-
թիւն» — ինչպէս այս մէկը, թուրքիոյ մէջ շատ յաճախ պահանջուած է եւ
կը պահանջուի կասկածելի ենթականերէ — դա՛րձեալ յաղթական դուրս կու
դամ, այդ աւրընդութեամբ թրքութիւնս շակերտ չունի...»

«Հայութիւնս սրտիս խորը խոր պահելով, ես ա՛լ չակերտ պիտի չու-
նենամ, թուրքին հետ թուրքի պէս պիտի ապրիմ, եւ սկսած եմ ապրիլ
արդէն :

«Ահա թէ ինչո՛ւ, Ակոռս զինեռունէն ուղղակի այցի եկայ քեզի ու
պատասխանեցի, ա՛լ ինչո՛ւ կը շարունակես «Քերէլէրէ՛ կիտիօրսուն» հար-
ցընել, հարցուր, թէ ուրե՛ր պիտի հասնիմ, ներկէլրէ՛ ուլաշախմաքըմ...»

«Ու ես, «Ալլաիս ըամարլատրք» ըսելէ ետք, այս անգամ պարզելով
թեւս դէպի արեւելք, հուսկ պատասխանս տամ քեզի :

— ATA, TA ! ARARATA...

ԺԵ.

ՎՈՍՓՈՐԻ ՆՈՐ ԳԱՂՏՆԻՔԸ

Դէպի Արեւմտեան Հայաստան կատարած ուղեւորութեանս ողբակա-
նին սկսելէ առաջ՝ կ'արժէ խօսիլ թրքական անձնաթուղթիս մասին, եւ իբրեւ
«պարագա վախճի զուարճութիւն ներկայացնել անոր բովանդակութիւնը :
Հայէպ, թրքահպատակ, սակայն արար յաճախորդ բարեկամ մը կամ
բարեկամ յաճախորդ մը ունէի :

Շէն մարդ էր, Անտիոքի մէջ կալուածներու տէր,
 Անունը՝ Աղա,
 Ինքը աղա՝ նոյնիսկ տեղւոյն պետական անձնաւորութիւններու դի-
 մաց, որոնց պաշտօնատան դուռները միշտ յարգանքով կը բացուէին իր
 առջեւ:

Տարին քանի մը անգամ Հալէպ կու գար գործով եւ ամէն անգամ իր
 ինքնաշարժին վրայ անպայման նորոգելիք մը կ'ունենար ու խնդարով կը դի-
 մէր ինծի:

— Պիզիմ մէրժէպ հաստալանը՝... բուժիլերը սանճըլանիօր, պիր
 հալ էք...

Կամ՝

— Շու պիզիմ մէրժէպըն ինստ սուսարը տուրայօր պազը... հաշրան
 սանա, չըս'յր, պաք ԵԼ՝սը վար, ԵԼ՝ իսքիօր...

Կը նայէի, կը նորոգէի, գրամ չէի տոնէր:

Ինքն Պի, վոխարէնը, կրկին ծախսելով, «Տօ Բէ Մի»ի կամ «Նէտի Հա-
 յէպ»ի մէջ ճոխ սեղան կը սարքէր ու մինչեւ ուշ գիշեր միասին կ'երկրպա-
 գէինք Բապոսին...

Ժամանակի ընթացքին ու ճերկրպագութենէ՝ «երկրպագութիւն»՝ մեր
 ժողովուրդինը աւելի սերտացաւ, Հասնելու Համար կըբայրական սիրոյ եւ
 իմ կողմէ արասնց խնդրանքի մը:

— Պիր Բէգէրէ՛, թրքական անձնաթուղթ մը, Աղա՛, Խօկէմտէրում,
 Անքափա արաբլարըն տըր, էրգրում, Վան, Երզնիման, Մուշ, Պիթլիս Բա-
 րափարը սա՛՝ պիզի՛մ, էրմէնիլերը՛ն... Բէմիմ պուրատտ, կէօյնիմ օրա-
 սա, Աղա՛, Բէգէրէ՛ մը ճարէ, Երթամ տեսնե՛մ...

Ազան նախ թեթեւի առաւ խնդրանքս:

Յետոյ, Երբ ամենայն լրջութեամբ կրկնեցի, Հարցին իրազրծուելուն
 շատ զժուար ըլլալը յայտնեց, բայց զպախալը՛մ...» աւելցուց ու լուսանկար
 առնելով, Հողածութեամբ զետեղեց վաճառականի լայնկեկ գրամպանա-
 կին մէջ:

Երեք-չորս ամիս ետք, երբ աշխատանոցիս առջեւ կեցուց ճառողջու-
 թիւնը՝ դարձեալ խանգարուած «մէրժէպ»ը, այս անգամ գործը դուրս Հա-
 նած մարդու Հպարտութեամբ, յաղթական սրբազրութիւն մը կատարելով
 կանչեց զիս:

— Հըս'յր, Փախաք Հըսյր Բի՛մ... Նազը՛մ, Նազը՛մ, կիլ պաք շու
 մէրժէպէ...

Եւ ոտանց սպասելու իմ երթալուս, ինք մտաւ աշխատանոցէս ներս,
 Հանեց գրպանէն օրճագոյն պանակ մը, ու զայն ինծի երկարելով, ըսաւ զը-
 ւարձութեամբ:

— Ա՛լ, իսմինը Նազըմ Բոյտում... պիզէ վաքանտաշ օլտում...

Թրքական անձնաթուղթս էր...

Ուրախութենէս Համբուրեցի զինք, մինչ Հողիս արգէն թուած-զացած
 էր երկիր:

Ասանց Հողիի չէի գիտեր ի՛նչ ըսէի, ինչպիսի՛ խօսքերով շնորհակա-
 րութիւն յայտնէի Աղային, որուն Համար այսպիսի բաներ շատ սովորական
 էին. հազար մարդու թուղթ-սէնէք եւայլն սպահոված անձ էր. կուշա ու
 կուտ խնդաց զիս ցատկոտեցնող ուրախութեանս ի տես...

Յետոյ եւ ալ խնդացի, ծիծաղեցայ ուղղակի, բայց ոչ որոտուն խըն գուքէն կարճրած իր մասկոյտ աշտերուն եւ անոնց ստնքային երերումներուն վրայ, այլ խնդացի շիճ՝ վրայ, «Քրքացած» անձիս վրայ, որուն ինքնութիւնը, լատին տառերով, այսպէս արձանագրուած էր անձնաթուղթիս մէջ՝

Իթթիւատի ոճիքները նկատի ունենալով՝ այլապէս ինձի անունս — NAZIM, Հասարակ մականունս — Nalband.

Թուրք հօրս անունը — Kerim.

Թուրք մօրս անունը — Zekiye.

Մենդեանս թուականը — 1927.

Մենդափայրս — Antakya, Hatay.

Սրահասս — Makinaci.

Չեմ ամուսնացած, դաւակներ չունիմ, գրեւ-կարգաւ դիտեմ, բացառիկ ստիժով ժը դիտուորական փրկագինս վճարած եմ, խալիս-խալիս թուրք եմ...

Եւ քանի որ Վ. Շ. պետական կնիքին կեդրոնի մահիկը, նկարիս մէջ, ճակատս ծածկելով, իր ծայրերը դուրս ու վեր ցցած է, ուրեմն կրնամ աւելցնել նաեւ, որ... Թուրքի անհրաժեշտ կոտորներ ալ ունիմ, հարազատ շաւիղն եմ քարա պայծառու կոշուած մտնողիտան հին ցեղի մը...

Թրքական անձնաթուղթիս բովանդակութիւնը, երկար ժամանակ, յաճախակի արտասանութիւնս եղաւ. յարձար ատեններուն, օրական չորս-հինգ անգամ կը կրկնէի զայն, որ անվարան հարազատութիւն ժը ունենար մտքիս մէջ, եւ այդպէս մնար միշտ.

— Անբախալը Նալպանու Գերիմին օղլու Նազըմ (ախրահաշակ տղթ-Նազըմին անունակի՛ց, մեղա՛յ, մեղա՛յ, մեղա՛յ նահատակներուն...), անձեմ՝ Ձեքիյէ...

Յետոյ, ուրիշ ձեւով՝

Իմիմ — Նազըմ, լազապըմ — Նալպանու, փեդեքիմ՝ Գերիմ, անձեմ՝ Ձեքիյէ՛...

Այսպէսով... Նազըմութիւնս իւրացնելէ ետք, «Parmağ» վերնագրուած շրջանակին կեդրոնը՝

— 0 էէյ, Ներմն !

Եթամատու կնիքի քեզեքեւս, եւ զայն ճամբորդական թրքերէն գրքիս կողքերուն մէջ խնամքով կազմած, իրբեւ սուրիացի հայ, հասայ Պոլիս, եւ հոսկէ, իրբեւ... Թուրքիացի Թուրք, անա պիտի շարունակեմ ուղեորութիւնս գէպի բանագրուած Հայաստան...



Գիշերը, նախ քան Գեմալին այցելելու, «Ակոռա» գիտնտան ծիտապատ կամարներուն տակ կոնծելէ տառը, եւ գրքին կազմը քանդելու, քեզեքեւս տարախո ետեւի գրպանին մէջ կոճակի տակ առնելու... պատշաճ ճարտար-դութեամբ ինքզինքս Թուրք դաւանելէ ետք, մերկ գիրքը, փաստորս ու բուն անձնաթուղթս քարէ կապած էի արդէն եւ Վասիօր նետած՝ նոր գաղտնիք մը աւելցնելով յառակը գտնուող անհամար հիններուն վրայ...

(Շար. 5)

Յ. ՁՈՐԵՑԻ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԵՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

1961ի աշնան (Նոյեմբեր 17-20) կայացած Հայաստանի գրողներու հիմնադրույ Հա-
նապետական և Ժամանակի գրողներու վարչութեան որոշումով, յաջորդ տարուան Յուն-
ւարին ծարճին առած ԳԳՐԱՆՍ ամսագրի երկուամէն ետք, մեր հայրենիքին մէջ յանկարծ-
ին հրատարակ կէտ բանաստեղծներու ամբողջ լուսատւը, որ այնուհետեւ ու մինչև այսօր
կը գրողներէն Պալ Մաւաւրեանի միջոցով, աշխատանք, ինչպէս վախճանական թուականներու
դասակարգու երկուստարգ արձակագիրներու պարագային:

Այդ թուականին (1967) ետքն էր գործնաչ, որ ընդհանրապէս ԳԳՐԱՆՍ երկուստար-
դական ամսագրին եւ ժամանակի Բանաստեղծական գրականութիւնը ամսագրի մէջ և ԳԳՐԱՆՍ
քննքն ու ԷՄՍՅՆԻՖԻ Գայն շարքաթերթերուն մէջ՝ երկուստարգ բանաստեղծները, իրենց
առաջին իսկ գրութիւններուն առիթով, ներկայացուցան մտածուող հոգեւորականը մը՝ —
կենսագրական հակիրճ առգրում, երբեմն յուսանկարներով ու մերթ, ինչպէս իրենց կ'ընեն,
ուսուց գրողի ողջերթի խորքով:

Բնագիրներ հնազանդ էջերուն մէջ՝ ընթերցողը ճիշտագուտ կը զանկ ասորքը տար-
ներու եւ տարբեր թերթերու մէջ այդ վերաբերումին մասին վկայող շարք մը սրինակիչ
գրութիւններ, աւագ գրողներու կողմէ արտասանուած ողջերթի արտարուի խորքերու զեղե-
քիկ նոյններ: Եւ դեռ մեր ճիշտագուտ աստեղծի մը բանաստեղծները աւագ գրողներու ող-
ջերթի խորքերով նման էլ կ'ան նորերուն ամբողջութիւնը չեն ներկայացնեն, կան դեռ ու-
րիշներ. որինով, Պարոյր Լևոնի ԳԳՐԱՆՍԻ (1970, թիւ 5) մէջ ներկայացուցան է Գայնի
Դասակարգ, Բանաստեղծական գրականութիւնը ամսագրին մէջ Մեղանի Գարուբեանի, Սարգիս
Եւ Վազգէն Մնացականեան յաջորդաբար ներկայացուցին Գեորգ Ավետիս (1967, թիւ 3),
Գրեմար Սոյնեանը (1967, թիւ 10) եւ Թաթուլ Բարսեղեանը (1968, թիւ 5), իսկ Ազատի
ներկայացուց Ռազմիկ Հայրապետը (ԳԳՐԱՆՍ քննքն, 1968, թիւ 49): Գան հասանաբար զեւ
որիշներ, որոնք վերագան են մեր ուշագրութեան:

Բայց մենք խորքերէն միայն անոնք, որոնք ժամանակին ունենին համեմատաբար ասար-
կայական աւելի լայն Ժամանակիներ, — յուսանկար, կենսագրական զիմեր, ողջերթի
խորք, եւ այլն: Գանց առի՞նք ա՛յն անուններուն առջեւ, որոնք երկուստարգական բանաստեղ-
ծութեան մասին բացուած բոլոր խորքերուն մէջ հայրենիցան ու դեռ կը հայրենիցան ցայտը
եւ կը կոչուին Յովհաննէս Գրիգորեան, Դաւիթ Յովհաննէս, Հենրիկ Կոյնեան, Արմէն Մար-
տիրոսեան, Օտար Մահակեան, Զուլիկա Գրիգորեան, Արամ Գարուբեան, Սլավիկ Զի-
լոյեան եւ Անտոն Գարսեմեան:

Այս անուններով ներկայացուց բանաստեղծութիւններուն մասին առանկին յղուածնե-
րու մէջ եւ գրական Կանգնութեանը ընթացքին արտայայտուած թեր ու զէ՛մ կարծիքներէն
եւք, Բանաստեղծական գրականութիւնը ամսագրի, ԳԳՐԱՆՍ քննքն, ԳԳՐԱՆՍ երկուստար-
դական Կանգնէք եւ Բանաստեղծական երկուստարգականը՝ Հարցարաններով, Հարցաթերթիկներով
ու յանձնարարականներով բանավէճի նիւթ դարձուցին երկուստարգ, առիթ աւարով Հայաստանի
մէջ իրիտ հազուադէպ գրական երկարատեւ թուարկի մը:

Մենք, ցատք, Բանաստեղծական Հարցաթերթիկը չենք տեսած, ԳԳՐԱՆՍ ամսագրի
Հարցարանին մէջ վերաբերող՝ ԵՄՍՅՆԻՖԻ երկուստարգական գրականութեան մասին ժամ
միայն կը վերաբերէր նոր երկուստարգին, իսկ Բանաստեղծական գրականութիւնը ամսագրին ու
ԳԳՐԱՆՍ քննքնին մէջ, ինչպէս ըսուեցաւ, երկուստարգական բանաստեղծութիւնը մտածուող
հրատարակներով ուղղակի բանավէճի նիւթ դարձաւ:

Բանաստեղծական գրականութիւնը ամսագրի, իր 1960 Յունիսի (թիւ 7) Համարին
մէջ, անսակունք-անազատական անուն սինակին առջեւ եւ ԶԳՎԱՐԱՆԸ Ե ԲՆԱՐԿԻՄԱՆ ԿԱՐԳԱՅ
ՆՈՒՅՄԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ՝ Հրատարակութեան առաւ Ալեքեան Գոստանեանի Երկնագրութեան
տապալակը խորագրեալ վեց էջոց յղուածը, որ երկուստարգական բանաստեղծութեան

Այս ևնուած ընդհանուր ակնարկէ մը հոգ, քննութեան կ'ենթարկէր եօթը բանաստեղծներէ ընտրուած հետեւեւէ եօթը բանաստեղծութիւնները:

- 1.— Յովհաննէս Գրիգորեան.— «Լուսամտի զոգին գրուած»,
- 2.— Գուրբ Գովհաննէս.— «Երէ ուզեմա»,
- 3.— Հենրիկ Էդուարտ.— «Համզոյոյ աստղերը»,
- 4.— Սլայիկ Զիւլեյան.— «Մի մարդ կար»,
- 5.— Արամ Եարութիւնեան.— «Արձազանգ»,
- 6.— Զուլեյան Գրիգորեան.— «Վերածնունդ»,
- 7.— Եւսէր Սահակեան.— «Տարւայ հինգերորդ եղանակը»:

Քննարկուած այս հոտրներուն առիթով, Արարտ Կոստանեան կը յիշեցնէր ա՛յն կուրտեր Ժամբանութեանը, թէ՛

«Ես ընտրեցի. հեղինակների աշակցութեամբ ու համաձայնութեամբ. մէկական բանաստեղծութիւն՝ քննարար մեր ընթերցողներին ներկայացնելու մտադրութեամբ»:

Կոստանեանի յօդուածէն ուղիղ աւթ ամիս հոգ, Վովնական գրականութիւնն ամառ-Քիւրթի մէջ՝ «Բանավէն» խորագրին տակ սկսած յաջորդաբար հրատեւայ գրութիւնները:

- 1.— Գևորգ Հատեան.— «Նորագոյն բանաստեղծութեան ձգտումները» (1970, թիւ 3),
- 2.— Գարոյր Մուսկ.— «Ե՛տուարը իրենից հաւուն լինելն է...» (1970, թիւ 5),
- 3.— Հենրիկ Գալստեան.— «Բանաստեղծութեան ըմբռումը» (1970, թիւ 6),
- 4.— Վաչէ Սաֆարեան.— «Որսնումներն ու վերակառուցման ճիգերը» (1970, թիւ 7),
- 5.— Ալեքանդր Թոփչեան.— «Պոետական նոր սերունդ, Վիճը ու իրականութիւնը» (1970, թիւ 10),
- 6.— Եւսէր Սահակեան.— «Բանաստեղծութիւնը սեր է» (1970, թիւ 10),
- 7.— Եմառն Թորոսեան.— «Եմառն հիմնադրուած ու յստակուած չափանիւնները» (1970, թիւ 12),
- 8.— Հենրիկ Էդուարտ.— «Բանի որսումը» (1971, թիւ 1):

Միջին ու նոր սերունդին պատկանող զննարար ու բանաստեղծ այս իննը զէմբերուն տաք, կրքոտ, բազմակողմանի ու խելացի վերլուծումներուն, անխնայ յարձակումներուն, կարողն պայապանազաններուն, Հասարակական և Հերթական բանաստեղծութեան ընդհանուր թահուարէն հոգ, Վովնական գրականութիւնը զրոշները Հրահրեց յատուկ խորհրդակցութեան մը, ուր վերի ցանկին մէջ յօդուած ստորագրած Արարտ Կոստանեանէն, Վաչէ Սաֆարեանէն, Հենրիկ Էդուարտէն և Ալեքանդր Թոփչեանէն զատ, ամառըն մէկ, երկու եւ երեք էջերը զբաղող մասաւն մը վրայ՝ իրենց կարծիքները յայտնեցին շուրջ 15 կրողներ: Հետեւեւէ կարգով.— Սահակեան Կարապիկեան, Սուրէն Արարտեան, Արշալոյս Սարգիսեան, Վաղդէ Մնացականեան, Միլիս Կապուտիկեան, Սերգէյ Սարգիսեան, Անահիտ Սահակեան, Արմէն Մարտիրոսեան, Լեւոն Մանուկեան, Գէորգ Խմբե, Վահագն Կարենց, Արեւշատ Աւագեան, Ֆելիքս Մելոյան և Էդուարդ Զբարչեան:

Վովնական գրականութիւնն ամառըն մէջ զննարկման կարգով տպուած Արարտ Կոստանեանի յօդուածէն ուղիղ 13 ամիս հոգ, երբ ամառըն էջերուն զոտեւս կը շարունակուէր երիտասարդական բանաստեղծութեան մասին բացուած բանավէնը, «Գրական թերթը», իր կարգին, Հրատարակութեան տալով Սահակեանի Կարապիկեանի «Բանաստեղծութիւնն, առակի հոգատարութիւնն անուր յօդուածը, իր 1970, թիւ 85ին մէջ, կը զրէք»:

Սոյն յօդուածով «Գրական թերթը» յոսակցութեան է սկսում երիտասարդական պոեզիայի արդի վիճակի մասին: Խմբագրութիւնն այս ուժի, որ բանավէնն կը մասնակցէ ո՛ր միայն գրողներն ու գրականագետները, այլև ընթերցողները:

«Գրական թերթը» այս կողմ վեց շաբաթ հոգ, առաջին արձագանգը տուաւ Արմէն Մարտիրոսեան, շաբաթաթերթին թիւ 41ին մէջ ստորագրելով «Առողջ որսնումներն ծանապարհին խորագրով յօդուածը, իսկ յաջորդ թիւով, խմբագրութիւնը, ճիշդ Արարտ Կոստանեանի օրհանգով՝ ամառըն էլ մը յստակացուց երիտասարդներու ստեղծագործութիւններուն, յայտնելով ա՛յն միտքը, թէ՛

«Երիտասարդական պոեզիային նուիրուած բանավէնն անլի կոնկրետ դարձնելու նպատակով, խմբագրութիւնը շարի համարեց. դարձեալ բանավէնի կարգով, ընթերցողներին դասին ներկայացնել երիտասարդ բանաստեղծների այս ստեղծագործութիւնները: Բանաստեղծութիւններն դնարկն են իրենց՝ հեղինակները, և շատ քչ էին պատկերացում են տային այսօրուայ երիտասարդական պոեզիայի միտումների մասին»:

«Գրական քերթախի լինելու էջին վրայ՝ բանաստեղծներն ու ունեց ստեղծագործութիւնները ներկայացուած են հետեւեալ կարգով.—

- 1.— Յովհաննէս Գրիգորեան.— «Հնգհնամայն», «Պատերազմ եւ խաղաղութիւն», (ՅԻԿ),
- 2.— Դաւիթ Յովհաննէս.— «Վերքերգ», «Երեկ սօն էր»,
- 3.— Հենրիկ Էդոյան.— «Քաղաքի ծայրամասում», «Դեպի երկոյն», «Եւ, որ խօսում էր»,
- 4.— Անահիտ Պարսմեան.— «Մեկանաս», «Ստոգորի վրայ»,
- 5.— Արմէն Մարտիրոսեան.— «Էնտում մշուշների միջով»,
- 6.— Արտեմ Յարութիւնեան.— «Քաղաքային սէր», «Մայրամուտ»,
- 7.— Զուլիկա Գրիգորեան.— «Քայլում եմ դեպի», «Յաղթանարկով ստացածութիւնը»:

Ասոց հետ կան նաեւ մէկական բանաստեղծութիւն ստորագրած եւ թէ ժը հուսով ճակով հինգ ուրիշ նորեր՝ — Յովհաննէս Վարդանեան, Համբարձում Յակոբեան, Ռոմիկ Սարգսեան, Ռաֆիկ Մարգարեան եւ Միտոք Հոգեաց:

Այս ամէնէն ետք, «Գրական քերթախի մէջ երեւցած նոյն հարցին վերաբերող երեք գրութիւններ կայ—

- 1.— Յովհաննէս Գրիգորեան.— «Թէ ինչպէս զաննետացաւ բանաստեղծութիւնը» (1970, ԹԻ 45),
- 2.— Մերգէլ Աթաբեկեան.— «Զատրուած զգացումների յարմարում» (1970, ԹԻ 50),
- 3.— Սուրբէլ Յարութիւնեան.— «Քաղաքացիական պարսի գիտակցութեամբ» (1971, ԹԻ 18):

Այս վերջին գրութեան «Գրական քերթախ ընկերացուց նախ ժը, լինելով, որ՝ «Սոյն յօդուածով քերթն աւարտում է նրիտասարկական պնդիային նուիրում բանալիներ»:

Այս է երկու թերթերուն մէջ բանավէճին ներք հայթայթած ու բանավէճին մասնակցած գրողներուն թուարանական հարիւր:

Ինչպէս կը նկատէ ընթերցողը, թէ՛ «Անվտանգ գրականութիւնն առաջերթին եւ թէ «Գրական քերթախի մէջ նրիտասարգական բանաստեղծութեան իրեն ներկայացուցչական դէմքեր նկատուած են Յովհաննէս Գրիգորեան, Դաւիթ Յովհաննէս, Հենրիկ Էդոյան, Արտեմ Յարութիւնեան եւ Զուլիկա Գրիգորեան: Առաջինին մէջ, ասոց կողքին կան Սուրբէլ Ձիւրճեանն ու Յուրի Մանակեանը, իսկ երկրորդին մէջ՝ այս վերջին երկուքին փոխարէն սեղ տրուած է Արմէն Մարտիրոսեանին եւ Անահիտ Պարսմեանին:

Բանավէճը, ուրեմն, թէ՛ մէկ եւ թէ՛ միւս թերթին մէջ կէզրնացաւ այս անուններուն շուրջ, առարկայական հիմք ունենալով այն բանաստեղծութիւնները, զորս զես ընտրեցի եկզրեակների աջակցութեամբ», կամ՝ ընտրել են իրենց՝ նկրմանկները»:

Նկզրոյ առարկայ շուրջ բանաստեղծութիւնները, թիւով շուրջ ժան կտորներ, կու տանք մեր յաշորդ էջերուն, առաւել՝ բանավէճին մասնակցած բանաստեղծներէն շորթին՝ Տուրի Մանակեանի, Արմէն Մարտիրոսեանի, Յովհաննէս Գրիգորեանի եւ Հենրիկ Էդոյանի անուններէն առանձին հատուածներ:

Ուշադրութեան էր կրնար զգրվել այն հանգամանքը, որ Արտիստներ, Լորբայի, Փրեմիերի ու Ինքնի կես մասերի եւ Քաղաքական հակայ գրականութիւն ժը կուտարան ու կարողանա այս ազգը գիտնն, թէ ինչ կ'ընեն ու կը հաւատան իրենց պրոթին»:

Հետաքրքրական է Մանակեանի անտութեան մէջ իրզնի պատկերը, Մարտիրոսեանի իմացական յատկանիշը, Գրիգորեանի զուրկի օրբնակը եւ Էդոյանի պոետական վիճակը:

Յաջորդով պիտի տանք նրիտասարգական բանաստեղծութեան մասին արտայայտուած թեր ու դէմ կարծիքներէն առանձին հատուածներ:



Մնած է 1945ին, Երեւան: Միջնակարգ վարժարանէ շրջանաւորա ըլլալէ անմիջապէս ետ, ընդունուած է Երեւանի պետական համալսարանը, գոր աւարտած է 1965 թուականին: Քաջօճիկ կոչուած է կիրովականի մէջ, նախ իբրեւ ուղւոյն թերթին աշխատակից, եւ ապա՝ իբրեւ գաւաթոս՝ հայկ ֆուգաճի մանկավարժական ինստիտուտի մէջ:

Ի մտայ լոյս պիտի տեսնէ անոր շանտեղծական առային ժողովածուն:

Դ Ա Ի Ի Թ
Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս

Գաւթ Յովհաննէսի ըմբռնից յետոյ ուժեղ ու յաղթանդամ... 3 բանաստեղծութիւնը կորչացի Վրացական թերթում եւ շատ ուրախացայ: Ես այդ ժամին խոսեցի կիրովականում, երեսասուրջ գրողներին նուիրուած խորհրդակցութեան ժամանակ եւ քանի որ իմ կողմէ այդ հատուածը մտցել է անտիպ, աւտի կ'ուզեմայի մէջըրիւ:

Մեզանից յետոյ ուժեղ ու յաղթանդամ ուրիշ տղերք կը գամ Օրինաւոր բնութեանի սիրուն ու անառակ սրբիմեր՝ եւ անտեսային տաճ ու պարտա երեկոններին, Մի համի խնդր ու միամիտ անցորդ փառցմերի անկի՞նքնրում հաւաւամ, Կ'ստե՛ն, թէ դու՛մ օշինջ չկարողացա՛մ, Եկել ե՞մք, մե՞նք պիտի անենք...

Արդո՞ղ բանաստեղծութիւնը լրացնում եւ զարգացնում է այս պատկերը: Նորերը կը գան, ճեղքին կ'ստեն. զուգ չկարողացաք, մենք պիտի անենք, ապա իրենց էլ կը հնանան, կը գան օրիշ նորեր եւ նոյնը կ'ստեն նախկին նորերին, եւ կ'անեն այսպէս առաջ կը գնայ: Եւ նրա առաջընթացի պատկերը կը մնայ նոյնը: Ձենք ապի, թէ այս բանաստեղծութեան ոգին լուստես է: Բայց բանաստեղծն իր լուսանստեղծութիւնը փաթաթում է Հեղինոյ յանտեսութեան մշուշով: Ես սիրում է իր զնարկան Հերոսին եւ միանձնական ծաղրում նրան: Հենց այս նպակն պարտադր ձէլ է բանաստեղծութեան թարմութիւնը:

Կ'ուզենայի ահապահել, որ արա ժէջ է նաեւ բանաստեղծի անհատականութիւնը: Դասիքը բերում է ո՛չ միայն թարմ աշխարհընկալում, այլեւ իր սեփական ձայնը, իր պրելուծները, իրեն է բնորոշ Դասիքին: Թերեւս՝ ուղմանովի լուծելը եւ նուրբ, քաղցրուած հումորը, բանաստեղծական մի խառնուրդ, որին յաճախակի չես հանդիպի: «Գարունն իր այս հումորով ընթերցողներէ աւշադրութեանն է յանձնում Դասիք Յովհաննէսի մի շարք նոր բանաստեղծութիւնները: Ընթերցողը ուշադիր կարդալով, անշուշտ, կը նկատի, որ այստեղ արտայայտուած է նոյն արամադդութիւնը, կենսաբար նոր ուղեբով անսկիւտ եւ նոր սեռով արտայայտուած մղտումը: Ինչոր բանից ինչոր դժգոհութիւն եւ ինչոր լուսարոյն բովոր պրոպագանդա է կարգադրուած երեսասորդ բանաստեղծ Դասիք Յովհաննէսի՝ ինքնաբոյ աշխարհընկալում ժամանակակից պոետիկ շափանիչներով: Բայց բանաստեղծութիւններէ ժէջ ընթերցողը կը տեսնի պոետիկ նորադրոյն սրտումներին քաղաքական մի բանաստեղծի: Այս պարագան շուրջ յայտն է ներշնչում, մանաւանդ, երբ հանդիպում ես առիւթի, որոնց ժէջ կենսաբար հանրամասնութիւնները մեծակերպուած են միակամայն յոսով եւ նորաշունչ սեռով:

Ձի կարծիքի տակ, թէ Յովհաննէսը հետո է հայ պոետիկ տառնական մեկերից: Նա գրում է Սիւսանթի իման ազատ եւ անյանդ (ինչպէս ասում են՝ սպիտակ) բանաստեղծութիւններ: Այս մեծ սպասարբն է նաեւ Զարհնցը: Ազատ եւ անյանդ սողերը հարուստութիւն են առիւտ բանաստեղծութիւնը գործնելու տակի սեղմ, անկաշկանդ եւ բնական: Ձեռյան, որ մեծ բանաստեղծները (օրինակ, Պաշտեղը, Քաւմանեանը) այդպիսի կատարելութեան հասնում են խառնելն շափանդ սողերով եւ հոխ, պրնզուս յանդերով:

Թերեւս ինչպէս Դասիք Յովհաննէսի այս շարքում: Կան: Թէկուց չենք իրենք բանութեան որոշ հակումը: Նրա բանաստեղծութիւններում պոետիկը երբեմն հետնում է զերական նիւթից: Դուցէ զժամ չէր լինի, եթէ Դասիքը մտածէր մի զին սեղմ արտայայտել իր պարտաւանդը: Բայց մենք նրա արժանիքներէ եւ թերութիւններէ մտին մանրամասն կը խառնէ, երբ նա հանգէս կը գայ իր առանձին գրքով: Իսկ այստեղ եւ միայն Կ'ուզենայի տակ, որ Դասիք Յովհաննէսը մեր պոետիկ ժէջ բուլբուլին թարմ անուն է: Թարմութիւն է բուրում նրա բանաստեղծութիւններէ: Նա գային է նոր խոսք տակու ինքնազտուած նկրտումներով, եւ ես նրան ասում եմ. բարբ գայլուտ: Ես Կ'ուզենայի, որ նրա սրտումները պոետիկին աշխարհ յաջգութեամբ, որ նա իր լիբիկական հերոսի հետ միասին շուտով իրաւունք ունենար տակու. զնկանք, եւ այն, ինչ որ գուր չկարգադրուած անէ, մենք արեւը:

ՆԱՅՈՒՐ ԶԱՐԵԱՆ

(«Գարուն» — 1960 — քիւ 6)

ԴԱՒԻՔ ՅՈՎՀԱՆՆԷՍ

★ ★ ★

Եթէ ուզենաս մի օր ինքդ ինք մտնելու, պիտի պայծառ օր գտնես, կարեւոր չէ, թէ օրը կը լինի ձիւնոս, կամ ցեխոս, կամ մառախլապատ-քաց, օրը ինք համար պայծառ պիտի դարձնես, ու լայն քացուած աչքերի, երեխայի լացի, խեղկատակի հրեռանքի եւ հրածեղտի խօսքերի — ամէն ինչի մէջ — վախճան չպիտի առնես — սէ՛ր, ու միութիւն, ու ողորմութիւն, ու սկիզբ ամէն ինչի — քայց մահ ու վախճան երբեք չպիտի տեսնես՝ ու եթէ ուզենաս ինքդ ինք մի օր մտնելու, պիտի անպայամ մի այսօր օր գտնես...

Ու երբ կ'իմանաս, թէ ինչու ես ապրում (իսկ թէ ինչպէ՞ս՝ թող որ ուրիշները դատեն), ապրած օրերդ, — քափփօ՞ծ, քաժանաւմ, զարեջուր ու սէր, — նորից պիտի յիշես, ու արեանդ անցած ճամապարհը պիտի իմանաս, նախնիներդ ներմակած սկզբները մէկ-մէկ պիտի հաշուես, ու դատի նստես աշխարհի հետ, ու աշխարհից հաշիւ պիտի պահանջես, քառաթեան նախագի առակը պիտի չմտածես, ու պիտի փիւնիկ թռչունի լեզենդի կռփին այն դնես, ու պիտի շարունակես ապրիլ, ու արեան գոյները ջակել, ու արեան գոյները իրարից ջակել, — դու պիտի շարունակես ապրիլ — երբ կ'իմանաս, թէ ինչու ես ապրում (իսկ թէ ինչպէ՞ս՝ ուրիշները թող դատեն...): Ու երբ կ'ուզենաս, վերջապէս ինքդ ինք հետ լինել, ինքդ քա մէջ, պիտի մի ամբողջ կեանք արդէն ապրած լինես — հագ չէ՛ ծեր ես թէ ջահել — պիտի մի ամբողջ կեանք արդէն ապրած լինես, ու ապա խօսքեր պիտի փնտռես, քանզի աշգրտից յետոյ ասելիք էլ պիտի ունենաս ու պիտի վրայից գոյշ ու խնամքով թգեմու տերեւը պիտի վերցնես — քանզի նա՛ քառը, ճշմարիտ է ու անողոք, երբ մերկ է, ու քանզի ցաւը նոր կեանք է քերում:

(«Մովեստական գրականութիւն» — 1969, թիւ 7)

Վ Ե Ր Զ Ե Ր Գ

Տխուր օրերի սպանները
դեռ ողորմութիւն են սպասում ինքնից,
օ՛, արեւ,
քայց դու նորից
լուսաւորում ես մեռած բանաստեղծների
յուշարձանները,
դրոնց սպանեցին ամէն օր,
փառահեղ կերպով մի օր քաղելու համար:

Օրեր, որ անուն չունեն —
անա ընդամէնն ինչ նախնիքի դու մեզ,
օ՛ հարուստ, ամենահարուստ արեւ:

digitised by

A.R.A.R.@

Հիմա ես կարող եմ պատմել բոլոր նրանց,
 ովքեր դափում են անհամբեր եւ մամբայ պիտի ելնեն,
 թէ ինչպէս էի ուզում իմ սեփական ձեռքերով
 պոկել քեզանից,
 խել
 այն մի քիչ ողորմութիւնը,
 այն փշրանքները,
 որոնց սպասել չէի համբերում:

Հիմա ես կարող եմ շուրջս հաւաքել
 բոլոր երիտասարդ մամբողդներին,
 որ հեփիաթներից դուրս բռած ասպետների
 վառուղ աչքեր ունեն,
 եւ հեփիաթների ճիւղի կրակ ու բոց ժայթփող ռունգեր,
 ինչպէս Փոլոս կարգին եւ օրինակելի հեփիաթների
 հերոսները —

բայց շքանք, աւա՛ղ, միամիտ են ու դիւրահաւատ,
 ես կարող եմ հիմա շուրջս հաւաքել այդ առոյգ եւ աշխոյժ
 տղերքին,
 եւ ուսանելի պատմութիւններ անել յոգնած մարդկանց մասին,
 որոնց բռւմ էր,
 թէ մութ մանապարհը վերջապէս մի տեղ պիտի աւարտուի,
 որոնց բռւմ էր, եթէ լոյսը բարի է — ուրեմն այդպէս պիտի լինի,
 եւ որոնց անտէր ու անձայն ոսկորները
 սփռուած են այդ լուս մանապարհի երկու կողմերում:

Ես կը պատմեմ ամէն ինչ սպասող մարդու անտարբեր ձայնով,
 իսկ նրանք,
 այդ առողջ ու երիտասարդ տղերքը,
 այդ սփանչելի կերպով յաղթանդամ տղերքը
 կարեկցանքով կը նայեն ինձ,
 եւ լուս իրենց գլուխները կ'օրորեն:
 Իսկ յետոյ,
 իսկ յուշերի այդ տխուր երեկոյցից յետոյ
 ես կը հրեմ իմ մարմինը գիշերուայ մէջ
 ծնունդ օրորուող տխուր երգերիս ընդառաջ:

Երէկ տօն էր, ու բազմութիւնները հոսում էին փողոցներն ի վար,
 լայն ժայտների տակ քափցնելով իրենց դէմքերը,
 եւ յոյս կար նրանց ծիծաղների մէջ:
 Մենք էլ էինք այնտեղ, սիրտ իմ,
 քայլում էինք, ձուլուած միայնակ ու խուլ բազմութիւններին,
 եւ դու (յիշում ես) դողում էիր կամացուկ —
 ասփերիս մէջ:

Օ՛, դու գիտէիր,
 դու գուշակում էիր այսօրուայ անուրախ արթնացումը:

(«Գրական թերթ» — 1970, թիւ 42)

Ծնած է 1945ին, Լեհիսկան: Միջնակարգ վարժարանէն շրջանաւարտ ելած է 1961ին: Յաջորդ տարի, ընդունուած է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտէ: զոր աւարտած է 1970 թուականին եւ պաշտօնի կոչուած է «Երեկոյեան Երեւան» թերթին մէջ:

Գրել սկսած է 13-14 տարեկանին եւ իր բանաստեղծութիւնները տպագրուած են Հայաստանի, ինչպէս նաեւ Լատվիայի, Ռեքրանիոյ եւ այլ երկիրներու թերթերուն մէջ:

Հաւանաբար այս տարի «Հայաստան» հրատարակչութիւնը լոյս ընծայէ բանաստեղծական իր անշքանիկ ժողովածուն:



ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԳՐԻԳՈՐԵԱՆ

Սա իմ փառքն է,
 եւ խայում եմ նրա երկայնեով,
 նա ու սաւայ,
 եւ այսօր շատ եմ գրազուած,
 Մաղիկներ եմ դատաւարում շէմերի պատերին,
 Փիքեաներին ներկում եմ թոյր գոյներով,
 եւ անճրելի կամար լուր եմ հաւաքում...

Այսպէս սկսուեց բանաստեղծի Հեւ իմ Ծանօթութիւնը: Կարգում էի «Գարնանային Քերէ» ներկայացումներն ու յանկարծ յայտնուեցի նրա փողոցում, Քիթեաներին ներկեցի ընդ որ հոյներով ու ափիս մէջ անճրեւաշուք հաւաքելի: Եւ ջանի որ հիմա բանաստեղծի աշխարհում եմ, ինչ-որ շափով տխուր եմ, ինչ-որ շափով ուրախ եւ ինչ-որ շափով կարտաթոյր գոյնով ներկուած, ու շարք խորամանկ, լիտի, եւ, վերջապէս, վառ մարզու լեռ կառարում է զճրտաբառութիւն: Եւ որովհետեւ բանաստեղծի աշխարհում եմ, շարք խորամանկ, լիտի եւ, վերջապէս վառ մարզուն պատճում եմ բանաստեղծութիւն, այսինքն՝ անհնարածան պատմով՝ արցունք եմ քամում նրա երբեք չարցունքառուած աչքերից, ու արցունքի ծնունդ ստեղծ կաթիլը հանդիպում է լարութեանը եւ չի կարողանում կարեւորանել: Ի՞նչ

ժառանգուր, ներժակ նահապարհը: Այո, ներժակ, եւ այդպէս եւ ասում, որովհետեւ յաճախ եմ տեսել, թէ ինչպէս արցունքը փայլատ հեռք է թողնում արտասուողէ այսօր զբայ: Գրտեմ, Ֆիզիկոսները, զիմիկոսները կ'ասեն, որ դա աշի հեռքն է ու աղք սպիտակ է, իսկ ես, աշխարհի բոլոր բանաստեղծներն հետ կ'ասեմ՝ ժառանգութեան հեռք է, զանի որ յայտնի բան է, ժառանգութիւնը նոյնպէս սպիտակ է՝ աւելի սպիտակ, քան սպիտակը:

Ասք, խորամանկ, լիտի եւ վերլուպէս վատ ժառանգութեան հասկանում է, որ շարութիւնն է խնդրում արցունքի լուսն նահապարհը ու շարութիւնը նահապարհից մի կողմ նկատւում, յետոյ գրում է, որ խանդարում է խորամանկութիւնը, լիտիութիւնը եւ վերլուպէս վատութիւնը ու զրանք էլ է մի կողմ նկատւում, եւ այն ժամանակ կատարւում է հրաշք, արցունքն ազատորէն հասում է այսօր զբայից ու կտրւում է ծնոտի ծայրին ու վար է ընկնում:

Գուք, ժառանգի, արդեօք լսե՞լ էք արցունքի անկումը, ինչ հետ պատահել է եւ ես այս անգամ նորից լսեցի նրա ղղերէն: Բայց կործանումներից մտնաւաստան էր սա, անհասկերէն, այսպէս խորամանկութեան նմանութիւնը, աստղերը, մայրակները, կըր պոկւում են խորութից, իսկ վատ ժառանգութեան ղղերէն, լիտիութեան, խորամանկութեանը, ու արցունքն կ'աւելի, արդեօք այս ամէնը: Միայն բանաստեղծները կորուց են այսպէս պատմել լուսն, լիտի ու վատ ժառանգութեան շափել արցունքի անտար ծանրութիւնը, անկման նպատակները: Յետոյ միայն նրանք կ'արող են իրենց կեանքը երկրում թակեցնել մի քաղաք, ուր ամէն աստուտ հրամաններ է արձակում, շարում է գիտութիւններ, համարում է թագուհուն եւ զօրքի հետ գնում է անասուններով, լեաներով եւ չի անդիպում թշնամիների, իսկ երկնային՝ զօրքի հետ եւ վերադառնում, լուսնում, համարում է թագուհուն եւ գնում է քննելու:

Բալլադներ, լիցենզիաների նման են այս բանաստեղծութիւնները եւ այնքան պարզ ու խորակ, քանիցս յիշուող, որ բանաստեղծութիւնից բանաստեղծութիւն ընկած նահապարհը կարծես քաղաքից քաղաք է մղում, եւ անկրկնելի, խորատից քաղաքներ են դրանք, որ շար ժառանգ լուսն կ'աւելի, թագուհուն լեանդիպեց ու մի թշնամու, իսկ գննելուց արդեօք մի արտափելի, սխալ կ'անոր: Նրա գլուխը ջրում էր ու նա ծալապատիկ նստած բազմոցին ասում էր.— ախ, ախ, — ախ, ախ: Գիշերները գննելուց թագուհուն կ'անում էր անից ու գտնում ամբողջ ուսով.— խփել ան, խփել մախ, ամբողջ նահապարհ ասում: Կոտորել սխալներին, նշան բանի ծանրութիւն, պատմել ցատկաւազ երկնաներին, կանայ: Գտնում, սպանում, հրամայում էր գննելուց, բայց ոչ ոք արքա քաղաքում չէր կոտորում սխալներին, նշան չէր բանում ծանրութիւն, չէր սպանում երկնաներին ու կանայ, եւ նա աստուաները բաղկաբանում նստած յուսանաւաստում էր.— ախ, ախ, — ախ, ախ:

Հաս՛ում ես, բանաստեղծ, ես քեզ էլ որքէլ բան չեմ ուզում տակ եւ ոչինչ էլ չեմ տեսել, քանի որ դու գիտես զո ընթերցողներին սեփական աշխարհումը պահել: Հիմա ես զո աշխարհում եմ, շնորհակալ եմ զրա համար, բանաստեղծ:

ԲԱՆԱԿՆԵՆԻ ԱՐԱՄԵԱՆ

(«Գարուն» — 1960, քիւ 8)

ՅՈՒՂ ԻՆՆԷՍ ԳՐԻԳՈՒԵԱՆ

★ ★ ★

Լուսամուտի գոգին դրուած են
 երկու կապոյտ աչքեր,
 դրանք ինձ նուիրել է գնչուհին,
 նա ինձ խարեց
 և խարելով ասաց,
 որ դրանք երջանկութեան թալիսմաններ են:
 Լուսամուտի գոգին դրուած են
 երկու կապոյտ աչքեր,
 ես ամէն գիշեր քնելուց առաջ
 երկար ազօթում եմ,
 նրանց առաջ ծունկի իջած:
 Գնչուհի,
 Մի կոյր աղբիկ կայ աշխարհում,
 նա թափառում է եւ ոչինչ չի տեսնում,
 ասա նրան,
 որ գայ վերցնի այդ աչքերը
 եւ ասա նրան,
 որ նա թափում գայ եւ ոտքերի մատների վրայ,
 որովհետեւ,
 ես . ախր շատ եմ յոգնած,
 պէտք չի,
 պէտք չի
 ինձ արքնացնել:

(«Սովետական գրականութիւն» — 1969, թիւ 7)

Հ Ո Գ Ե Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Դու այս դասողութիւնը կը համարես
 պարզունակ: Թող այդպէս լինի:
 ՎԻՆՍԵՆՏ - ՎԱՆ ԿՈԿ

ամէն անգամ ինչ-որ բան կորցնելիս ես յիշում եմ քեզ
 ամենադժուարը քեզ կորցնելն էր — ես ոչինչ չէի յիշում
 իսկ երբնա նայնիսկ թերթ կարդալիս ես ասպահով եմ
 ոչ ոք չի խցի ինձ մէջքից

այդ երբ էր առաջին անգամ վառեցին գրքերը
 կիսամերկ մարդիկ էին վազում փողոցներով
 գեղաբեր մէջ լողում էին վարդերը
 եւ ոսկեգոծ կառքերն էին սուրում երջանկութիւնից խելագարուած

ամէն անգամ ինչ-որ բան գտնելիս ես կորցնում եմ քեզ
 ամենաանհաշտը քեզ գտնելն էր — ես ոչինչ չէի յիշում
 դժուար է երջանկութիւնը պահել երկու ձեռքերով
 երբ աչքերիդ մէջ արցունքի կաթիլներ կան

digitised by

A.R.A.R.@

իսկ անտառը կամաց-կամաց սափրուում է երկրի երեսից
 կապիկներին մարդ դառնալուց բացի այլ ելք չի մնում
 օ անխելք կենդանիներ, զգո՛ւմ է՛ք ձեր անխոհեմ քայլը
 դուք վեպերի հերոսներ կը դառնա՞ք
 դուք վերարկուներ կը հագնե՞ք
 դուք ինտրիգներ կը սարքե՞ք
 կը սիրահարուե՞ք եւ կը խորտակուե՞ք վերջնականապէս
 եւ նրբում եմ այս երգը անհնազանդութեամբ անգամ
 իսկ վազը գուցէ պատերազմ սկսուի
 կապիկները վառուելով թիթեռների թռթուիթեամբ կը բախանն ծառերից
 եւ կիսամերկ մարդիկ կը վազեն փողոցներով
 դժուար է երջանկութիւնը պահել երկու ձեռքերով
 երբ աչքերիդ մէջ արցունքի կաթիլներ կան

ՊԱՏԵՐԱՉՈՒ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ
(Յ Ի Կ Լ)

զինուորը պատկելի էր մէջքի վրայ ու մեռնում էր
 նա բոլորովին չէր կարողանում համակերպուել այդ մտքի հետ
 յուս ու մուս էր գալիս մէջքի վրայ
 եւ փորձում էր ձեռացնել իբր քնում է
 երբ փայտահատին հարցրեցին այդ մասին
 նա յուսահատ շարժեց ձեռքերը եւ ասաց, որ դա պարզապէս խաբէութիւն է
 եւ ասաց, որ դա իբր գործը չէ բոլորովին
 եւ անլի լաւ կ'անեն զինուորին հարցնեն
 սակայն զինուորը պատկելի էր մէջքի վրայ
 եւ ձեռացնում էր իբր թէ ուր որ է մի լաւ կը քնի
 իսկ այդ ամէնը գալիս էր նրանից
 որ նա բոլորովին չէր կարողանում համակերպուել մեռնելու մտքի հետ
 ուր որ է լուսինը դուրս կը գայ
 սակայն դժուար է ցուրտ դաշտում պատկելի
 եւ սակայն ձանձրանում է զինուորը
 եւ որպէսզի ժամանակը կարճի նա օրոշեց փիլիսոփայել
 — լինել թէ չլինել
 տես թէ բանն ինչու՞մն է
 եւ սիրում եմ փուսպուրը հանդպուրը
 եւ սիրում եմ կիրակի օրերը թերթ կարդալ
 իսկ շաբաթ օրերը հետազոտել ազդիկներին
 ճաւրոյների մասին անլի լաւ է լռեմ
 վիսկի խմում եմ միայն երեկոյեան
 իսկ եիմա անլի լաւ է քնեմ
 եւ զինուորը իսկապէս քնեց
 սակայն երբ փայտահատին հարցրեցին այդ մասին
 նա յուսահատ շարժեց ձեռքերը
 եւ ասաց որ դա պարզապէս խաբէութիւն է
 եւ ասաց որ դա իբր գործը չէ բոլորովին

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ
 (ՀԳրակահ թերթ — 1970, թիւ 42)



Ջ ՈՒ Լ Ի Ե Տ

Գ Ր Ի Գ ՈՐ Ե Ա Ն



Մեծ է 1038 ի՞նչ, Երեւան: Հնդուհուստ ու աւարտած է պարսրուեստի վարժարանը:

1050 ինչ, Կ'ընդունուի Երեւանի գիտական եւ մայրաքաղաքի բանասիրական ֆակուլտէ եւսման գերմանական լեզուներու հաստատութեան ֆրանսերէնի բաժինը:

Ուսումը աւարտելէ ետք, իրրու ֆրանսերէն լեզուի մասնագետ, Կ'աշխատի Արուիանի անուան մանկավարժական ինստիտուտի մէջ:

Կատարած է քարգմանութիւններ ֆրանսական ժամանակակից բանաստեղծներէն, ինչպէս նաեւ ծագումով ծայ ֆրանսերէն գրող Նիկէրէն: Եսեան Եսեանիւրէն եւ Ռուբէն Մեխիլէն:

Եւսուով տպագրութեան պիտի ներկայացնէ վաւէ կատէլի բանաստեղծութիւններու անթոլոգիական ժողովածուն:

Իր ինքնագիր բանաստեղծութիւնները լոյս տեսած են Հայաստանի ժամուրի մէջ:

Զուլիսա Գրիգորեանի «Տեւիլ յայտնութեան» անուն բանաստեղծութիւններու ժողովածուն տրքէն անցած է պետական երաստարկութեան ծրագրին մէջ:

Մամուլում ինչքան հանդիպել եմ Ջուլիսա Գրիգորեանի բանաստեղծութիւններին, սե՛ն ժառանգ ինձ դուր են եկել:

Շարունակ խորագրութիւնը ինձ է տրամադրել նրա բանաստեղծութիւններից մի շարք՝ Հյանձնարարականը գրելու համար:

Ուրախ եմ, որ այդ շարքը գալիս է հաստատելու նախորդ տպագրութիւնը: Ջուլիսա ճշկն է աղի Հայ երեսասարդ բանաստեղծներից, որոնց բանաստեղծութիւնները գաւրնակալն են, այսինքն՝ բերում են թարգմանութիւն, բողբոջի ու ճարձակման շուռլ, նախորդներից տարբեր մի մթնոլորտ:

Ջուլիսա Գրիգորեանը շահեկանորէն տարբերում է շատերից՝ իր զգացմունքայնութեամբ, սեփական աշխարհն ունենալու եւ այդ աշխարհը բանաստեղծելու կարողութեամբ:

Քերեւս, նրա բանաստեղծութիւններում զգացում է ժամանակակից Փրանսիական պոետիայի ազդեցութիւնը: Սակայն, Ջուլիսաը այդ ազդեցութիւնը ստանում է ոչ թէ փոխանցումով, այլ անմիջականորէն կարգաւոր ընթացքը, որի հետեւանքով, ազդեցութիւնը ծնունդ ժառանգութիւնը դառնում է ընտկան ու բացատրելի:

Ջ. Գրիգորեանի բանաստեղծութիւններում կան բաներ, որ անձամբ ինձ հարազատ են. պատկերներ իր ուղեգրականութիւնը, որոշ զգայական լեռանքը: Այնուհանդերձ, ինձ

դուր է գալիս բանաստեղծուհու ժամանակակից ժառանգութիւնը, զգացողութիւններէ ներքին ազատութիւնը, իր գգարուններին՝ միջին վերջ, ողջ նկարչներով ու արհեստի արուեստու եւ այն արտայայտելու ունակութիւնը:

Իմ ստուածային եւ իմ հողեզէն
հագին կայկանդող կապանքներն ամեն
մառ-մառ եմ արել: Եւ ստառնումին
եւ արքեցումին պարզած մարմինս՝
լռումս եմ քեզ հետ անմտածութեան մէջ:

Յիշենք, որ դերազանցապէս արածատիկ, տանջանքի ու բաժանումի հողելիներ
բանաստեղծացնող մեր սիրային քնարերգութիւնը կարելի ունի նաեւ այսպիսի նոր գոյներէ:
Ողջունելով Զ. Գրիգորեանի ժուաջը զէպի հայ քերթողութեան անդամաներ, ցան-
կանում ենք, որ նրա զատուածներն ու արքեցումները զնայով աւելի մի քիչ իջնեն հա-
ղին, զօրանայ նրա բանաստեղծութիւններէ հասարակական հեշտութիւնը: Կարծում եմ, որ
պարզացման այս բնութի կործնիչ-ը ինքնարարար կը թելադրի նաեւ ձեռք ամբողջին՝
եւ ուրեմն, կը համարի մեր պոեզիան նոր ժառանգութեամբ, մի նորասկզբ բանաստեղ-
ծուհով:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻՆՅԱԵԱՆ

(«Գարուն» — 1960, թիւ 10)

ՋՈՒՒԻՏ ԳՐԻԳՈՐԵԱՆ

**

Ֆայում եմ դէպի
խորհրդասարը,
անիմանալիս...

Ներքեւ խոնարհած իմ քաբթիչներին
շիկնամքն է կաթում
դարերով շիկնամք քնկած այս հողին:

Այնտեղ,
ուր ծովն է ձուլում արեւին,
ուր երկու ալիք
ըմբատացումի
միասնութիւնն եմ փնտռում խեմքօրէն:

Իմ աննեղութեան
մի բուռ ներմակը,
բող ձուլուի տապին
էս արեգակի,
եւ իրաւունքի իր յողթանակը
բող սօնի սէրը
աշխարհի վրայ:

**

Տաղթանաբելով
Տարածութիւնը,
Քն ձայնը կլաւ,
Եւ իմ մէջ գտաւ
Իր արձագանգը:

Եւ հիմա գիտեմ,
Քն գորեղ կանչի
Հնչեղութիւնը:

Կարմիր եւ կապոյտ
Երազանքների,
Հոգմապառտեմ է
Շարքս քեւածում...

Եւ հինգ տարեկան
Աղջնակի պէս
Կարմիր գոյներով
Դէպի ինձ բերող
Քն նամապարեմ եմ
Հիմա նկարում:

(«Գրական թերթ» — 1970, թիւ 42)

Վ Ե Ր Ա Ս Ն Ո Ւ Ն Գ

Մարմինս խաչուեց

Լերան կատարին:

Լոյսի մեխերից

Ափերիս հերմակ

Քաղաղը դողաց:

Եւ կակաչների

հրփներանգներով

Ներկուեց շուշանէ

հերմակութիւնս:

(Թէ մեռնեմ հիմա

Զե՛մ աստուայու...)

Զարչարուած մարմնի

մասնատումն ի՛նչ է

Հոգու ծննդեան

յաւերժութեան մօտ:

Իմ ձայնն

Այնուպէս է,

երկնքի խորքում.

Եւ դեռ չընդհատուած

Հարցադրոյցն է իմ շարունակում:

Դիմագծերիս արտանկարն է

Անթուարկելի ժապաւէտներին...

Ես հիմա գիտեմ.

Ոչինչ աշխարհում

Զի կորչում է գուր:

Մենք սաւառնում ենք

Անհունների մէջ,

Որպէսզի կրկին,

տեղատարափով

Ետ դառնանք

հոգի անհունութեանը,

Միշտ հաստատելով,

Որ թէ շատ լոյսն է

Մեզ կարացրեւում,

Թէ շատ խաւարը...

Անըմբռնելի

Ներգաշնակութիւն,

Սուկ աններդաշնակ

կարծուող աշխարհի...

Ծննդեան օրից

Մեր հոգիները

Կանգնած են հերթի,

Անկերջանալի

փոխանցման հերթին:

(«Մովհտական գրականութիւն» — 1969, թիւ 7)

ԱՐՄԵՆ
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Մեծ է 1843ին, կիրովական: 1859ին, № 1
միջնակարգ դպրոցը ատարել է ետք, կ'ընդունուի
Երևանի մանկավարժական ինստիտուտի բանա-
սիրական ֆակուլտետ, որտեղ շրջանաարտ կ'ելլի
1864ին:

Իր քառասուն տարեկան կյանքի ընթացքում
առաջին անգամ է կիրովականի մեջ: Այստեղ
տեղափոխուած է Երևան: Այժմ կ'աշխատի Հա-
յաստանի առաջին արտասահմանի եամար տըր-
ուդ եւրոպայումս ինքնուրույն տնտեսական
մեջ:

Իր բանաստեղծութիւնները տպագրուած են
Հայաստանի մամուլին մեջ:

Արմէն Մարտիրոսեանը ցանկանում է հանապարհ ընկնել ո՛չ աւելի, ո՛չ պակաս զե-
լի... Պատկան: Այդ Պատկան կոչուածը ո՛չ Հիմալայի, ո՛չ էլ Արարատի բարձրաժիւղն ու-
նի: Ի վերջոյ, իմ պատկերացմամբ, ոչ էլ թեք ու գաւազնէն են նրա լանջերը: Բարձրանալու
զմանութիւնն այստեղ ուրիշ է: Լանջերն ուրիշ արդիւններ ունեն. շո՞տ են ուսանեցողը:
Բարձրացողներն իւրաքանչիւրը զնայել է ի՛ր, միմեան ի՛ր հանապարհով, շեղզման կեր-
պով թռչնելով իր հեռուները: Երբեմն, Պատկան բարձրանալու համար պէտք է բնորէլ սեփա-
կան հանապարհ, չի՞նճուել բազում հանապարհներ լարիւրիմքսուով: Իսկ հի՛ն, Աստուած
մի՛ աքաղէ, ուսց զիբ ուրիշի արդէն բացած դա՞թակալի հանապարհին, հեղինակ հերոսի
նման կը բարանա եւ կ'անշարժանա վերելքին շնորհով: Երբեմն, Արմէն Մարտիրոսեանին
պէտք է ցանկանալ սեփական հանապարհ, մա՛նուանգ՝ որ զԿարունք ամառքի կողմէյ ինձ
յովանուած նրա քանտասեղծութիւններէ մէջ կան որո՞ւսեանները:

Արմէն Մարտիրոսեանի քանտասեղծութիւնները սարբեր են իրենց խորքով ու ու-
սաղենով, մափանոյ խառնի մէջ եւ բերում է շմուշուած պատկերներ, շարժարան զոյննր
ու երանգներ, անքանակ երգեր:

Մի երազամէ կար մի ազդեցալ մասին,
Եւ երազամէր ճանապարհ եր ընկել,
Իր մաքրութեամբ ցերեկու առաւօտը:

Ի՞նչ կարծիքով լու ապեր են: Եւ լուսն սյն է, որ զբանց Արմէն Մարտիրոսեանի
ազգերն են՝ իրենք:

Ինձ զուր է զայլն երբաստարգ հեղինակի մէջ ուրիշ առաւելութիւնը: Նրա բանա-
ստեղծութիւնները ունեն խոր ենթատեքստ, կարգացում են ն'ու ազգին, ն'ու առաջատակին:
Նրան պէտք է ուշադիր ընթերցել:

- 1. Մի կտոր լոյս առա ներսնի առաւօտից.
- Մի կտոր օրհնութեան հետ խառը
- 2. Ետ աւելցի դէմքիդ.
- Որ տեսնեմ քա դէմքը

Լուսապակի մէջ,
 Որ տեսնեմ, թէ ինչ կը յուշի լուսապակիը
 Հակառակորի մասին
 Ե՛ւ իմ,
 Ե՛ւ քո,
 Ճանապարհի մասին ե՛ւ իմ, ե՛ւ քո:

*Վերջիննք այլ օրինակ: Մեզ այնքան ծանօթ է Հայաստանի պատկերը: Այնքան է
 երգուած նրա ամէն ծանօտ ու թուփը, զարն ու խոտը, Արարտան ու Արագածը, որ թուով է
 գոյնիւրէ այս զերածութիւն մէջ այլևս տեսչուս է նոր գոյնիւրէ որտեսու՞մք: Դա զգացել է նաև
 Արմէն Մարտիրոսեանը եւ մի կողմ Քոզմէլով գոյնիւրէ, զնայել է ևս որտեսուած ճանա-
 պարհով: Անուամբ:*

Դու մտազարթեայ մի սրբաբոյն,
 Եւ այս վանքիցը,
 Մտազարթեայ փոքրիկ ու խուսկած մի թերթ,
 Որի վրայ եմուծ Յիսուսներ են խաչուել,
 Լիճա՛ իմ ալիքը:

*Անու և՛ ամբողջը: Կործում եմ բանաստեղծութեան վերլուծութեան հարկ լինայ,
 մտնուանք՝ որ ես զբարձր պարտականութիւն չէ, որ պէտք է կատարեմ: Բայց ես կարող
 եմ եւ պարտուր եմ բարի խօսքեր ասել հեղինակին՝ իր Հայաստանը յայտնաբերելու
 սամար:*

*Արմէն Մարտիրոսեանը չի յանդուարում բանաստեղծութիւնը, ժլտա է ուրիշի և
 չէլտի նկատմամբ: Նա զուտնանում է նոյնիսկ, այդպէս կոչուած, զարդապէս բանաստեղ-
 ծութեանը, որը եմքազում է սեյանը, բայց սեփեզ ուրիշ և չէլտուած սուղեր: Պէտք է
 ստանց երկրայելու ասել, որ բանաստեղծութեան արտաքին սարքերի թիթեացումը, առ-
 ղուչարդի կամեա զործածութիւնը չեն սեղազանում բանաստեղծութեան ներքին վրայ:
 Մեր կարծիքով բանաստեղծութիւնը — զա մարդկային հոգու շնչառութիւնն է, թրթիւք, եւ
 նրա արտայայտչական մեկերն ու երանգները, ինչպէս ասում են, անհաստեղծացում են
 բանաստեղծ-անհաստեղծ կողմից:*

*Գարեթի է երկար խօսել Արմէն Մարտիրոսեանի բանաստեղծութիւնների մասին, բայց
 իմ ուղիւմեանը կարծես սպասուած է: Ինչ յատկացուած էլիւրն այլևս սպիտակ չեն: Ի կարգէ,
 ևս չէ, որ պէտք է ներկայացնեմ Արմէն Մարտիրոսեանին, այլ նա ինքը պէտք է ներկայա-
 նայ ընթերցողին՝ իր զատուարին: Առարժ կարող եմ ասել, որ նա ունի ներկայածայլու Ե-
 լուսուր, ունի բանաստեղծելու կարողութիւն, սակիք եւ ասելու իր մեկը:*

*Վերջում կը կամենայի երկու դիտողութիւն ասել հեղինակին: Գրելիքէ մասին, առ-
 յելի շատ ջանքութիւն եւ լոյս: Գրելածուրի մասին. աւելի պարզութիւն եւ յուշականութիւն:
 Բայց աւելի լուս է խօսքը ասնք իրեն:*

... Եւ կը ինքնեմ անցնող իմ օրերին,
 Որոնք գեղունքի տեսնով քափառում
 Եմ շուրջս,
 Որ գուշակեմ,
 Թէ ուր կը տանեմ ինձ ճանապարհները:

*Ինչ մեկ էկէք զուշակութիւններ շահենք: Պատասխանը թողնենք բանաստեղծին եւ
 նրա զալիք երգերին:*

ԱՐՄԵՆ ԱՐՄՏԻՐՈՍԵԱՆ՝

Հեռու մշուշների միջով արթնանում են քառերը
 եւ արթնանալով ցողում են
 մարդկանց տառապանքի վայրկեանները :
 եւ արթնանում են
 տղամարդիկ, կանայք,
 եւ երեխաները արթնանում են :
 «Երբ որ ես մեծանամ, — ասում է երեխան, —
 կը հասկանամ բոլոր իմաստները քառի,
 եւ ինձ հետ կը մեծաման... խաղալիքներս :
 Ասում է երեխան,
 եւ վերցնում է իր խաղալիք ձիւն,
 եւ հեծնելով՝
 երեխան պտտում է
 չհասկացած քառի շուրջ բոլորը :
 «Ես մեծ եմ արդէն, — ասում է տղամարդը, —
 եւ նախախա քառերը գործել են
 տառապանքի գորգեր,
 քայք քան է, եթէ նորից ծնուէի,
 ինձ համար այլ իմաստ կ'ունենար աշխարհը» :
 Ասում է տղամարդը
 եւ վերցնում է իր խաղալիքն ձիւն,
 եւ հեծնելով՝
 տղամարդը պտտում է
 չհասկացած քառի շուրջ բոլորը :
 «Ես մեծ եմ արդէն, — ասում է կինը, —
 եւ աշուն է շուրջս սառը, մեղանխուլիկ,
 եւ քառերի աշուն
 իսկ ես չունեմ իմ տախ հագուստները» :
 եւ կինը վերցնում է
 իր չունեցած բոլոր հագուստները,
 եւ հագնելով՝
 կինը պտտում է
 չհասկացած քառի շուրջ բոլորը :
 Իսկ հեռուում՝
 մշուշների հետ արթնանում են քառերը
 եւ արթնանալով պտտում են
 տղամարդկանց, կանանց
 եւ երեխաների շուրջ բոլորը :

(«Գրական Քերթ» — 1970, թիւ 42)

ԱՐՏԵՄ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԱՐՁԱԳԱՆԻ

■

Պուրակը դրեց իր կնիքը օրուայ վրայ :
 Լեռները հեռուով քերեցին ձեան օտար օտարացումը :
 Գունատ պատերի շուրջն առնի զօւնատ լռյսեր երեւացին :
 Մթնում էր դանդաղ ֆազաֆ Երեւանում :

Ես սերը գգում եմ աչքերի խորքում,
 Միայն փակ աչքերի, ուր կայ հայեացքը հոգու :
 Ուրիշ արձագանգներ են ապրում սեմնակում,
 Ես ընտրում եմ ինձ. Ժամերի յարութիւնը :

Քամին ցնցում է խոնարհի դեզին ցուցափեղկը,
 Պատուհանների շարքը՝ կրակոց գիշերուայ մէջ
 Սենեակների կարմիր խոռոչներով :
 Արձագանգը երկար աղմկում է անօտար ուղեղում :

(«Սովետական գրականութիւն», 1969, թիւ 7)

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍԷՐ

■

Հեռացէ՛ք ուղեկցողներ,
 ձափում է չար կազմից հասունացած գիշերը :
 Իսկ եիմա, բողբոջ, ինձ պէտք է բազմութիւնն այս :
 Օ, բփփր, բեֆուած ուժեղ անձրեւի տակ,
 Որտու աւ կայծակ ֆազաֆի վրայ...
 Գու կզգի ես դառնում,
 Քանզի անցեալը լինի է քեզ :
 Այսօր արագ առաջխաղացումը եղանակների պէտք չէր հաւատալ :
 Գունեքից էր կպել ձայներն ամառուայ,
 Հոգիս փնտրում էր իր կառայքը Յորից,
 Ու մթնոլորտի երբեք վերստէ կիմ
 (Դեմքդ մայրամուտով կը լուսնաս յետայ)

Բայց ամէն օր շօզն արեւի
 հաշուում է տուփերի վրայ :
 Ու շէնքի միհարած դռները
 Նորից քա հետ են կիսում անցեալս ,
 Չնայած վերադարձը սիրոյ առանց քեզ անուն է միայն...
 Ասող , որ ստուշում է ուզածդ եղանակի շուրքերի վրայ...
 Բա վերադարձը սենեակներին հաշտեցնում է թաղամասի հետ ,
 Հետքերդ փոսփորանում են գիշերուայ ջրերում ,
 Մահը դառնում է երկրորդական բան՝
 Աճրացող բիրեղ ցաւի ազահանում...
 Ու կեանքը նորից ձգձգուել է սկսում
 Ու գիշերները իրար դիպչելով
 Մի մեծ ժամեակ են դառնում քո վրայ...

ՄԱՅՐԱՄՈՒՏ



Ճեմք շէնքի յետեից լքում են օրը...
 Հասարար , ուղիղ մասները փոզացի՝
 Ծառերի յոգնած բայց հաւատարիմ սազարթների մէջ ,
 Յանկարծ շոյուելով տախտակի քամուց , դանդաղ
 Գրափիկայի նիհար գծերի մէջ են քաղաքը առնում :

Ու յետոյ երեկոն երկար դիտում է բոլոր անցումները
 Գծերի , մարդկանց խօսքերի գոյնի վստահութիւնն ու կուտակումները :
 Ու յանկարծ եւ գգում եմ գիշերուայ խորութիւնը :
 Նրա հայեացքը , որ նախ քան քեզ հասնելը անցեալի է ուզում ,
 Նրա նաշակը , որ թայլ է տալիս առաւօտ լինի ,
 Որ այդ ամէնի պարզեցումները մի անգամ էլ իրիկեամուտին
 Լուս տեղադրուեն լոյսի գծերում , նուրբ հանգոյցներում հոգու...
 (« Գրական թերթ » , 1970 , թիւ 42)

Ծնած է 1881-ին, Վրաստան: Հետևած է բնագիտություն: Իր բանաստեղծությունները լոյս տեսած են Հայաստանի մամուլին մեղ:



Ա Ր Տ Ա Կ

Ո Ս Կ Ա Ն Ե Ա Ն

Կ'ա մի նոր անուն՝ Արտակ Ոսկանեան...
Կրթութեամբ ու ժամագիտութեամբ նա Փիլիպին է, իսկ հակումով ու կոչումով բանաստեղծ:

Արտակ Ոսկանեանը լուրջ երիտասարդ է, բարի մարդ, ամբարտաւան չէ, ոչ էլ նեղնորս, ուստի եւ ուղում եմ շնորհակալ, որ նա գրականութեամբ գրադուրու է ոչ թէ իմ (եւ այլոց) ջղերը փայտախլու, այլ հանգստացնելու համար, թերեւ նաեւ բուժելու:

Նա, ինչպէս իր համարեա՛ թուր սերնդակիցները, կրում է սպիտակ ստանաւորով՝ անշահութեանը միացնելով նաեւ շափաղկութիւնը: Ձեռ ուղում շտապել: Թերեւ նա լուրում զգայ, որ շափաղկութիւնը իրեն անիլի խնկարում է, քան սղնու՛մ: Բայց կայ մի սեղ, որ իսկապէս հարկաւոր է շտապել: Նրա որոշ ստանաւորները բանաստեղծութիւն չեն դառնում լոկ այն պատճառով, որ չեն շարունակւում, այսինքն՝ լինելով մարմնասէր, չեն ամբողջանում՝ մարմին կոչուելու եւ ինքնուրոյնաբար սպրելու համար:

Բայց որանք դիտողութիւններ են, որոնց վերացման համար պէտք է ժամանակ՝ մինչեւ որ հասնի ինքնանաշողութեան մշտապապալ պահը եւ շրջանայեցութեան ուշահաս շրջանը: Կարելորն այն է, ինչ ունի երիտասարդ բանաստեղծը, իսկ նա ունի բանաստեղծի աջ եւ նծարդային համակարգ: Եթէ նա, ընթանալով թոյլ դիմադրութեան ճանապարհով, իրեն իրականք է առնի լեռները քնորոշելու գրասէր, սրացիկը երկանակաւով, որ ոչինչ չի արժանանում:

սում, որովհետև ասուած է միխտաբար անգամ, ապա տեղն ու տեղն էլ նկատուծ է լեռներն ի վար ձգուող զծայծուած, երկտակուած ստուերի զիկզակըն: Այդ նոյն ստուերները յնի այլ տեղած քայլուծ են մեզ հետ զսունկերի նման աղեղնաւորուածն, ու եթէ չքանուծ են գիտցոցների մէջտեղուծն (այսինքն՝ լոյսեւի ուղղահայտացութեան սակ), ապա դա ոչ թէ սահակոսն շքացուծ է, այլ զաւելի շուտ՝ մեր ոտքերի տակից մեր դուռներին վրայն բարձրացուծ: Եւ միայն այսպէ՛ս զգացող մարդը կարող է տակ, թէ զմենք մեր ստուերներին Եանրութիւնից յողնած, որուայ մաներոյթը որպէ՛ս փոշի մեր կողերին տառի՝ մեզ հետ քարէ սուրիք լուսարացով լցուած մի լուսազարդ գիշեր, ու գիշերի մէջ, գիշերի հետ քննիկը կողք-կողքի՝ երազելով արեւի մասինն:

Քանիտուեկային է աշխարհն ինձ համար, — խոտովածուծ է Արտակ Ոսկաններ: Եւ զովիքն էլ դա է: Ով չի գգուծ աշխարհի հանելուկայնութիւնը, նա կորող է զբաղուել ամէն ինչով, բայց ո՛չ արուեստով: Եւ լուս է կրկնակի, որ նորեկ բանաստեղծը չի ձգուծ այդ հանելուկայնութիւնից շինել զտակուտի արժատ, այլ շունուծ է արուեստի միջոցներով լուսի այդ փոստիւտի արժատը: Գրաւ համար, ամէն բանից առաջ, հարկաւոր է ունենալ պատկերաւոր մտածողութիւն, որ ունի Ոսկանները: Եւ արտանց բարի զարուստ եմ մաղթուծ Արտակին, որ իր մասին մի տեղ ասուծ է: Չնստել եմ զեռափին, ոչ թէ ջրի, այլ ժամանակի հետ ժամանակաւոր ու բարեկամավորի կատակ եմ անուծ: Յանդիմանելու հարկ չկայ: Քաղապէ՛ս եկէք հաւատանք, որ ժամանակի հետ այդ ժամանակաւոր կատակը պիտի վերածուի անժամկէտ մտերմութեան, ինչպէ՛ս որ յոնախ սիրախոյն է վերջանուծ ստեղծուիկն եւ անանց սիրով:

ՊԱՍՏԻ ՍԵՒՆԻ

(«Եօփետակամ գրականութիւն» — 1966, քիւ 4)

ԱՐՏԱԿ ՈՍԿԱՆՆԵՐ

**

Ամազուի երկայրկանի եկեղեցի՝
 Ամազուի ձորերի մէջ:
 Մարմարակերտ, մարմարատիպ.
 Արեգակով շարուած պատեր,
 Հեռու մի քիչ արեգակից,
 Արեգակին մի քիչ մօտիկ:
 Յառնող հաննար ամէն քարից,
 Մեռնող հաննար ամէն քարի:
 Հրաշագործ, երէշագործ
 Հետքեր, հետքեր ամենաքեզ:
 Փլուած որմեր՝ պատուած զճուճ եղիցներով
 Ու եղէգներ այս ու այն կողմ
 Կանա՛չ, կանա՛չ...
 Այս բոլորը՝
 Արձանացած Աստուծամօր աչքի առաջ:

(«Գարուն» — 1967, թիւ 2)

Ե Ո Ւ Ր Ի
Ս Ա Ն Ա Կ Ե Ա Ն



Եւրի Սահակեանը ձեր այսօրուայ երիտասարդական պոեզիայի վաւերական անուններից մէկն է:

Գոեպա է եկել Ձարեանի դիրքը ուսուցարկի մէջ: Լաւ դիտողականութիւն ունի, պատկերաւոր ճանաչողութիւն. երբեմն կարողանում է աւարտուած գործեր ստեղծել:

Նրա նախորդ գործերից իմ յիշողութեան մէջ մնացել են լաւ տողեր, բայց նաեւ բազում, յաճախ իրարամերձ ազդեցութիւններ, որոնք խանգարում էին ընկալիլ նրա բանաստեղծական անը: Լաւ տողերն ու գիպուկ պատկերները շատացել են. ձեւի խախտումներն ու շտապառուութիւնը՝ նուազել: Բիրենդանում է Հետաքրքրութիւնների լրջանակը, սեփական խառնուածքի դիտակցութիւնը:

Գերազանցապէս լերիկ բանաստեղծ է Սահակեանը, գարբ շունչն ու ոգին զգացող:

Տպաւորիչ է լուկայի նրա նկարագրութիւնը՝

...Տաղտուկը՝ վաճառանդանների

Եւ կշիռօճի տատանումները անկողնաճորջ...

Լաւ է՝

Եւ սպասում եմ՝

զգայով կնճախ գայացումը

Վատներից կարտով ճակատիս...

Գան Հետաքրքիր սխալներ, այն սխալներից, որոնք ներշնչումից են ծնւում եւ լեւտում տղի յուզականութիւնը՝

Գճացները... դատարկ են ինքանով:

Կան նաև... պարզապէս սխալներ, ծնուած ողբերգական պահանջ, տողի ու բանաստեղծութեան անձեւ եւ ոչ լարուած լինելուց (եւ շատ...): Իր առաջին բանաստեղծութիւններից մէկում Եւրի Սահակեանը գրել է.

Հարցականի պէս վառուել է Յամբան:

Նրա վերջին տարիների ստեղծած մի քանի լաւ բանաստեղծութիւնները, այդ թւում յաւել «Լէշխարհը, որ մեծ է», «Ես յեռների ետ», «Ես Ես եմ», «Նամակ չկայ», «Ես մարդ եմ եւ այն, զկայում եմ, որ Նրա բանաստեղծական ճամբան աւելի որոշակի է դառնում եւ հարցականները պակասում են, բացի, ի հարկէ, այն մեծ հարցականից, որը կախուս է իրենց դարում եռյիսի ամէնից վաւերական համարուող բանաստեղծների վրայ: ուսմանը, ինչպէս հանճարեղ Պարենցն է ստել:

Գարը մեզ մտրեակ է տայիս,
 Բայց այդ փակ մտրեակի հասուցումը
 Անրուզներն են ճշգում տպագայ...

Իս ի սրտէ բարի պալուստ եմ մտղթում երկուսուսուղ իմ ընկերոն իր փեսան գրմ-
 աղին եւ հարցականներով հարուստ հանապարհին:

«Սովետական գրականութիւն», 1966, թիւ 6)

ԿէՍԳ ԷՌԵ

ԵՌԻՐԻ ՍԱՀԱԿԵԱՆ

ՏԱՐՈՒԱՅ ՀԻՆԳԵՐՈՐԿ ԵՂԱՆԱԿ

Երբ փոքր էիմ
 Ամէն ինչ միշտ էր.
 Գարուն էր,
 Ամառ,
 Աշուն
 Ու ձմեռ:

Երբ մենք մեծացանք
 Կեանքը չփոխուեց:
 Այդ մենք փոխուեցինք
 Եւ այդ ամէնին
 Ինչ մենք գիտեինք
 Աւելացաւ սէր.
 Գարուն էր ու սէր
 Ամառ էր ու սէր
 Աշուն էր ու սէր
 Ձմեռ էր ու սէր:

Եւ քանի սէր կար
 Երգածիկ էիմք:
 Եւ քանի սէր կար
 Տառապում էիմք:
 Արտասուում էիմք
 Ու տարակուսում...

Մեր ժամանակը
 Զբերկարացաւ:
 Ոչինչ չփոխուեց:

Միայն մեր կեանքի
 Զարս եղանակից
 Բաժին հանեցինք
 Այդ եինգերարդին:
 Եւ եինգերարդը
 Գարնաւ մեր կեանքի
 Այն եինգեականը,
 Որով հաստատում
 Ու հերժում էին
 Տարուայ միւս չորս եղանակները:

Եթէ գարուն է
 Առկայ է սէրդ,
 Ապրիլ գարունդ:
 Եթէ ամառ է
 Առկայ է սէրդ,
 Ապրիլ ամառդ:

Եթէ աշուն է
 Առկայ է սէրդ,
 Ապրիլ աշունդ:

Եթէ ձմեռ է,
 Զիւն ու ձմեռ է,
 Եթէ սէր չկայ,
 Զի արդարացում անգամ
 մեռնելդ:

«Սովետական գրականութիւն» — 1969, թիւ 7)



Ծնած է 1940թ.Ն, Երևան: 1957թ.Ն տարած է միջնակարգ վարժարանը եւ սպա ընդունուած է պետական համալսարանի բանակրական ֆակուլտէ: 1967թ.Ն, իրբեւ բձկնածու կ'ընդունուի Մոսկուայի Մաքսիմ Կորբիի անուան համալսարանային գրականութեան ինստիտուտ, ուրկէ շրջանաւարտ ըլլալէ ետք՝ կ'աշխատի Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտէ, իրբեւ կրտսեր գիտաշխատող:

Իր բանաստեղծութիւնները տպագրուած են Հայաստանի թերթերուն մէջ:

Հ Ե Ն Ր Ի Կ

Է Դ Ո Յ Ե Ա Ն

**

Հանդշու պատգիբը արբնացող աշէեր են,
Պատուեանի վրայ կախուած վարագըշըբը
Իր մէջ Ակարիլ է նոր ծագող արեւի ռսկէ նարինըբ:

Ես քալում եմ դէպի բացուող օրը
Եւ իմ մէջ տանում եմ
Քո երագների վերջին քարմուրիւնը:
Ես այն կը պահպանեմ իմ ձեռքերով նդկած երգերի մէջ
Եւ որպէս հագուագիւտ մի իր
Ես կը վերադարձնեմ քեզ,
Իմ սէր:
Դու ոչինչ չես կորցնի արեւի ռսկէ նարնցի մէջ:

(«Առկեաական գրականութիւն» — 1969, թիւ 7)

**

Քաղաքի ծայրամասում ողջ գիշեր շքում էր երկնքի պատուիրակը,
Խուարում քաղառող շները տեսիլ էին նրան
Եւ հաւատացիլ, որ նա իսկապէս երկնքից է իջել,
Նրանք հետեւում էին երկնքի պատուիրակին
որը ձեռքի մէջ տանում էր մի սննեակ:

Պատահանները փակ էին,
 քան էին բաշտած վարագոյրները,
 ներսում,
 յիւմներն վրայ դրուած աչքերը արդէն բնել էին:

Քաղաքի ծայրամասում
 եզէ տների մտով շրջում էր մտամալար
 երկնքի պատուիրակը
 ձեռքի մէջ պահած մի սենեակ:

Օրորացի մէջ մի երեխայ լացեց,
 մայրը արթնացաւ
 հայրը հայեռեց:

Երկնքի պատուիրակի ձեռքի մէջ
 փշրուեց սենեակը,
 որ նա չկարողացաւ տեղաւորել
 քաղաքի ծայրամասում:

Փշրուած սենեակի աւերակների վրայ
 նա գրեց իր անունը
 և բարձրացաւ երկինք:

Քաղաքական շները հետեւեցին նրան
 և բարձրացան երկինք:

Քաղաքի ծայրամասում
 ամէն ինչ առաջուայ նման
 գիշեր էր,
 խաւար:

**

Դեպի երեկոյ շարժուող օրը
 քեզ իր հետ է տանում,

օ, հանազարհարդ,
 երուսազէմի հանապարհը փակ է,
 կանգնիր այս ծառի տակ

և քոզ քայլերիդ կոր յետագիծը
 իր շաւղով գնա:

Այս տերեւները քոչուներ են,
 նայում են քաց աչքերով օդի մէջ,
 հօնում են ճիւղերի հետ և բամբակ չեն լսում,
 և երէ ձեռք տաս Արանցից մէկն ու մէկին
 նա չի բողբոջի, այլ միայն կը նայի իր փակ հայեացքով
 նման՝ լնի մէջ սուգուող հաւակի:

(Քամին ցոյց է տալիս իսկական պատկերը,
 ծառն իր տեղում է,
 մեծ գնում ենք նրա ճիւղերի միջով):

(«Գրական թերթ» — 1970, թիւ 42)

ԱՆԱՀԻՏ ՊԱՐԱՄԵԱՆ



Անահիտ Պարամեանը մեր բանաստեղծական նրբաստարգ սերնդի շնորհալի ներկայացուցիչներից է: Եր սերնդակիցներից շատերի նման նա էլ իրեն ազատ է համարում բանաստեղծութան շափի, յանգի, մեծի կուզանդամներից, սակայն ի տարբերությունների, մկտում է իր բանաստեղծություններին հազարդէլ զգացմունքի լիութիւն ու հոգեբանական նուրբ երանցներ... Եւ գրանց շնորհի է, որ յափուսոյք արտաքին նշաններից զերծ նրա ստեղծագործությունները մտում են բանաստեղծութիւն: Թեյ-որ ազատ, սեփականց, անկեղծ շունչ կայ Անահիտի բանաստեղծություններում եւ դա փութուկով հոգեբանական հաստատութեան, դատում է երկաստարգ բանաստեղծուհու ինքնատիրոջութեան անհարժուշտ գիծը: Նաև հանցարթութիւն կայ նրա բանաստեղծություններում, ջերմ, մարդկային հոգի:

Եւ եթէ այդ ամէնին ունայններ նրա արտայայտական մեծերի թարմութիւնը, դիտողականութեան նրբութիւնը, կարող էր սակ, որ մեր պոեզիայի մէջ է մտնում մի բանաստեղծուհի, որ իր էութեան խորացման ու հարստացման ճանապարհով կարող է հասնասուէ իր անհասականութիւնը:

ՀԱՆԱԳՆ ԳԱԽԹԻՆԸ

(«Հայրենիքի» ժայռն — 1971. թիւ 4)



Մնկախա
Կանաչ խոտի մէջ
Երբ տղան
Նրան համբուրեց,
Ազգիկը
Յանկարծ մտածեց
Որ իմէր
Նման է խոտի:
Եւ երբ
Մտակայ թփուտից
Թռչումը
Հչալով
Թռու,
Ազգիկը
Տխրու թեամբ

Յիշեց,
Որ իրենք
Էլ չեն համդիպի:
Երբ տղան Յրան
Գրկած
Համբուրեց
Նորից ու Առից
Ազգիկը
Այ՛քերը փակեց
Եւ կարծէր
Դողաց կարտից:
Ու տղան
Կգում էր Յրան
Ու տղան
Նման էր Փալթի,

Որ ճերմակ
Մազկի պէս
Բացում
Լաց եղաւ
Ազգիկը
Յաւից:
Երբ յետոյ
Դաշտից
Դուրս գալով
Ասփալտի կողմը
Քայլեցին,
Ազգիկը
Նորից մտածեց
Որ իմէր
Նման է խոտի:



Աստղերի վրայ
Յայսը մտան է ծաղկող յամսիկի:
Աստղերի վրայ
Հնամարտութիւնը գեղեցիկ է, մերկ:
Աստղերի վրայ
Փշերը հեզ են:
Աստղերի վրայ

Լայսը աղանու շորեր է հագնում:
Այսպիսի մի օր,
Կամ ուրիշ մի օր,
Կամ երբեւիցէ,
Ես պիտի գրկեմ մարմինս յոգնած
Ու տանեմ այնտեղ:

ՍԼԱՎԻԿ
ԶԻԼՈՅԵԱՆ

Ծնած է 1946ին, Լեւինակոմ: Աւարտած է
տեղւոյն միջնակարգ դպրոցը, այնուհետեւ ըն-
դումնուած եւ աւարտած է Երեւանի Պետական
Համալսարանի բնագիտական ֆակուլտետ:
Քարգամուտքիւնները կատարած է Փրակտիկէ:
Փարգամած է «Թուրանի երգը», Պոքիս Վիսնի,
Պրանտեմսի եւ Վիէթնամ Հիւկոյի գործերէն:
Իր բանաստեղծութիւնները հրատարակ-
ւած են Հայաստանի մամուլին մէջ:

* * *

Մի մարդ կար
մի իսկական մարդ
մի շխու մարդ
մի մարդ, որը երեխայ չէր եղել
մի մարդ, որը ՏՈՄՈ տարեկան էր
մի մարդ, որն ապրել էր հին Սգիպտոսում
եզիպտացիները քողեցին խաղաղ երկրագործութիւն
անհամզիստ սկսեցին ապրել
բայց չգիտես ինչու
երբ այս մարդն այնքան խաղաղ էր
շփոթուած եզիպտացիները
մեծ-մեծ քարեր հաւաքեցին անապատներից
քերեցին, որ այդ մարդուն իրենով վախեցնեն
ու կատուցեցին սփիմֆս
այս մարդը
այս մի մարդը
եկաւ ու հին Տիմաստան գնաց
վախեցած շիմացիները
սկսեցին արագօրէն քաղամալ
իրենց բուր գործերը քողեցին
ու Արամ քանդակեցին
որը դուրս եկաւ մի մեծ, հսկայ պարիսպ:
Նստեց, նստեց այս մարդը
չահեկացաւ
մերկացաւ
ու եկաւ հին Յուդաստան գնաց
չքայները տեսան Արամ
ու իրենց քաղաք արձանների շարքերը հանեցին:
Այդ մարդը, այս հին երկրներից եկաւ
Ու գնաց
Ու մնացին պարապ այդ երկրների մարդիկ
այդ մարդուն ուզեցին հայելի դարձնել
բայց հայելի ունեցան
իսկ այդ մարդը մնաց
հիմա նստած է այդ մարդը
եւ աւէն մէկը Արամով է ճանաչուում:

(«Արվեստական գրականութիւն» — 1969, թիւ 7)

Առողջ Որոնումների Ճանապարհին

Կրկան իրաքանչիւր նոր սրակ, իւրաքանչիւր տեղաւարժ, միաժամանակ, հանդիմանաբար է իր տեսութեամբ, մեծ բերում իր գոյութեան իրաւունքը, հիմնաւորում ժամանակի մէջ կամ ժրաւում հենց իր՝ ժամանակի մեղքով, Այս տեսակէտից էլ ժամանակակից երիտասարդական պոզիտիւ շնորհիւրը, միաժամանակ, գրական նոր սերնդի հաստատան, նոր մասնադուրեւում ու որակի տեսակետ հանդիմանաբար մարտնչան է, որ օրինակ է ու հասկանալի:

Նոր սերունդը իր հետ բերում է նոր մասնադուրեւում, փոխում է աշխարհին նախը հայեցակէտը, վերանայում է ճանցելի ասանդները՝ կոչուող հասկացութիւնը, ժամանակակից կեանքի զարգացման աստիճանը, գիտութեան ու տեխնիկայի յեղաշրջող յայտնագործութիւնները, ընթացողի բացմանը մանր զարգացումները, քնականարար պետի ազդեցիկ ու սպրտն են զբաղանդութեան զարգացման ընթացքի վրայ: Ժամանակակից մարդը այնպէս չի նայում, ասեմք, Լուսինն որպէս անհասանելի, միջակամ մի լուսաստառի: Լուսնի սեւաստեղծութեան լիզնեղ վաղուց արդէն հնացել է՝ իր տեղը գիշերով գիտական ճշգրիտ պատկերացումներին: Եւ եթէ նոյնիսկ մնացել է լիզնեղը, ապա փոխուել է լիզնեղի նկատմամբ ժամանակակից մարդու հաստի աստիճանը: Ուրեմն՝ մեր օրերի երիտասարդական պոզիտիւ շնորհիւրը, միաժամանակ, նաեւ ժամանակակից մարդու հոգեկան, մտաւոր ունակութիւնների ու ստացած ինֆորմացիայի շնորհիւրն է:

Այո՛, ժամանակակից երիտասարդական պոզիտիւ շնորհիւրը է ճանապարհի ուղից ազատուելու փորձը, բայց եւ հզորուել է անցեալի ասանդները կոչուող հասկացութիւնը: Ինչպէս, երիտասարդ բանաստեղծների մասնադուրեւում մէջ կամաց-կամաց ճանապարհի ուղի ունեցող շատ ճշմարտութիւններ արդէն նկատու են, շատ ճշմարտութիւններ էլ շուրջ բերում մտացութեան մէջից, մեծ բերում նո՛ր իմաստ, նո՛ր խորութիւն ու հեղեղութիւն: Երիտասարդ գրողները որոշակիորէն սովորում են եւ սովորելու են իրենց մեն նախորդներին, ասեմք, նարեկացուց, Գանձիկ, Քուստանեղեց, Պուշկինից, Վարուժանից, Լորկայից, Գորնից եւ շատ ուրիշներից: Երանք միայն էլ եղել են ու կը մնան երիտասարդ սերնդի լուսուղի ներկայացուցիչների մեն ուսուցիչները: Գերմանացի մի փիլիսոփայ մի ատիժով գրել է, որ ուսուցիչ մեծութիւնն այն է, որ իր աշակերտին կարողանում է կանգնեցնել ընդդէմ իրեն: Այս իմաստով էլ՝ եթէ որոշ երիտասարդ գրողներ փորձում են զգէմ կանգնել իրենց ուսուցիչներին, ապա զա զայնքն է կրկնակի անգամ ապացուցելու միայն ու միայն ուսուցիչներին մեծութիւնը:

Կարեւորն ասելիքն է, բանաստեղծի՝ կեանքի երեւոյթներն արտացոլելու սեփական մասնադուրեւում ու հաշիւը, մարդկային ներքին բարդ հոգեբանութեանը մասնադուրեւում մշտնադարձ: Ուրեմն՝ տաղալագական որոշ մեծերի ճշմարտանք, բառերը որպէս խորհրդանշաններ օգտագործելու հարցում, երիտասարդ բանաստեղծները նոյնիսկ ասանդապաշտ են: Փոխուել են միայն ժամանակը, ժամանակակից մարդը, տառապանքը այլ երանգ է ստացել, խնդրութիւնը՝ այլ, յաշուութիւնը՝ մի ուրիշ, սպրիլը՝ բոլորովին օւրիշ: Եւ այս երանգներէ ասոր բերութիւնն է անոս, որ ժամանակակից որոշ շնորհաւորներ, ընթացիկով, երիտասարդ լուսաստեղծներին սնուանում են ճանապարհայն, կորում նրանց մայր հոգից, տեղափոխում Եւրոպա, եւայլն:

Որքան ինտելիկտուալ է մարդը, քնականարար այնքան խոր նստուածք է տալիս նրա ուղիղում վերլուծական-համադրական ուղին, այնքան խոր նրբերանդ են ստանում բառերը: Պոզիտիւ աստիճանաբար մեծք է բերում ասելի շատ իմացական յատկանիւ: Այդպիսի պոզիտիւ, սակայն չէ բացառում զգացմունքի գոյութիւնը: Այդ պոզիտիւ ասանդի ուղիղում ընդդէմ լուսակները զարգացնելու խոստումն է, համակենտրոնացումը՝ մտքի անմիջական հսկողութեան տակ:

(Երակամ քերթ, 1970, թիւ 41)

ԱՐԱՆ ԿԱՐՏԻՆՅԱՆ

digitised by

A.R.A.R.®

ՔԷ Ինչպէս «Անկետայա» Բանաստեղծութիւնը

Պատկերացնե՞՞մ էք, թէ ի՞նչ կը լինէր Հայ ժողովրդի ժաղերթի վիճակը, եթէ մենք միւս ազգերից փոքր շատնէինք ջուրհանը: Եւ երբ այժմ ջուրհանը կատարում է կոմիտասեան զնունկը, մենք ասում ենք՝ չկայ աւելի ազգային բան, քան աս: Եւ բոլորովին չենք լիւում, որ ջուրհանը Հայկական, ուրիշն նաեւ ազգային գործիչ չէ:

Ոչ ոք չի կարող պնդել, որ Հայերն են գրել առաջին բանաստեղծութիւնը: Ուրիշն սխալ կը լինէր նաեւ պնդել, որ բանաստեղծութիւնը գրելը ազգային երեսօթ է: «Կերպի» էլ ենք ուրիշը, ճի՛շտ ենք առել:

Նոր սերնդին շատ են նախատում աւանդներից Հեռանալու համար: Ինչ է հասկումում այս սերունդը աւանդական առեւտրով. այն ամէն լաւը (միայն լաւը), ինչ ստեղծել են մեր նախնիները: Բնութեամբ աստուծոյ լուրջ տեսք կ'ընդունէր, եթէ քննարկման նիւթ դառնար այն Հարցը, թէ նրանք ինչպէս են շարունակում աւանդները, այսինքն՝ մեր նախնիների ստեղծածի մէջ ինչն են համարում գիտնալիս: Նկատի պէտք է ունենալ, որ գիտնալիս նրանք երբում են մեր ժամանակաշրջանի պահանջներից, զարգացածութեան ժակարգանից, գիտիչների սահմաններից, աշխարհահայացից. այդ ամէնը նրանց ժամ դարձել է զառազգային կանոն, համոզմունք: Դա նրանց պնդում է Սրբազարը տարբերել միացած գործերից:

Ախր կը լինէր մտածել, թէ յանգերով գրելը աւանդական է:
 Ախր կը լինէր մտածել, թէ առուակները անպայման պէտք է կորկանն: Նրանք կարող են նաեւ լաւ գնալ: Կարող են ցամաքել:
 Ախր կը լինէր մտածել, թէ սոխակներն անպայման պէտք է դալլալին, ճրդեն վարդերի եւ սիրոյ թիւաներով: Նրանց երգերն ու երազները կարող են եւ քաղցածու թոյթ ունենալ:

Դիմենք անցեալի պնդմանը: Ուրիշն, այսպէս, Հեռւմ մահացածներին սպալու համար վարձում էին եղբրամայրեր: Երանք իրենց ոչ ու կականը գունազարդում էին ամենալիցի քառերով, ամենալիցի համեմունքներով, անհնայ ազատարարում էին անկանները Հեղեղը, ծննդում էին կրծքները, եւ այն: Իսկ նրանք, ովքեր իսկապէս պարում էին վիշաբ՝ հարազատները, լաւ արտասում էին եւ մէկ-մէկ արտասանում Հատուկներն անկապ քառեր: Այսինքն՝ ինչքան ուժեղ է զգացումը (ուրախութեան կամ տխրութեան), այնքան պակաս է գեղեցիկախոսութիւնը եւ շատ է ճշմարտութիւնը:

Այսօր, երբ մարդկանց բոլոր զգայարանները լափից աւելի լարում են եւ զգացումները կոնկրետացան, անհնարին է յանդատուած խոսելը: Իսկ Հիմա պնդեան խոսել է նախապէս (առաջ՝ երգել), ճի՛շտ խոսել: Այս զգացում իրազանչիւր բառ անփոխարինելի է իր արժէքի տեսանկիւնից, իսկ քանի որ յանդատուելու զգացում վասնկ կայ յանուն կոկիկ յանդի գնու լազմաթիւ բառափոխութիւնների, ուրիշն այժմ աւելի ճի՛շտ կը լինի ընտրել սպիտակ բանաստեղծութիւն կառուցման մէջ:

Համաձայն ենք, որ նոր սերունդը ստուծն չի քայլում: Համաձայն ենք եւ ուրախ: Ի Հարկէ, թող կարծիք չկազմուի, թէ նրանք այդ անում են պարզապէս ինչոր բան անելու համար: Սա զբաղմունք չէ, սա կեանք է, որի անկեղծ վերադարձութիւնը համարում ենք լազողուն ստեղծագործութիւն: Անկեղծութիւնը արուեստի արժանն է: Նրանք դա պարզ ընտրում են եւ ինքնախոսութիւն կը լինէր դիտարկելով Հնարի, սողնի արթիւն:

Այսպէս, ուրիշն, այս սերնդի ներկայացուցիչները չեն հրամարում, որ փոքր են ամէն ջուրհանը, բայց նա ով առաջին կը շտի նրանց (նա, ով քար է տրամադրուած), կը զգայ, որ թէեւ անվարձ, թէեւ մի քիչ ասարբեր, բայց համոզուած եւ ստանդ չփոթուելու նրանք զնունկն են նուազում:

(«Իրական քերթ», 1970, թիւ 46) ՅՈՎ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԲՄԱՍԱՍՆՂԾՈՒՐԻԼՆԻՐ ԱՆՐ Է

Երկաստորգրական պոեզիան գարնէն է ժամանակաբան անարկայն Սահայն նրա ծառի խոտով եւ կամ ընդհանրապէս, կամ էլ խոտով եւ հիմա ունենալով ժի քանի պատուական չարագրականներ ընթացիկ ժամանակում: Ստացում է ժի վիճակ, կըր ձեռք աւելի յառ կարգում եւ ծանօթ ենք երկաստորգրական պոեզիայի ժամին ձգան ընդհանուր կարծիքին, քան թան պոեզիային: Ստացում է, որ խոտով ենք շնորհի արժանիքներն ու թերու թիւններն ժամին ձեռքի սակ ունենալով ժիայն նրա պայտը: Միջկտու ներքին սին իր սրտաշի գոյնը, բնուորութիւնը եւ առանկ ուղղակի ուսումնասիրութեան զեպում կարիք է բացայայտել յառկանիւնը, որոնք ժամանակակից են, եւ յառկանիւնը, որոնք նոր են եւ կարու գուերացման:

Եւ կամենում եմ տեսնել վիճի առարկան, այնպէս, ինչպէս տեսնում եմ, որովհետեւ որդիւնքի ժամին վիճիթա՝ յաճախ կարելու է դառնում յառկապէս այս կանգամները: Քանզակագործը ժամանակի քանտարկութիւնից պատուով է ժիայն իրեն տեսնելի ձեւերը:

Նկարերը գոյնիւրի կամայրութիւնից տանգիւնում է գունային ընկալումներն իր աշխարհը:

Որդաներ նշխիւններն անսաման ոգիկանից կարողանում է դուրս կրգել իր արժայրութեանը կամ ժամայցանը կամանչիւն ժի ամբողջութիւն, որ, վերացական լինելով կանգնել, կանկրեւ է արամայրութեան իմաստով:

Որքան էլ որ այս երկին առանձին-առանձին ինքնուրոյն ժիւորներն են, այնուհանգիւր ընդամասնեցութիւն իր մէջ ընդգրկում է այս երեք անհրաժեշտ սարքերը:

Քանտարկութիւնը պիտի կարողանայ երանգներն ներդաշնակութիւնը եւ ձեւերն ինքնուրոյնութեւն արտայայտել քաներով: Նրա բառը պիտի գոյն ունենայ: Նրա զարմուտեքը պիտի ունենայ երանց, պիտի ունենայ ծառայիւնը որոշակիութիւն, պիտի ունենայ սպարտի եւ տեսանի կոնկրետութիւն եւ արամայրութեան այն անորոյնի գարգալումը: Որին յաճախ մեղեդայնութիւն են անուանում:

Սրանից մէկն ու մէկն քանակայութիւնը քանտարկութեանը գառուպարում է ժանուան:

Սահայն կայ ժի կանգամանց եւս, որ պակաս կարելու է, քան այս երեքը՝ ժիտին վերջում: Դա քանտարկութեան ժամանակն է: Սա ինչ որ իմաստով նաեւ քանտարկութեան հայրենիքն է, նրա եննցեան վկայականը, առանց որի, ինչպէս յայտնի է, քանզակագործութիւն գոյութիւն չունի:

Մտանում եմ, ինչ էլ որ լինի, ժարդն է իմաստ եւ կերպարանց տայիս ժամանակին: Եւ անհարցն է, որ նրանք չգրտուորուին միմեմանակ եւ պայմանուորուան լինեն մէկը միւտով:

Ժամանակը միւնընդ լինելով՝ որոյնիք սերիկի պատկանող արուեստագետներն կամուր ունենում է սարքեր, անհասական բնուորումներ: Եւրոպայիւր անհաստակութիւն իրերն եւ երկույթիւրի նկատմամբ ունի իր տեսակէտը, որ մշակուելու ու ձեւաորուելու է սարքիւր ընթացում: Դա առանկ ջայտուեորեն է գրտուորում քանտարկութեան ձեւի, ունի, ինտուայթայի մէջ: Ընարուոր է կեցողն ձեւը, ունի, ինտուայթան, սահայն անհարցն է անկեղծութիւն իսպալ: Քանտարկութեան մնացած բոլոր քանտարկութիւնները պայմանուորուան են անկեղծութեամբ: Իսկ անկեղծութիւնը ծնում է հոգու ազնուութիւնից եւ մէկ սիրուց: Ուրեմն, նախ եւ առաջ սիր:

Քանտարկութեանը սիրոյ խոտովանութիւն է: Իսկ սօ՛վ է, որ նման պատերին չի որոնում անհաստակութեւն, անհաստակութեւն քաները: Նման պատերին անհարցն է աւելորդ քաներով ծանրարեանն ինչու պոթկուտը: Նման պատերին ոչ որ չի զիմ ճարտաստեարթեան, ինչպէս ճարտաստեարթեան չի զիմ իջում ինչպէսուղը, հրգեանում սարքուոր, օգնութիւն կանողը: Քանտարկութեւն մերկացում է իր զգացմունքները եւ ոչ թէ գորգարում զ՞քան: Իսկ երբ պատուում է կահապակը, ուրեմն՝ պիտի կահապակն անկեղծութեան վրայ՝

Յ ա ու ի Որոճումը

Փամանակակից պոեզիայի սիմաստի միայն մակերեսին կարելի է նայել, մինչդեռ սրբի մարդիկ ճշտում են իրարանական հաստատման ենթարկել այն:

Այստեղից էլ այն կարծիքը, թէ իբր, երիտասարդական պոեզիան բովանդակազուրկ է և նեամպիլում է միայն ինչ-որ մեական նպատակներ: Բովանդակազուրկ է, ըստ նրանց, այնքանով, որքանով այն գծուարմատային է: Նրանք, որոնց համար քամաստեղծութեան շինի արժանիքը նրա հասկանալիութեան մէջ է, պարզ է, կարող են միայն մեզք բուփա-նարել:

Մինչդեռ քամաստեղծութիւնն իր Փամանակակից իմաստով չի կարող մինչև վերջ բացայայտուի ընթերցողին: Նրա նպատակն է՝ աչքի ընթերցողի ոչ թէ հասկանալու ունա-կութեան, ունիցիտող գիտակցութեան, այլ անգիտակցութեան, նրա զգայունիքին վրայ: Բանաստեղծութեան հասկանալիութիւնն ընթերցողին նազրդում է ունիցիտու հրճ-անք, բայց ներկայ այնպիսի ուղիղ մարդու բարդ կոմպլեքսը չի կարող բուարարուել դանով: Այլ կոմպլեքսը կարող է զնգադիտական բուարարուանութիւն զգալ իր անգիտակ-ցութեան շարժումից, նրա տառապանքից:

Նոյնից պնդումներ կամ նախ, մակերեսային զգացմունքներ (որոնց մասին ոչ թէ գրում են, այլ իստում կամ չեն իստում ընդհանրապէս) կիտանախմէտայ նկարագրու-թիւններ մեզ մտ յայտնում են մարտի, էշմարիտ պոեզիայի անուան սակ: Այդ պնդու-նային աննիցիտուալ մասնադութեան անիտուափելի հեռեանքն այն զնգրուախիլում է, որ արդէն սպանում է, իրօք, մեր քամաստեղծութեան քամաստեղծական սրուն: Մեր գմ-լին հաշիկըք բարձրացնում, իրախուում է ննց այդ պոեզիան, ուր համարեալ չէր քա-նակալում է պոետական վիճակը:

Այլ անփնփրկա, էտքք քամաստեղծութիւնների միակ պաշտպանութիւնը մեի մէջ է: Իթէ վերջիննց այդ քողը նրանց վրայից, ապա կը տեսնենք, որ միայն մում է կամ ինոր գնգրուախու պատկեր, կամ անորոշ մի զգացմունքայնութիւն: Ըս յանախ դա ներկա-յացում է իբրև ազգային պոեզիա: Մինչդեռ դա ոչ թէ ազգային է, այլ, պարզապէս, լու-կալ: Այլ լոկալութիւնը անաւհամարին նկարցնում է մեր ազգային սրու սահմանները:

Մեր նպատակը այդ լոկալ պատկերացումներից դուրս դան է: Ստեղծագործել, նշանակում է գանուն Փամանակի բարձրութեան վրայ: Իսկ այդ Փամանակը պանանում է, որ մենք, ունենալով պոետական հին և հարուստ աւանդութիւն, կարգաւանք դիտողի մէջ մանկ Փամանակակից մարդկութեան նա: Գոնցիան այդ դիտողի թերեւ լաւագոյն մէջն է: Ուստի մենք պէտք է ձգանք դուրս թերեւ մեր պոեզիան աւելի լայն սպարել: Եւր մեր մայնը կարգաւանք լոկալ լինել իննէ իննէ միաններին:

Գրական աւանդները պէտք է հասկանալ իբրև գրական կուլտուրա, այլ ոչ թէ կանններ: Մեր մաղովրդի կուտական գրական կուլտուրան մեզ իրաւունք է աւելն գանուն-լու Փամանակի բարձրութեան վրայ, այնինքն՝ ապատուելու նապան կաննների ազնու-թիւններից և ստեղծելու նորը մեր Փամանակին համապատասխան, այլ ոչ թէ ստեղծել ուրրուա այն քանի, որ Փամանակին սուրբագու չի կել:

Մեր երիտասարդական պոեզիան զարգանում է այս ուղղութեամբ:

ՀԾՆՐԿ ԷՊՈՅԵԱՆ

Սովետական Գրականութիւն, 1971, քիւ 1

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՅԼԵՐԸ, ԳԱՅԼԸ...

Պարոյր Աւետիսեանի հոգի, զՌազմիքի Յունիսի թիւով կը խոստանայի՞ր յանրաբար առջ մեծ կրօնականներն գրական, ցեղային ու մարդկային մայր գիծերը հայկու ու անբողջացէ՛ր զքանակէն անհասկանալի թիւով մէկ յօգուածները, որոնցմէ առաջին երկուքը՝ զՅունուսն ու զԵղիշէն անտիգրի Յայտանիմներնք և զՔննադատութիւնը այլևս յանդուտ չեն առնու հարեմբը արդէն կարգաց ընթերցող մեր նախորդ և նախանցեալ թիւերուն մէջ:

Թիւով մէկ յօգուածներէն մէկը դիմացի էլին զբայ սկսող «Իժուարը իրենից հասան իննցն է» խորագրեալ գրութիւնն է, որ հրատարակուեցաւ չուրջ մէկ տարի առաջ, հայտարարել երկտասարդ բանաստեղծութեան մասին բացուած վէճին ամենատարբերուն և անթուրուա թիւ տուա թիւ չուրագրութիւններու և թէ արտունջներու, ինչպէս անհասարակ կը պատահի ճշմարտութիւններ բովանդակող բոլոր գրութիւններուն:

Պարոյր Աւետիսեանի երկարատեւ պայքար մը մղեց հայ բանաստեղծութիւնը շինարարեցողական, պատմագրական-կարագրական և տակուսին գրեմբաստայինք իր անձով անմաններէն գուր ընդունաւ և նոր գրողը այստեսան զմտածող-մտաւարակալ-իմացականութեամբ լեզուէն հերոսին ծանօթացնելու ի ինչպիսի, և այն արգար հաստատութեամբ, որ լինեմ պիտի չլինեմէ մահերևի կրայ (չեմէ էլ կարողանում), բայց մեմէ պարտաւոր եմ միշտ էլ լինել մակարակի վրայ» համաշխարհայինի՛ն:

Այս ուղղութեամբ միջնորդող բազմակի անողջացնելէ հոգ, երկտասարդ բանաստեղծը որ մը անտու, որ արտածել իր պահանջներն անբողջովին համապատասխան նկարագրի մը չունի, անտու որ:

«Մեր երկտասարդական գրականութիւնը (ու մկարչութիւնը) արդէն տուել ու տալիս է իմ վայն տրդարացնող փոստեր: Յոգնած երեկուայ յամգաւոր աւ չափատր կազմարտածութիւնից, բաժնի աւ փրփուրի չափարեքականութիւնից, զանգրաներ բառերի վաճառականութիւնից, տրամէ յաճախ գրում եմ մի այնպիսի լեզուով, ասես հարկադրաբար արկ ու արտք եմ տալիս՝ իրենց մտքերն արտայայտելով մի կերպ, զորով, կարծես թէ տաք մի լեզուով:

Թրինք «Թոնրանային գրականութիւն» ընող թոնրանայինները դէմ էան Աւետիսեանի և ինչ անի որ՝ զգոտութեան հրատարակող երկտասարդները: Անոնցմէ մէկը, Արմէն Սարգիսեան, կը դէ՛ ճիշտ եմ նրանմէ, ովքեր գտնում եմ, թէ ժամանակակից պոետիմ արդէն ազատուել է շունդայթի ուժից» (Պ. Սեւակ): Սակայն այս միտքը միակողմանի չպիտի է մերկայացնել և ինչ յետոյ, Յուն յօգուածում երկտասարդին, մեղմ առած, շտարագանիկ հենց նոյն անոնցապահութեան դիրքերից: Մի կողմից իմէ՛ր՝ անուամի բանաստեղծը աստ է բարուն թու էութեան նշարիտ թեզ և միտ կողմից էլ շտարագանուումս հենց իր իսկ աստջ էաշած թեզը:

Նոյն անարկութիւնը կ'ընէ նաև երկտասարդական բանաստեղծութեան ընթ պաշտպան երկտասարդ ընդադատ Ալեքսանդր Թովչեան:

«Ի հարկէ, մինչև չսնկնեի գայլ Պարոյր Աւետիսեան տրդէմ շատ բան էր արել չորհուրտի բարեման համար: Ըս այսօր գարմանայի է, որ հենց Աւետիսեան է ակադեմիկով դիրքերից շինարարումս երկտասարդներին:

Մեր կարծեքով, ասկան, Աւետիսեանի ո՛ր կը խորագանէ, որ ալ կը մեղադրէ, այլ պարտապէս ճիշտ բաներ կ'ընէ: Պարզապէս հիանալի են իր ասանանունները, գրականութեան զայնքուն արիւակը մտահան չընելու իր թելադրանքը մանաւանդ: Գրականութեան զայնքուն, ու զայնքուն վերջինը՝ ի՛նք, որ զայնքուն այնքան զեղեցիկ ճշմարտութիւններ կտակեց մեզի...

Պ Ա Ր Ո Յ Ր Ս Ե Ի Ա Կ

Դ Ժ ՈՒ Ա Ր Ը
Ի Ր Ե Ն Ի Ց
Հ Ա Ս ՈՒ Ն
Լ Ի Ն Ե Լ Ն Է...



Գրական հրատարակի վրայ է երեք սերունդ :
Այս սերնդի վտարակալոր ներկայացուցիչներից շատերը տակաին
ժամանկցում են մեր բանաստեղծական առօրեային : Եւ սա մեր բոլորիս ու-
րախութիւնն է :

Կարծում եմ, որ ճիշդ են սուսւմ, թէ արայծմ մեր բանաստեղծու-
թեան գլխաւոր արտադրանքը տալիս է երկրորդ՝ միջին սերունդը : Բայց
կարծում եմ նաեւ, որ ո՛չ միայն աւաղ, այլև միջին սերունդն էլ իր հիմ-
նական գործը արդէն արել է : Այդ սերնդի այս կամ այն ներկայացուցիչ
բանաստեղծական նոր յայտնագործումներ չուպատելը վաղաժամ է ժամա-
ւորապէս, իսկ ընդհանրապէս այս սերնդի առաջիկայ գործունէութիւնը յի-
նչու է իր կառույցի կա՛մ յարգարումը, կա՛մ կից եւ օժանդակ շինութիւն-
ների յաւելումը : Նոր գտնագումաների կատուցապատման զործը անցնում է
եւ անցնելու է այսօրուայ կրտսեր սերնդին : Դա է՛ւ բնական է, ե՛ւ բնակա-
նոն :

Այս դիտակցութեամբ եւ այս մտահոյութեամբ էլ ես ուզում եմ ա-
ռաւելապէս խօսել Հենց այդ կրտսեր սերնդի՝ նրա այսօրուայ եւ վաղուայ
մասին :

Նախ՝ այսօրը :

Գրական եւ ոչ-գրական մամուլը (մանաւանդ «Աւանգարդ»ը եւ «Գա-
րունջը») լեցուն է երիտասարդ անուն-ազգանուններով : Օժտուածների թիւը
տասնեակից պակաս չէ, այլ արեւի :

Ամենաուրախալին, բոտ իս, այն է, որ այս սերունդը բերում է (եւ
չէր էլ կարող չբերել) թարմութիւն : Թարմութիւն եւ ոչ թէ նորութիւն,
որը (այդ նորութիւնը) զուտ պայմանական մի հասկացողութիւն է. զուտ
տակ ոչինչ նոր չկայ :

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՅԼԵՐԸ, ԳԱՅԼԸ...

Պարոյր Սեւակի ծանփն հոգ, «Բազմիցի Յուկիսի թիւով կը խոստանայինք յաղ-
բուր առ ժեծ կորուսեալին գրական, ցեղային ու ժարգիւային ծայր գիծերը հապտ ու ան-
բողջապէս գրականայն տեսական թիւով վեց յաշուածները, որոնցմէ առաջինը «Յե-
նուն եւ ընդդէմ ախալիզի Յայտանիմներն» եւ «Վճնագատութիւնն ալիւս յաւելումն լե-
սան» կտորները արդէն կարգաց ընթերցողը ժեր նախորդ եւ նախածիցայ թիւերուն էջը:

Թիւով վեց յաշուածներն ժէկը դիմացի էջին գրաց սկսող «Կծուաքը ինծից ետան
լինկն էր խորագրեալ գրութիւնն է, որ հրատարակուեցաւ չորսը մէկ տարի առաջ, Հայաս-
տանի երկրասարգ բանաստեղծութեան ժառն թացուած վէճին ամենատաք արժանի եւ անթ
տուս թէ՛ լաւ արածագրութիւններու եւ թէ՛ արտունջներու, ինչպէս առհասարակ կը դա-
տասնի էջմարտութիւններ բովանդակող բոլոր գրութիւններուն:

Պարոյր Սեւակ երկարատեւ պայքար մը մղեց Հայ բանաստեղծութիւնը զեմխար-
նագրական, պատմողական-կարագրական եւ սակաւին շրոնրատնայինն իր անձուկ ան-
ժաններին գուրո թերկու եւ նոր գրողը աշտարուած զմտածող-մտաւորական-ինացականու-
թեամբ լեցունց չհրտին ծածոթացնելու ի խնդիր, եւ այն արգար փառասիրութեամբ, որ
«Ենեմ պիտի շիծենք ժակերեոյ վրայ (չենք էլ կարողանում), քայց մենք պարտաւոր են
միշտ էլ լինել մակարդակի վրայ» համոշխարհայինն»:

Այս ուղղութեամբ միտայրտը բուսական ատողացնելն հոգ, երկրասարգ բանա-
տեղքը որ մը անտու, որ արուածը իր պահանջներն ամբողջովին Համապատասխան նկարագիր
մը շունի, տեսու որ՝

«Մեր երկրասարգական գրականութիւնը (ու նկարչութիւնը) արդէն տուէլ աւա-
լիս է իմ վախն արդարացեալ փաստեր: Յոգմած երէկուայ յանգաւոր աւ չափաւոր կապ-
ագաւտածութիւնից, շափի աւ փրփուրի յափարեքականութիւնից, գանգրաներ քանիքի վաճա-
ռականութիւնից, որոմէ յանձալ գրում են մի այնպիսի յեզուով, առաւ հարկադրաբար ետրի
ու տուրբ են տալիս՝ իրենց մտներն արտայայտելով մի կերպ, զորով, կարծես թէ օտար մի
լեզուով»:

Յրինք «Քոնիտանային գրականութիւն» ընող թոնրատնայինները դիմ ետան Սեւակի
իւն անէր ու՛ զգաստութեան հրաւիրուող երկրասարգները: Անոնցմէ մէկը, Արմեն Սար-
աիրտեան, կը գրէ. «Ե՛կըն են նրանք, ովքեր գտնում են, թէ ժամանակակից արեգիմ ար-
դէն ազատուել է ատանդայրի ուժից» (Պ. Սեւակ): Սակայն այս միտքը միակողմանի լսելով
է Յերկայացնել եւ քիչ յետոյ, նայն յոյրածուսմ երկրասարգին, միով ասած, շխարհակեր
ենց նայն առնդապահուածս զիբերից: Մի կողմից ինքը՝ ամուսնի քանաստեղծը առայ է
հաշոււ ըստ էութեան Յշմարիտ քեզ եւ միւս կողմից էլ «խարագմունւս» ենց իր իսկ առայ
էաշած քեզը»:

Նայն առարկութիւնը կ'ընէ նաեւ երկրասարգական բանաստեղծութեան ջերմ պատ-
պած երկրասարգ ջենաղատ Աւեցսանդր թովչեան:

«Եի ետրիկ, միջնել զանեմերի գար Պարոյր Սեւակը արդէն շատ քան էր արի մը-
նորտի քարտացման համար: Եւ այսօր գարմամայի է, որ ենցն Սեւակն է ակադեմիզմի
զիրերից ամբողջութեան երկրասարգներին»:

Մեր կարծիքով սակայն, Սեւակ ո՛չ կը խարագանէ, ոչ ալ կը ժեղադրէ, ալ պար-
զապէս ճիշդ բաներ կ'ընէ: Պարզապէս հեանուի են իր սահմանածները, գրականութեան
գայլերուն օրինակը մտանան ընելու իր թելարանքը մանաւանդ, Գրականութեան գաղտնիք,
ու գայլերուն վերջինը՝ ի՛նք, որ գայլային այնքան զեղեցիկ ճշմարտութիւններ կտակէ
մեզը...

Պ Ա Ր Ո Յ Ր Ս Ե Ի Ա Կ

Գ Ժ Ո Ւ Ա Ր Ը
Ի Ր Ե Ն Ի Ց
Հ Ա Ս Ո Ւ Ն
Լ Ի Ն Ե Լ Ն Է...



Գրական Հրատարակի վրայ է երեք սերունդ:
Աւագ սերնդի վաստակատուր ներկայացուցիչներէց շատերը տակաւին մասնակցում են մեր բանաստեղծական ասօրեային: Եւ սա մեր բոլորիս ուրախութիւնն է:

Կարծում եմ, որ ճիշդ են ասում, թէ առայժմ մեր բանաստեղծութեան գլխաւոր արտադրանքը տալիս է երկրորդ՝ միջին սերունդը: Բայց կարծում եմ նաեւ, որ ո՛չ միայն աւագ, այլեւ միջին սերունդն էլ իր նիւնական գործը արդէն արել է: Այդ սերնդի այս կամ այն ներկայացուցիչ բանաստեղծական նոր յայտնադործումներ շսպասելը վաղատաճ է մասնաւորապէս, իսկ ընդհանրապէս այս սերնդի առաջիկայ գործունէութիւնը լինելու է իր կատարյցի կա՛մ յարդարումը, կա՛մ կից եւ օժանդակ շինութիւնների յաւելումը: Նոր ճտեղածասերի կառուցապատման գործը անցնում է եւ անցնելու է այսօրուայ կրտսեր սերնդին: Դա ե՛ւ քնական է, ե՛ւ քնականոն:

Այս գիտակցութեամբ եւ այս մտահոգութեամբ էլ ես ուզում եմ առաւելապէս խօսել Հենց այդ կրտսեր սերնդի՝ նրա այսօրուայ եւ վաղուայ մասին:

Նախ՝ այսօրը:
Գրական եւ ոչ-գրական մամուլը (մանաւանդ «Աւանգարդ»ը եւ «Գարուն»ը) լիցուն է երիտասարդ անուն-ազգանուններով: Օժտուածների թիւը տասնակից պակաս չէ, այլ աւելի:

Ամենաուրախային, ըստ իս, այն է, որ այս սերունդը բերում է (եւ չէր էլ կարող չբերել) թարմութիւն: Թարմութիւն եւ ոչ թէ նորութիւն, որը (այդ նորութիւնը) դուռ պայժանական մի Հասկացողութիւն է. «Լուսնի տակ ոչինչ նոր չկայ»:

Ի՛նք երիտասարդութիւնն ազատագրուել է գրական նախապաշար-
մունքներէն, որ այլ բան չէ, քան կամուր զերուքիւն, իսկ սա զերութեան
վատթարացոյն տեսակն է:

Ի՛նք երիտասարդութիւնն ազատագրուել է սովորոյթի ուժից, իսկ դա
ես համարում եմ մեծագոյն յազթանակ եւ ահա թէ ինչու:

Մարդկութեան կեանքը միշտ էլ զարգացել ու զարգանում է... կարիքի
չնորճի (կարիքն է ստիպել գտնելու արտադրական նոր միջոցներ, որոնք
իրենց հերթին ծնել են արտադրական նոր յարաբերութիւններ): Իսկ մարդ-
կութեան կեանքի զարգացմանը միշտ էլ արդելակել է սովորոյթի ուժը (այլ
խօսքով՝ արտադրական հնացած յարաբերութիւններն ասուածը):

Այսպէս է տնտեսական կեանքում: Այսպէս է նաև հոգեւոր կեան-
քում:

Ի՛նք միայն մէկ՝ փիլիսոփայական կոչուելուց շատ հեռու օրինակ,
Դարեք շարունակ ընդունուած է գրատախտակն անել սեւ, որպէսզի
վրան գրեն կաւիճով, որ սպիտակ է: Իսկ մեզմէն ո՛ւմ յայտնի չէ, որ կաւիճ
բանեցնողը արտոտուած է մեռքից-զլուխ եւ ստիպուած է ներշնչել փուխ:
Եւ ոչ մէկիս մտքով չի անցնել որեւէ բան փոխել. ընդունուած է եւ... վերջ,
Իսկ աղատուե՞լը: Իսկ փոշին կուլ տա՞լը:

Եւ ահա ճապոնացիք (գարձեալ այս ճապոնացիք) այժմ սարքում են
սպիտակ գրատախտակներ՝ վրան իւրատեսակ սև կաւիճով գրելու համար:
Այլևս ո՛չ աղատուել, ո՛չ էլ փոշի ներշնչել: Աւելին. այդ գրատախտակ-
ների վրայ կտրելի է գրել նաև Այլ զոյնի կաւիճներով, մի բան, որ բա-
ցտուած էր սեւ գրատախտակ ունենալիս:

Մանրո՞ւք է: Այո՛: Բայց ամենամեծն էլ այլ բան չէ, քան մանրու-
ների միանուրթիւն:

Եւ մեր երիտասարդական բանաստեղծութեան մէջ ինձ համար ամե-
նաթանկը սովորոյթի ուժի, կրկնում եմ՝ կեանքի զարգացումն արդելակող
ուժի յազթանարումն է, բերածս համեմատութեան պարտադրանքով սասած՝
գրատախտակի ընդունուած գոյնի փոփոխման, կաւիճի նոր տեսակով գրելու
օգտակարութեան ըմբռնումը, այսինքն՝ կարիքի ճայինն ունկնդրելը, որ չի
կարող չհասցնել բանաստեղծական կենսամեծի զարգացման նոր աստիճանի:

Այս է ամենանշանակալին եւ ամենաուրախալին:

Բայց գրականութեան պատմութիւնը գրատախտակ չէ, գրականու-
թիւնն էլ կաւիճ գրութիւնն է, որ հիմա գրենք, կէս ժամ յետոյ ջնջենք:

Ճիշդ է, ի հարկէ, որ գրական ամէն նոր սերունդ աշխարհ զայլս
մտնում է մի տեսակ շախմատային խաղի մէջ եւ նոյնիսկ ակամայ զլախ է
ասում նախորդ սերնդին: Այսպէս եղել է, այսպէս լինելու է: Բայց նոյնքան
էլ ճիշդ է, որ զլախի ամէն յայտարարութիւն ո՛չ միայն չի վերջանում
մտառով, այլև յաճախ տալիս է հակառակ արդիւնք: Ու եթէ շախմատա-
յին տախտակն ունի ընդամէնը Յ՛ գառակուսի, ապա գրականութեան տախ-
տակը՝ անհամեմատ աւելի:

Եւ այստեղ է, որ ես ուզում եմ աւելի խօսել մեր երիտասարդ սերնդի
վաղուայ մասին, որովհետեւ դա վաղն է նաև մեր ողջ գրականութեան:

Երիտասարդութիւն ասուածի ամենարնորոջ յատկանիշը թերեւս իմէ-
նավտանաութիւնն է: Եւ սրա մէջ ոչ մի պախարակելի բան չկայ: Պախա-
րակելին եւ վտանգաւորն սկսուած է կէս քաջ յետոյ, երբ հանդէս է զայլս
մեծամտութիւնը: Իսկ սվքե՞ր են սրանք՝ մեծամիտները: Եթէ աշխարհում
կան բացայայտ երջանիկներ, ապա մեծամիտները, իմ կարծիքով, երջանիկ-

ներքի առաջին շարքում են: Մրանք չեն ունենում կասկածի ոչ մի բույժ: Ուրիշները, մասնաւոր ձեռքերի հետ համեմատուելու ոչ մի ցանկութիւն: Դիմացները՝ մի հայելի, որ անդրադարձնում է միայն իրենց ինքնատիրաւորած դէմքը: Իսկ բանաստեղծին պէ՞տք է արդեօք հայելի: Պէտք է եւ շատ: Սակայն ոչ թէ իր ունեցածով հիանալու, այլ իր շունեցածի վրայ խորհելու համար: Եւ յետո՛յ՝ կայ հայելու մէկ այլ տեսակ էլ, որ կոչուում է մոզայիան կամ ծառ հայելի եւ այլակերպ է ցոյց տալիս իրեն նայողին: Արուեստագէտին պէտք է հենց այս վերջին տեսակի հայելին, որպէսզի ինքնահասկութիւն ծախելու փոխարէն աշարջութիւն դնելու կարիքն զգայ:

Իսկ ինչպէ՞ս պայքարել մեծամտութեան գէժ, որ այլ բան չէ, քան եզրա ցնց: Այսանդ չի կարող օգտակար լինել նաֆթալինը: Կարող է թերեւս օգնել լոկ գիտակցումն այն բանի, որ մեծամտութիւնը եւ օղբ նոյն յատկանիւն ունեն: Օղբ, ինչպէս գիտեն փոքրահասակ աշակերտներն անգամ, մըտնում է այնտեղ, որտեղ դատարկ տարածութիւն կայ. ձուլածոյ գնտի մէջ՝ անհամեմատ նյակաս, քան փուչիկի: Մեծամտութիւնն էլ է այդպէս՝ զուրի կոչուած զուեալ որքան դատարկ է, նոյնչափով էլ լցուած է մեծամտութեամբ:

Ուրեմն՝ եթէ բանաստեղծին հայելի է պէտք, ապա պէտք է հայելու եւս մի տեսակ, որ ցոյց է տալիս սեփական զլխի (եւ սրտի) դատարկութեան ու լեցունութեան միճակը՝ ըստ զոռոգմանութեան չափի:

Մէկ որ հասել ենք հայելուն՝ անհրաժեշտ եմ համարում ասելու նաեւ, որ արուեստագէտին ընդհանրապէս ոչ այնքան հայելի է պէտք, որքան ապակեպատ լուսամտ՝ աւ, որպէսզի անդրադարձնի ոչ թէ իր սեփական դէմքը, այլ ցոյց տայ աշխարհը:

Եւ այստեղ է, ըստ իս, մեր երիտասարդական գրականութեան զլխաւոր արատը:

Ի՞նչ է նրանց պահանջը աշխարհից: Ի՞նչ են ուզում նրանք: Ի՞նչ է նրանց ասելիքը: Փակասում է հենց այդ ասելիքը, առանց որի չի եղել, չկայ եւ չի լինել գրականութիւն: Եւ որովհետեւ պակաս է ասելիքը, ուստի եւ առանկ է պոետրութիւնը: Ինչ-որ բնագրական մղումով նրանք պոետրում են իրենց սակաւ ու ծանծաղ ջուրը՝ ալեկոծութիւն եւ խորութիւն կեղծելու ինքնախարհութեամբ ասեմ, թէ՛ խորութեամբ: Ասելիքի պակասից է ծագում այն, որ մեր երիտասարդական արձակը շատ է բանաստեղծական: Ասելիքի պակասից է բխում եւ այն, որ մեր երիտասարդական բանաստեղծութիւնը շատ է արձակութեամբ: Արձակը՝ բանաստեղծական, իսկ բանաստեղծութիւնը՝ արձակունակ, — սա սովորական արատ չէ, այլ սրտի՛ արատ, որ չի կարելի մոռացութեան մատնել, եթէ չես ուզում շուտ մահանալ:

Թողնենք արձակի բանաստեղծականութիւնը, որ առանձին հոգս է, եւ խօսենք բանաստեղծութեան արձակունակութեան մասին:

Մեր երիտասարդների միայն մի մասն է գրում յանգաւոր: Անձնապէս նա բանաստեղծութեան պարտադիր յատկանիչ չեմ համարում յանգը, Դա ոչ թէ սեռի տեսակարարն է, ինչպիսին է, գիցուք, կնոջ կուրծքը, այլ սեռի տեսքարարն է, ինչպիսին է, դիցուք, շրջադրեալը: Շրջադրեալի փոխարէն անդրադարձք հազած կիներ դարձեալ կին է մնում: Եւ մեր շատ աղաչափանքաւորութիւնների համար յանգը այլ բան չէ, քան կանացի շրջադրեալ՝ ոչ կնոջ հարկն: Այլ համեմատութեամբ ասած՝ յանգը նրանց համար նոյնն է, ինչ յենակը կամ անթացուպը. խլիցէք նրանից դա եւ այլեւս չեն կարող ընթանալ, որովհետեւ ծնունդ են խեղանդամ:

Իսկ երիտասարդութեան մեծամասնութիւնը գրում է ո՛չ միայն առանց յանգի, այլ նաեւ առանց կշռոյթի եւ չափի: Բայց որանցից որեւէ մէկը զէ՞ր մէկ անգամ իրեն հարցրե՛լ է կէսգիշերուայ մենութեան մէջ, թէ ինչպէ՞ս է կոչուում իր գործը եւ ինչպէ՞ս է ինքն անում այդ գործը:

Իր գործը կոչուում է ոչ թէ արձակ, այլ չափածոյ: Սակայն էլ ի՞նչ չափածոյ, եթէ զա գրկուած է ո՛չ միայն յանգից, այլեւ չափից: Չափածոյ... առանց չափի՞: Այսինքն՝ նկար... առանց գոյնի, երգ... առանց ձայնի:

Այստեղից էլ՝ մեւի այն քայքայումը, որ շնչում է մօտալուստ ազգստի ծխով, ինչպէս հրաբխային լեռը, որ նախ եւ առաջ իրեն է կործանելու, յետոյ միայն չըջապատը:

Ինչպէ՞ս կարելի է մտանալ նաեւ, որ իսկական բանաստեղծութիւնը շատ է նման իսկական ծննդի. նա պիտի ունենայ իր մէկ զլուխն ու երկու ոտքը, մէկ սիրտը եւ երկու աչքը, մէկ բերանը եւ երկու ձեռքը: Գլուխն աւելի է կարեւար, քան ոտքը, ինչպէս որ սիրտն էլ աւելի է կարեւոր, քան ձեռքը: Բայց երեւակայու՞մ էք մի մանուկ, որ երկու զլուխ ունի, բայց ոչ մի ոտք, երկու սիրտ, բայց ոչ մի բերան: Երեւակայեցէք նաեւ երկու ոտք՝ առանց զլխի, երկու բերան՝ առանց սրտի:

Մեր երիտասարդներից շատերի շատ ու շատ դրած-մրածը հենց այսպիսին է. առանձին ձեռքեր, առանձին ոտքեր, առանձին բերան (ըստ որում շատ մեծախօս), նոյնիսկ առանձին զլուխ կամ սիրտ, — այսինքն՝ առանձին մարմնանդամներ, առանձին օրգաններ, բայց ոչ մարմին, բայց ոչ օրգանիտ:

Ուրեմն այսպէս՝ ո՛չ յանգ ու վանկ, ո՛չ կշռոյթ ու չափ, ո՛չ ծննդեւ-օրգանիզմ: Էլ ի՞նչ մնաց: Մնաց այն, որ պապս էլ կը նստի եւ ամէն զիշեր այնօրինակ քանաստեղծութիւններին մի իշարեռ կը բերի քանաստեղծական շուկայ՝ մի միաբեր փառք վաստակելու մարմազով հագնուած:

Այո՛, քանաստեղծութիւն գրելը հիմա շատ է հեշտացել, հեշտացել է աւելի, քան մի սովորական աթոռ սարքելը, որովհետեւ մի սովորական աթոռ սարքելու համար էլ պէտք է սղոց ու ռանդա, դուր ու մուրճ բանեցնելու հմտութիւն ունենալ:

Ես հիմա խօսում եմ ոչ թէ արուեստի գաղտնիքներից, այլ արուեստի արհեստից:

Արուեստի այդ արհեստն է ա՛հա, որ համարեա՛ր բացակայում է մեր երիտասարդների մեծամասնութեան միջից: Ազգացո՛յց: Ահաւասիկ: Նրանցից ամենատաղանդաւորներին (եւ անձնապէս իմ սիրելիներին) հենց այս բոլորէիս խնդրենք ուրիշ մի լեզուից թարգմանելու մի քանաստեղծութիւն, որ շատ է դուր գալիս իրենց, բայց գրուած է յանգով ու չափով: Երթունքս կ՛կտրեմ, եթէ նրանք կարողանան դա անել ոչ թէ դերազանց, այլ միջակից էլ ցածր մակարդակով: Չեն կարող, որովհետեւ ոչ թէ ետ են սովորել, այլ երբեւիցէ չեն էլ սովորել իրենց արհեստը, առանց որի արուեստ չի կարող լինել: Նրանք շատ են նման այն երեւակայական երաժշտին, որ ձայնանիւն. նոստ կարգաւ լղիտի եւ միաժամանակ համոզուած է, որ արդէն ծալել ու զբզանն է դրել թշուառական Բախտերին, Մոցարտներին, Բեթհովեններին՝ էլ չասած ինչ-որ Բարտոկների եւ Շոտստակովիչների մասին:

Իսկ ուղտի ականջում այսպէս երանելի քնածններն ինչի՞ր վրայ են իրենց յոյսը դնում: — Այլսարհում հիմա այդպէս են գրում, — ահա նրանց միակ պատասխանը:

Բայց այսպէս կարող է պատասխանել ժիւան զոգոյիսն խելագար Պոպ-
րիշինը, որ համոզուած էր եւ հաստատապէս պնդում էր, թէ Վլուսինը ոտ-
վարարար սարքում է Համբուրգում (իմա՛ արտասահմանում) :

Ձսանք, թէ որքա՛ն է ծիծաղելի այս պնդումը :
Մի բողոքով հաւատանք, որ իսկպոէն էլ Վլուսինը սովորաբար սար-
քում է Համբուրգում : Իսկ եթէ յանկարծ, իմ սիրելի երիտասարդ բարե-
կամներ, իսկ եթէ յանկարծ վաղը կամ միւս օր ինձնից առաջ ինքներդ իմա-
նաք, որ Համբուրգում արդէն վճռել են բանաստեղծութեան Վլուսինը՝ սար-
քել... յանդ ու վանկով, շափ ու կլոռոթով, ինչպէս որ երգ ու երաժշտու-
թեան Վլուսինն էլ՝ ձայնանիշ-նոտաներով : Ի՛նչ պիտի անէք այդ ժամանակ :
Պիտի անէք՝ ժամանակ, սպասիք վազեմ տատոնցս տուն, արհեստս սովորեմ
ու դա՛մ : Բայց նախ՝ սա նման է ճամանականդ միս կապեմ, դամ՝ առանձին,
որովհետեւ ժամանակ կոշուածը սրիկայ է հենց ա՛յն պատճառով, որ չի
սպասում : Եւ ապա՛ խնդրում-աղաչում եմ ձեզ, մի մոռացէք, որ ձեզ մնում
է ընդամէնը Քի 10-15 տարուայ ժամանակ, ո՛չ աւելին : Ուղիղ 10-15 տարի
յետոյ ձեզնից սեւէ մէկը այս նոյն սամպիոնից պիտի իր սերնդի մասին ասի
այն, ինչով ես սկսեցի իմ խօսքը. «Քի սերունդը իր հիմնական զործը արդէն
արել է»...

Դժուար չէ հասկանալ, որ այս դէպքում մենք զործ ունենք ոչ թէ
սովորաբար ուժի յաղթահարման հետ, որ, ինչպէս ասացի, մեծագոյն յաղ-
թանակ է, այլ աւանդաբար ուժի մեղեդայական ժխտման հետ, որ նման է
անմասպանութեան : Ճիշդ է, որ երեխայի ծնունդն սկսում է այն պահից,
երբ կտրում է նրա պորտը մօրից : Նոյնքան էլ ճիշդ է, որ երեխան սկսում
է մարդ դառնալ այն պահից, երբ այս անգամ էլ ծրան կտրում են մօր ծծից :
Այսպէս է նաեւ արուեստի ընդհանրում : Բայց մօր պորտից, ապա նաեւ
ծծից կտրուելով՝ զաւակն իր ծնողից օտարում է միայն առեքելով : Ձս-
ակն իր ծնողին ցմաւ կապուած է մնում նմանութիւններէ այն անկարելի
յանցով, որ կոչւում է ժառանգութիւն : Եւ ժառանգականութեան այս օրէն-
քը արուեստի մէջ զործում է ոչ պակաս ուժղնութեամբ, քան կեանքի մէջ :
Եւ կոչւում է ոչ այլ կերպ, քան աւանդութիւն : Ուստի եւ ժխտել աւանդութիւն
նոյնն է, ինչ ժառանգականութեան ժխտումը, որ միայն յիմարութիւն չէ,
այլեւ խելագարութիւն :

Չմտանամ ասելու նաեւ, որ այսօրինակ ժիւստիս եւ անգէտ ժխտ-
զականութիւնը այլ բան չէ, քան մտաւոր ծուլութեան գործոն ձու. ծուլա-
նում են իմանալ, թէ ինչ է եղել եւ այդ ինչից ինչ է լինելու. ծուլանում են
իմանալ, թէ ինչը ինչոց է, ինչը ինչ է դառնում, ինչից ինչ է մնալու եւ...
ժխտում են : Իսկ ծուլութիւնը, ինչպիսի գործոն ու նուազութիւն, պոռոս ու
ազմկոտ ձեւեր էլ ընդունի, դա՛րձեալ մնում է ծուլութիւն, ինչի կործանա-
բարութիւնն ուղում եմ վկայել մի այնպիսի դաստով, որ առեքելով շատ է
հետու արուեստի ընդհանրում :

Տարիներ շարունակ դայիբրի ոչնչացումը Համբուրգ է ո՛չ միայն կա-
րեւոր, այլեւ ժողովրդատնտեսական վիթխարի նշանակութիւն ունեցող
գործ : Ապանում ամէն մի դայիի Համար վճարուել է մրցանակային դրա-
մազուրիս Գայիերի ցեղը Համարեա՛ թէ ոչնչացում է : Թուում էր, թէ դրա-
նով պիտի ապահոված լինէր ո՛չ միայն ընտանի, այլեւ վայրի օգտակար կեն-
դանիներէ անվտանգութիւնն ու անըր : Բայց անիդե եւ աններող վիճակա-
գործութիւնը ճշում է ուղիղ հակասակ երեւոյթի մասին. եզնիկներէ, եղջերու-
ներէ, վայրի ոչխարներէ եւ այծերի անը սպանանից կրճատում է : Եւ դի-

տէ՛ք, թէ ինչու: Որովհետեւ պակասել է քանակը նրանց հողահան գիշարել գայլերի: Որովհետեւ գայլերի քաղցկալութիւնը ծնել է Փիղիկական ծուլութիւն, անբնական ճարպակալում, մկանների թուլութիւն:

Ի՞նչ Փիղիկական ծուլութիւնը կարող է հասցնել այսօրինակ աղէտի, ապա ինչ կարող է անել մտաւոր ծաւալութիւնը:

Ուրեմն գրականութեան զգայլերէն, ասել է թէ գասական մեծութիւնների, սրանց աննշանների մտովի առնչացումը հաւասարում է սեփական անձը մահացման դատապարտելու:

Եւ դրա առաջին ազդանշաններն արդէն առկայ են: Ես խօսեցի ձեւի աղէտաւոր քայքայման մասին, որ գալիս է հենց մտաւոր ծուլութիւնից: Բայց բանը չի վերջանում յանդ ու վանկի, շափ ու կշռոյթի անտեսմամբ միայն: Մեր երիտասարդների մեծամասնութեան լեզուն ծայրաստիճան ազգաս է՝ անյարգար, անփոյթ ու անխնամ: Ասեա թէ գրել են ոչ թէ ինքնահոս գրչով, այլ բուժ՝ ծայրամաշ մատիտով, մի կերպ, թուղթը քերծելով, գրառով: Գրում են այնպէս, կարծես վրէժ են լուծում բառերից՝ նրանց տանջածան անելով: Բայց բանն էլ վրէժինդրութեան իր զգացումն ունի եւ այն էլ ահաւո՛ր. իրեն տանջածան անողին ինքն է մահացնում՝ չընթերցուելով եւ չմտապահուելով:

Իսկը սակայն չի վերջանում ձեւի քայքայմամբ: Քայքայում է նաև բովանդակութիւնը:

Համարձակում եմ յայտարարել, որ մեր երիտասարդներից շատերի շատ ու շատ զբանաստեղծութիւնները կարելի է կարդալ վերջից դեպի սկիզբը: Ես կ'ուզենայի ու կը խնդրէի, որ իմ երիտասարդ բարեկամները իրենք բացեն իրենց գրքոյիլը եւ իրենք անեն այն, ինչ ես եմ արել՝ կարդան իրենց գրածները վերջից դեպի սկիզբը: Բոլոր խրատներից ու բոլոր զեղանորներից աւելի, ըստ իս, դա կարող է խելքի բերել մարդուն, եթէ, ի հարկէ, նա ուզում է խելքի դալ:

Նոյն ձևով կարելի է մէկ երիտասարդի գրքոյի կէսից աւելին էջախախտելով դնել մէկ այլ երիտասարդի գրքոյի մէջ, եւ դրանից որեւէ ալլամայնութիւն, որեւէ դիտոնանս չի ստացուի:

Որովհետեւ դրանք ոչ թէ իմֆաստիպ են, այլ պարզապէս տիպ եմ, ծանօթ բառերի տիպ՝ ծանօթ թղթի վրայ: Որովհետեւ դրանք ոչ թէ օրգանիզմ են, այլ լաւագոյն դէպքում օրգան, ոչ թէ մարմին, այլ լաւագոյն դէպքում մարմնամաս: Որովհետեւ այսօրինակ զբանաստեղծութիւնները՝ հետ անհամեմատ շատ անլի յանախ է կատարում այն, ինչ երբեմն է պատահում կանանց եւ կոչում է «կեղծ յղիութիւն»: Ուստի իմ կարգացածներին մեծ ծառում՝ եթէ ես ցաւ եմ զգում, ապա դա ոչ թէ ցաւն է երկումէի, այլ ցաւը կեղծ կամ կարծեցեալ յղիութեան, որ գրականութեան լեզուով կոչում է գրելացաւ, մի ցաւ, որից զնուածը չի կարող ունենալ ինքնատիպութիւն, ինչով երբեք տարբերում են երկրագնդիս բոլոր երեք միլիոնը սովորական մարդիկ, էլ ուր մնաց թէ թապաւորները կամ իշխանները:

Իսկ բանաստեղծները, որ ի հոուց անտի եւ յաւիտենից յաւիտեան թշնամի են ամէն տեսակ թապաւորների եւ իշխանների, բանաստեղծները թապաւորի եւ իշխանի նման պիտի լինեն, գոնէ մէկ բանում. բանաստեղծը պիտի ունենայ իր կնիքը, որ գրողութեան է իր իսկ մատանու վրայ, մի կնիք, որ մէկ ուրիշ մատանու վրայ չկայ, եւ մի մատանի, որ մէկ ուրիշ մատին չի գալու: Մինչդեռ շատ-շատերը, այդ թւում նաեւ իմ երիտասարդ բարե-

կամերերից շատ-շատերը, ո՛չ միայն չունեն իրենց մասանին իրենց կնիքով, այլև չունեն այն համընդհանուր եւ համահման ՏՀԻ գրով՝ որ ունի ամէն դործարան ու արտադրամաս եւ նշանակում է Տեխնիկական Հսկողութեան Բաժին:

Այս Տեխնիկական Հսկողութեան Բաժնի բացակայութեամբ է վանառքի հանում այն արտադրանքը, որ այլ բան չէ, քան գեշ գեղեցիկսօսու թիւն, այսինքն՝ գեղեցիկ համարուող բառերի տգեղ եւ անկապակից յայտնեցաւաբան: Մինչդեռ բանաստեղծի գործը ոչ թէ բառերի շարունակ է (թէկուզ եւ գեղեցիկ բառերի շարանը), այլ բառերի շարան՝ որա (չլիթայն բառի) տաժանակրայիւն իմաստով: Այդ ոչ թէ շարանով, այլ շղթայով պիտի կապանքել ընթերցողի միտքն ու հոգին, ինչպէս պարանոցն են շղթայում: Եւ էթէ ընթերցողին նոյնիսկ յաջողութի կարել այդ շղթան, ապա դարձեալ մի քանի օղակ կամ օղակների հետք կը մնայ շղթայուածի պարանոցին:

Անմահութեան կամ, աւելի համեստ ու ճշգրիտ բառով ասած, յարատեւութեան Պաշտօնը հենց այս շղթայի եւ ոչ թէ շարանի մէջ է: Ուրեմն ինչպէ՞ս անենք, որ հասկանանք եւ հասկանալուց յետոյ շօտանանք, թէ մեր գործուծ դիւրիմութիւնն ու հեշտութիւնը հաւասարազօր է դիւրին ու հեշտ մեռնելուն:

Եւ չի՞մ ասում, որ դիւրին ու հեշտ է որմանկար անելը պատի վրայ: Բայց մեր գործին յարմար է գալիս ոչ թէ պատի որմանկարը, այլ գմբէթի որմանկարումը: Եւ շղթան եւ (տարբերակ բան) իմ նկարիչ ընկերներին չեմ էլ հարցրել, թէ ինչպէս են որմանկարում գմբէթները շեղուի: Յամենայն դէպս՝ ո՛չ կանգնած, ո՛չ յարմար դիրքով, այլ երեւի մէջքին կամ կողքին պառկած, կուսած՝ զժուարին ու տանջալից դիրքերով:

Ուրեմն՝ ճշմարիտ բանաստեղծի գործը նոյնն է, ինչ պէթի որմանկարումը:

Հիմա եկէք եւ ոչ թէ ինձ լսէք, այլ կէսգիշերուայ միայնութեան մէջ ինքնեզ մեզ հարցրէք. արդե՞՞ք թէ շոտալ աւարտած մեր բանաստեղծութիւնը գրելիս դուք մեզ զգում էիք զմթէթ որմանկարելի՞ս, թէ՞ պարզապէս պատ էիք նսխում եւ այն էլ ոչ թէ վրձին բռնած ձեռքով, այլ ներկոտուած ստեղծ:

Ի պատասխան իմ այս անոգո՛ւ հարցի՝ կարող է սողալ այն ինքնամիտքարանձեղ կամ այն ինքնամիտքարանձեղը, թէ մեզ հիմա չեն հասկանում, յետոյ կը հասկանան:

Նայի՛՛ հիմա կամ յետոյ հասկանալու համար պիտի քա՛ն լինի, որ իսկականում կամ չհասկանան:

Առնուազն արդէն 2000 տարի բանաստեղծներն իրենց գործը իրաւամբ համեմատում են նետածիգի եւ թիրախի յարաբերութեանը: Ուրեմն՝ եկէք շօտանանք, որ թով նպատակակետից հեռու է զարկում՝ վրիպում է նոյնեան, որքան նա, ով չի զարկում այդ կետին:

Սա Փրանսիական մեծ փիլիսոփայ Մոնտէնի խօսքն է, որ ասուած է 400 տարի առաջ եւ կը կրկնուի 400 տարի յետոյ էլ, որովհետեւ անփոփոխ է ճշմարտութիւնն է: Ուրեմն եկէք մեզ շխարհնք յետոյ հասկացուելու, այլ կերպ ասած՝ նպատակակետից հեռու զարկելու կամովին կուրութեամբ, որովհետեւ դա հաւասար է նպատակակետին շարկելու իրողութեանը:

Մէկ որ յիշել ենք Փրանսիացի մեծ փիլիսոփային, որ անցեալ է, յիշենք նաեւ Փրանսիացի մեծ արուեստագէտին, որ ներկայ է: Ե՛ս չեմ փքնուում, եւ գտնում եմ», — ասել է ոչ այլ ոք, քան Պիկասոն:

Արուեստի բնագաւառ մտնել եւ շփնտեղել նոյնն է, ինչ որոի գնալ ու շուրջը շնայել: Բայց ամէն գէպքում կարեւորը արածն է եւ ոչ թէ շուրջը նայելը. ինչպէս որ կարեւորը գտնելն է եւ ոչ թէ փնտռելը:

Մեր գրականութեան այսօրուայ մէջ ինձ համար ամենակարեւոր գործը երիտասարդների գործն է, որովհետեւ նրանց վաղը մեր ժողովրդի վաղն է: Այս մտահոգութիւնից էլ՝ իմ այս խոստովիւնը, որ թերեւս չափազանց ըւած է, բայց հոգու պարտք է, որ ես չէի կարող չտալ:

Երիտասարդները չպիտի երբեք մոռանան, որ իրենց մնում է ընդամէնը 10-15 տարին: 10-15 տարի:

Ըստ է, երիտասարդները «չախ» են ստել եւ ստում են: Նրանք պարտաւոր էին այդ «չախ»ը ասել: Դա էլ նրանց հոգու պարտքն էր: Բայց չպիտի մոռացուի «մատ»ը: Դա (չոնէ արուեստի մէջ) բնաւ էլ տարիքի կամ նոր հոսանքի հետ չի կապւում: Նրանք պէտք է յիշեն «մատ»ը, որ յայտարարելու է ժամանակը եւ ոչ թէ իրենք, եւ աշխատեն խուսափել անողորմ պայտնուածից, որ հեռու չէ:

Այո, իրենից երիտասարդ լինելը մի մեծ բան չէ: Ծառ աւելի դժուար է իրենից հասուն լինելը, որի կոչն եմ անում երիտասարդներին՝ հաւատարմով, որ նրանք իմ խօսքը կ'ընդունեն ո՛չ էժան թշնամութեամբ, ո՛չ էլ էժանադին արհամարհանքով:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱՅ

(«Առավ. Գրականութիւն», 1970, թիւ 5)



Վ Ե Ր Զ Ի Ն Գ Ա Յ Լ Ի Ն

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Վ...



Հայաստանի նոր բանաստեղծներուն մէկ մասը իրենց ստեղծագործութիւններով եւ ըմբռնումներով ներկայացնելէ ետք, եւ երկու սերունդներու միջեւ կանգնած, մէկուն իմաստութեամբ յապեցած եւ միւսին անեղայտը ջիւղերով կեանքի նոր սեղաշարժներուն յոյժը բնկալող Պարոյր Աւետիս լուսապայծառ խոտքէն յետոյ, սիրելի է մեզի հետազայ նշխարուն ներկայացնել այս անգամ մեր անմիջական շրջանակէն աստեանի մը նոր տղաք, որոնք Հայ գրչութեան ծառայելու մղումով մը կը փոխեն իրենց քայլերը:

Հոս անց գրաւուցները, անշուշտ, նախ տարիքը ունեցող եւ շրջանաժամանակի հանգիւղ նոյնքան սէր ունեցող Սփիւռքի երիտասարդներուն ամբողջութեանը չեն կազմեր, մինչեւ իսկ մեր քաղաքին մէջ զբաղանդութիւն փորձող նորերուն հազիւ մէկ փոքր համեմատութիւնը կը ներկայացնեն անոնք, ինչպէս է կանխող էջերուն մէջ երևցող Հայաստանի բանաստեղծներուն պարագան, որոնց թիւը կարելի է զիւրաբանաբար կրկնապատկել, նոյնիսկ քառապատկել, այն պարագան, որ զԳարունց ամառիցը առանձինն ու ըմբռն վերջին երկու տարու մտաւոր-ընկերակցութեամբ, որ զԳարունց ամառիցը առանձինն ու ըմբռն վերջին երկու տարու մտաւոր-ընկերակցութեամբ, որ զԳարունց ամառիցը առանձինն ու ըմբռն վերջին երկու տարու մտաւոր-

Հայաստանի երիտասարդ բանաստեղծները մեր նորերուն հետ յիշելու այս պարագան երբեք պիտի չուզէինք, որ բազմապատկեան առիթի մը վերածուէր: Որքան ալ ուզենք

զրականութիւնը անշատել պայմաններէն, բացառելով մասնակի երեսօթները, պետի ընդունինք, որ զրականութիւնը ազերս ունի պայմաններուն հետ եւ Հայաստանի երեսասարդ բանաստեղծներուն եւ զրականութիւն փորձող մեր նորերուն միջեւ եղած աստիճանին, միջառնակ, սեման մակարդակի, զրական մշակոյթի պայմաններուն աստիճանութիւնները, ամենաստիճաններ ընելու ասիթներ շին ընծայեր:

Հայաստանի քանտտակները արդէն բարդ էրականութիւն մը էր ներկայացնեն, մեր նորերը՝ դարդ հետաքրքրութիւն մը:

Յանի մը անգամ զԲագիննի մէջ երեւցած եւ անէլի յանտի զԱզգակնի էջերուն սպասարութիւններ ու համարութիւններ աստիճան եւ թարգմանութիւններ կատարած գտանած հայ երեսասարդներ են անոնք, որոնց զրական սպառան զժառար է գուշակէլ, զժառար է ըսել, թէ ո՞վ էր մայ եւ ո՞վ էր մեկնի, բայց հետաքրքրական է այստեսան փաստը, ո՞րն որ անոնք մաստրական միջոյրտի մը մէջ էր շնչեն, կ'ապրին դեր ու զրականութեան նայ միջառնակ մէջ, հե ի հե էր հետեւին աստր եւ Հայ զրականութեանց նորագոյն շարժումներուն, էր կորչան, էր զրեն, էր վիճին, եւ բարձրագոյն վարժարաններու ուսանողական իրենց ծանրաբեռնաւորութեան հակասակ՝ հաստարթի էր մեան իրենց նախասիրութիւններուն: Հանգամանքներ են ասոնք, որոնք շին կրնար որոշ յայտեր շնուցանել այս երեսասարդներուն նկատմամբ:

Ճանչումու, հանչումէն ետք հասկնումու, հասկնումէ ետք իւրացնելու այս անոնք իրրեւ բարձրէլ կ'արձանագրենք փրկեց հաշտին, եւ ընթերցողին ուշադրութիւնը իրենց վրայ հրաւիրել աստը, իւրտարէն իրենց ուշադրութեան էր յանձնենք կանխող էջերուն արուած զրականութեան վերջին գոյլին ուղեկիլ գրութիւնը...



ԽՈՍՐՈՎ ԱՍՈՅԵԱՆ

ԽՈՍՐՈՎ ԱՍՈՅԵԱՆ ծնած է Սուրբայ Գամբլիէ Բագաբը.
1946ին: Աւարտած է տեղւոյն տղային միջնակարգ վարժարանը:
Կը գրողի ուսուցչութեամբ, հետեւելով Յոյն տունն Ալէն ժողով
համալսարանի հայագիտական ամբիոնի դասընթացներուն: Շու-
տով լոյս կը տեսնէ իր բանաստեղծութիւններու առաջին ժողովու-
ծուն՝ «Գէտեր»:

ԽԱԽԱՐԻ ՈՒՊԻՆ

Գիշերը իր ցուրտ մղձաւանջին մէջ առաւ ամէն ինչ
Ու շունչը դարձաւ ելեւէջ միայն՝ կուրծքի մը յագնած,
Որ դարերու սեւ ժառանգութեան հետ կը փորձէր ապրիլ,
Կը փորձէր տոկայ: Ուսերուն կեանքի Միր կաթին մ'ամբողջ
Կը շրջագայէր մերթ իբր գիսաւօր,
Ընթրթ իբրեւ մարած ու խեղճ մուրապ,
Որ դիպումսի ի՞նչ պատմառով թննուկ
Կը բախէր յանկարծ աստղի մը հրգօր
Ու կու տար հազար կանոնի խախտում,
Ու կու տար հազար դարերու ներքեւ
Նիրհող ուժերուն պոռթկալու աւիւն:
Ու կ'ըլլար հըրագ, ու կ'ըլլար փարոս, ու նուա՛գ կ'ըլլար
Կրծուած տողերու կարաւանին մէջ
Նիրհող վանկերու,
Որոնք անցեալին, որոնք դեռ երէկ երազ էին լոկ
Ու մութ մղձաւանջ:

Եւ այդ գիշեր ինք չկրցաւ ապրիլ,
Չկրցաւ խմբել խոհերն իր հազար:
Առաստաղի մութ պատառին վրայ՝
Այլերը սառած
Գծեցին խարդախ ադուէսի մուշտակ խարդախ ուսերու,
Գծեցին կիներ, մարդեր անանուն,
Որոնք սողալով, քծնելով անվերջ,
Դարձան գոռացող մէկ-մէկ արհաւիրք,
Դարձան օրերու ուղեգիծը խեղճ,
Ուր կը շրջէին մարդիկ ցելսի մէջ...

Ձկրցաւ մնալ, սպասել անվերջ, չկրցաւ խօկալ, տառապեցաւ
 մի՛շտ,
 մրովհետեւ ինք՝ լոկ բա՛ն էր անվանկ, եւ շեփոր էր լուռ՝
 ինքզինքը կրծող,
 Միբաժ էր գուցէ եւ կամ ինչ-որ հին, շա՛տ հին գառանցանք...

Խուժեց ավերումն բոցահուր արինն,
 երեսաց աչի՛ն կարմիր յաղթանակ,
 Քայլերը հասան ամպերու մետաֆս փրփուրէ՛ն ալ վեր,
 Ուր հազար աշխարհ ու բիւր արեգակ
 Ու բիւր Յարդգողի անգոյ ճամբաներ
 Կը դառնային յար,
 Ուր չկար ո՛չ թիւ, ոչ մահուան կապար,
 Ո՛չ մատի համրանք, ոչ կեանքի տենչա՛նք,
 Ու չկար հաշուիչ մետաղէ գործիք, ու չկար հաւատք,
 Ձկային՝ մարդոց ուղեղներուն պէս՝ ծերացած բառեր,
 Ձկային մազեր՝ ո՛չ սեւ ու մերմակ, ոչ շէկ ու կարմիր,
 Հոն անորոշին մրրիկը կ'առնար,
 Կը շաչէր անվերջ մտրակելով զինք
 Ու ինք կ'արշաւէր,
 Հաստել փորձելով ամէն իրաւունք,
 Լարել փորձելով ամէն զսպանակ...

Ուտերը յանկարծ հըպեցան հողին.
 Զգաց գաշտերուն
 երանութեան մէջ առող բոյսերուն խլրտումը նոր.
 Զգաց տրոփող սիրտը թիթեռին.
 Ամէն ինչ կ'անէր, ամէն ինչ կ'եռար՝
 Կերտելու հօօր տենդէն սըրարբաժ,
 Մինչ ուղեղին մէջ կ'աւտոստեր անթարթ
 Մարդոց նայուածքին աղերսանքը թաց՝
 Ողբը աղֆատին, լացը թշուառին,
 Ու մահապարտին ազազակը թռլլ,
 Հայրենագուրկին յոյսը մխացող...

...Ու թարթիչները փորձեցին փակել,
Փորձեցին շրջել էջն այդ սեւաստուեր,
Երբ աչեքուն մէջ բնութիւնն՝ իր ողջ
Գոյութիւնը մերկ պարպեց ժպտելով...

Սպասեց պահ չը ու փորձեց ժպտիլ,
Բայց շուրջն ամէն ինչ տարբեր է ահա,
Բայց ինք,

Ո՞վ էր ինք,

Լոկ խա՞հ էր արդեօք,

Երազա՞նք էր վէս,

Ապրելու համարն անխաղայնան շի՞րտ...

Ու հաջեց յանկարծ, շուն մը պէս ռոնաց,
Ու դունչը մարդոց դէմքերուն՝ ռոնաց,
Ու դունչը մարդոց խիղճներուն՝ ռոնաց,
Ու ռոնաց, հաջեց՝ շուն մը իբրեւ մարդ. — մարդէ՛ անլի,
Ու հաջեց, ռոնաց՝ մարդ մը իբրեւ շուն, — շունէ՛ անլի,
Ունաց ու հաջեց

Մինչեւ աստղերը իջան արցունքն իր այտէն սրբելու,

Մինչեւ ամպերը դարձան փոթորիկ

Ու փոթորիկը դարձաւ խելագար ու անզուսպ քամի,

Հաջեց անդադար,

Մինչեւ յորձունքն իր

Թրջեց կոշտացած հողը անմշակ

Թրջեց պողպատէ փեղկերը ժանգոտ,

Թրջեց ապակի շէնքերը միլիոն-

Բայց մնաց ինք հոն,

Աչքերը հեռուն՝ ամպերէն անդին, աստղերէ՛ն ալ վեր,

Ու դէմքին մարած ժպիտ մը անբաւ...

.....

Ոչ ոք յիշեց զինք, ու ոչ ոք հանչցաւ,

Ստուերը սակայն ինծի կառչեցաւ...

ԽՈՍՐՈՎ ԱՍՈՅԵԱՆ

ՎԱՀԱՆ ԶԱՆՈՅԵԱՆ

ՎԱՀԱՆ ԶԱՆՈՅԵԱՆ ծնած է Լիբանանի Այնճար գիւղը, 1906ին: Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն եւ Պէյրութի աւետարանական փորձարարներու ճէջ: Աւարտած է Պէյրութի Հայ Աւետարանական գոլէճը: Այժմ կ'ուսանի Ամերիկեան Համալսարանին մէջ, հետեւելով քաղաքական գիտութիւններու գաստըրայնցման:

Հ Ե Ռ Ո Ի Տ Ե Ղ Մ Ը...

Յանկարծ վազվզուք մը ծայր կուտայ լնացած քաղաքին մէջ:

Առաւօտ է, բայց արեւը չէ ծագած: Նոր դիւտերը վազած են սողացող օրերուն առջեւէն, ծածկած են Հողը, արեւը:

Մարդերը կը հոսին նեխած փողոցներուն վրայէն՝ իրարու հիւսուած մարմիններ, ձուլուած մտայնութիւններ, անզիտակից ու յիմար, թաղուած ծածկոցին տակ դարերու հին պայթարին, մարդուն միջեւ ու անհատին, մարդուն միջեւ ու բնութեան...

Հրանդի մղձաւանջը կը սկսի կրկին: Ինքզինք կը դռնէ Համալսարանի սեմին, կը սայթաքի ու կ'իյնայ: Դասախօսներ Հասած են ապահովութեան, ու կեղծաւար կը ժպտին...

Խումբ մը ուսանողներ, անոնց հետքերը լիզելով կը սողան, վախկոտ, վախկոտ, ու լիկած...

Ամէն երազ աթոռ է, աթոռները գրբաւուած են, հաստատ են... ուսանողներ չսողա՞ն...

Ցանկապատ համալսարան, ու շրջթաներ, շրթանէ՛ր, որոնց վրայ դարերու նետած ժանդին փոշին ահա կը տիրէ, կ'երազէ...



Բանաստեղծը չկայ...
Յրէկ գիշեր որոշեց չգալ...
Հրանդ բաղձաց անոր քաջութիւնը ունենալ...: Բանաստեղծը հորիզոնէ հորիզոն սաւառներով՝ ինք իր երգը ուզեց

երգել, եւ մնաց մինակ: Ապա՛ ասֆալթապատ փողոցներու եզրին անկուած ծառերուն արցունքը կարծեց տեսնել, ու աւելի եռանդով սկսաւ երգել:

Մերս մը ժօռեցաւ անոր, ու փափուսաց ահանջին:

— Մի՛ վախնար, ծառերը չեն լար, պիտի լան, երբ ասֆալթը անոնց արմատներուն հասնի...

Մերտն ու բանաստեղծը դիւրար դրկած՝ հալեցան, անյայտացան անզայ քաղաքին մէջ, որ կարծես չիտուած ըլլալը հողի լուծող նիւթերով...

Բանաստեղծը չկայ... Հրանդ առածին է Համալսարանին մէջ:

Խումբ մը ուսանողներ, երկրորդ յարկի աստիճաններուն տակ նստած՝ վեր բարձրացող ուսանողուհիներուն ետեւէն իրենց պաշտօնին ենթադրած ճշգրտութիւնը կը փայտայտէին՝ ինքնագոհ քրքիջներով:

— Ճերմա՛կ...

— Վարդապո՛յն...

— Ապա՞... չէ՛ր հագած...

Կապկոզ ժողքեր զահելու վրայ, երա՛զ կուրծքեր, խակ արգանդներ, խարկանք ապրում, այլառերում, այլասերման մէջ ապաստանարան՝ ապահովութեան ճղճիմ զգացումներ, անիրական, անիրական...

Համալսարանը կը գտնուի ծովա-հայկաց դիրքի մը վրայ: Հրանդ յաճախ երկար կը դիտէ Ծովեզերքը շարուած ձկնորսները: Ծովն ու արեւը երկար սիրարանած են անոնց մորթին հետ... Սա-

կայն ձկնորսները՝ շէնքեր ունենալու տենչէն տարուած՝ շէն կրցած ըմբռնիննել ծովուն համարը...

Ամերիկացի փրօֆեսորին կիներ, իր մէկ տարեկան մանչուկը մերկացնելով ծովեզերքը թող տուաւ, ու ինք, կունակը քարի մը տուած՝ սկսաւ թերթ մը կարգալ: Երբ ժամ մը ետք մանչուկը շալկած համալսարանէն տուն կը վերադառնար, խումբ մը աղաք, զղուելի երեքուամերով, զաղին, մօտեցան անոր, որ մանչուկը սիրեն...

Մէջը, գութի բաճկոն հաղած՝ թափառեցաւ միշտ տնտուն: Փէշերուն մէջ, ծոցին մէջ սեւ սողուններ գալարուեցան, հրճուեցան: Տունմնայ, կլոր աղջիկներ, իրենց դուխները վեր բռնած՝ անցան փողոցներէն արագ: Գեղեցիկ սրունքներ ունեցողները, կարճ փէշերով ցատկուտեցին մայթերուն վրայ, ու չքաջացին իրենց ուղղուած ակնարկներուն ի տես...

Նոր ամուսնացած կին մը կը սկսէր ծպտիլ ան երեսոյթներուն, զորս անբարոյութիւն համարած էր ժամանակին: Կը զեղեցկանար, շէր կարմեր, ու մոնաւանդ՝ տեսակ մը համարձակութիւն կու գար դունաւորել անոր շարժումները, որ հին կեղծիքը կը մատնէր, եւ զսպանտութիւն մը կը սկսէր զինք ստննել կամաց-կամաց: Խեղճը, կամորջէն անցած ըլլալով՝ շունչ մը քաշած էր, եւ ծաղկեփունջ մը նետած կամորձին միւս կողմը խճողուած աղջիկներուն...

... Կարճ փէշ հազած ամերիկացի ուսանողուհի մը, ելլելով համալսարանին զլխաւոր դուռնէն՝ զրգոխէ քարածքով մը մօտեցաւ դիմացի մայթին վրայ սպասող ներկարարին, եւ համարձակ շարժումներով ձախ ոտքը վերցուց ու զրաւ սնտուկին վրայ, կօշիկը ներկել տալու համար...: Հինգ վայրկեան ետք, երկու խանութպան, համալսարանի դուրսն պահակը եւ երկու ուսանողներ պէտք եղան աղջկան սրունքները աղատելու համար կատաղած ներկարարին սեւ, լղուտ բաղուններէն ու չորցած շրթունքներէն...

Հրանդ, տարիներէ ի վեր, առաջին անգամ ըլլալով ժպտեցաւ...

Սակայն յանկարծ ուսանողներ խուսժեցին ներս, խելագարներու նման առաջ, որոնք ծպտերես ու յաղթական՝ բարձր նիշեր կրող քննութեան թուղթներ կը ցուցադրէին...

Հրանդ յիշեց, թէ ինչպէս, տարիներ առաջ, մանկապարտիզպանոջին քարետախտակին վրայ ստամոքս մը դրծած էր, ու բացատրած.

— Ա՛ս թէ ինչի՛ կը նմանի երկրագունտը, ուր կ'ապրինք:

Ու մանուկները ընդօրինակած էին եռանդով, ու սորված էին, սորված էին ա՛յնքան, որ զերկրադուռի ձեւ առած էր անոնց ներաշխարհը...

Յիշեց ու սարսափեցաւ պահ մը: Մանուկներ տեսաւ, որոնք, իրենց բերանները բաց՝ կապուած էին ծերերու, ու կը սնանկէին անոնց աղբով, կը կըրթուէին...



Հրանդ սպասեց գիշերուան: Սուգորութեանը համաձայն՝ նստաւ ծառի մը տակ, ու սկսաւ զարնուիլ իր մաշած մտածումներուն:

«Ես ինձի պիտի վերադառնամ... Ինձմէ հեռացայ այն օրը, երբ մտայ հիւանդանոցի մը դաստիարակ զաղջուկներ մէջ, երբ մայրս, իր հարազատ պտուկին փոխարէն, շիշի մը ծայրը անցուած լառալիկը թխմեց շրթներուս: Ես ինձի պիտի վերադառնամ: Պիտի դիտակցիմ զոյնութեանս, պիտի զգամ զիս կազմող ամէն մէկ բջիջին ներկայութիւնը մարմինիս ու հողիս վրայ, ու սիրեմ զայն... Ես ինձի՛ պիտի հնազանդիմ, որ շատեմ ինքզինքս, որ չձանձրանամ ինքզինքս:

- «... Պիտի ապրիմ, պիտի չվազեմ...
«Պիտի սուտանիմ, պիտի չվազեմ...
«Պիտի երազեմ, պիտի չվազեմ...
«Պիտի կռուիմ, պիտի չվազեմ երբեք...»

«Հիմա մարդը կը խօսի, խօսքը շուրջ...»

նի եղանակ: Երգած է ժամանակ ժր, ու
առաջ, շո՛տ առաջ, երբ աստուածներ
ստեղծելու ուժը ունէր, երեւակայու-

- թիւնը ունէր, պարած էր:
- «Հիմա կը խօսի.
- Ե՛ս եմ...
- «Կը խրատէ.
- Ե՛ս եմ...
- «Կարտօնէ.
- Ե՛ս եմ...
- «Կ'ազօթէ.
- Ե՛ս եմ...
- «Կը դասաւանդէ.
- Ե՛ս եմ...

«Ձայնը կարճ է ու ոչ մէկ տեղ չի
Հանդիւր, դեռ չծնած՝ կը գալարուի շար-

- ցած, նեխած չրթունքներուն մէջ, ու կը
- հեւայ, կը հեւայ՝
- Ե՛ս եմ, ես ե՛մ...

«Ամէն ժարդ կը կրկնէ յանկերգը, ու
անոր պէս, անոր հետ կը մտրի, կը չը-

քանայ: Դարեր առաջ ստեղծուած աստ-
ուածներու շուքին տակ՝ կը պաշտպանուի
ինքնիրմէ, ծուկի կու դայ, սակայն ա-
րիւն չունի՝ որ վճարէ...:

«Ես ինձի պիտի վերադառնամ:

«Պիտի չխօսիմ, պիտի չգթամ. պիտի
սիրեմ միայն, պիտի սիրեմ կեանքը,
ներկան. այս յիմար տղոց պէս սպազուն
պիտի չբեռնեմ Հոյիս վրայ, ու Հոյիս
անոր ծանրութեանը տակ պիտի չկէր,
պիտի չմենի»...»

Առաւօտը չ'ուշանար սակայն, ու
Հրանդ խոնուելով ամբոխին՝ կը գի-

տակցի, թէ ինք ալ նոյնն է, չո՛ւն մը,
նոյն քաղաքին ծնունդը, անոր չափ խը-
ճողուած, անոր չափ բարդ, անոր չափ
մութ եւ մռայլ... Ապտակուածի մը նը-

ման կը թափառի փողոցէ փողոց, համա-
լարանին մէջ, դասախօսէ դասախօս...
Վ'ուզէ տեսնել փիլիսոփայ մը:

Հիները անյոյս են: Անոնք դիրքեր կը
բանան, ընդդէմուած տողեր կը կարդան
իրեն, ապա, ջղային շարժումներով ի-

րենց ակնոցները կը վերցնեն իրենց քի-

թին վրայն ու իմաստուն եղբակացու
թիւններու կը յանդին...

Հրանդ չի համոզուիր:
Բանաստե՛ղծը... ու Հոպին կը խոս-
վի, կը փոթորկի, կը զոռողանայ,
Բանաստեղծը մեկնած է: Ինք՝ նոր-
նը, միւսներուն չափ վախկոտ, անոց
չափ թո՛յլ...

Ամբողջ համալսարանը, իր լէնքե-
րով, դասախօսներով, ուսանողներով,
քարտուղարուհիներով կը տողանցեն ալ-
քերուն առջև: Կը մտարիւէ այն տարի-
ները, զորս անցուցած է Հոն:

Ի՞նչ կայ դուրսը... դո՛ւրսը...

Ո՞վ համարձակած է մտածել այդ
մասին:

Համալսարանէն դո՛ւրս, քաղաքէն
դուրս, ինք՝ ու երկրագունտը դէժ դի-
մաց, ինք ու արեւոյ՛րքը դէժ դիմաց...

Բանաստեղծը չկայ...

Անտառոտ լեռան մը գագաթը նըս-
տած, կը դիտէ աշխարհը, հանդարտ,
ժպտեղես, աղատագրուած... Կը համ-
բուրէ հողը, քարը, կը քննայ ծաղիկ-
ներու վրայ, կ'արթննայ երբոր ուզէ:
Հորիզոնը սահման չունի գիմացը, ու կը
քալէ՝ որքան որ ուզէ... Բանաստեղծը,
Հոն, առանձին, ինքզինք գրկած կը համ-
բուրէ, կը համբուրէ, ծնած օրէն չէր
տեսած, ու կարօտցած էր ինքնիրեն...

Մեկնելէ առաջ պարտքեր ունի վճա-
րելիք... Մէկիկ-մէկիկ կը մտնէ բոլոր
դասախօսներուն գրասենեակները, ինք
նազատահ ու հպարտ կը կանգնի, ու կը
թքնէ՛ անոնց կողիկ գրասենեակներուն
վրայ:

Դասախօսները, բնազդաբար, կարծես
անմիջապէս կը պահուրտին լայն վկա-
յականներու հետև, ու կը դողան. կը
թքնէ վկայականներուն վրայ ալ, ու ա-
նոնց դրան սեժը լիզող ուսանողները
կոխկռտելով՝ կ'ելլէ դուրս, վճռակամ,
սուրբ զոռողութեամբ, անմատչելի վե-
հուլեամբ մը: Կ'ելլէ, կը հեռանայ հա-
մալսարանէն, կ'երթայ ինք իր պարը
պարելու...:

ՎԱՀԱՆ ԶԱՆՈՅԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ծնած է Սուրբոյ Հայկոյ քաղաքը, 1850ին: Երկարամյակը ստացած է տեղւոյն Ազգային Հայկազ-
եան վարժարանիւ մէջ, երկրորդական ուսումը՝ Ազգային Քարէն
Իփէէ ճեմարան: Կը գրողի ուսուցչութեամբ, հետեւելով նոյն ու-
սան Սէն Ժոզէֆ համալսարանի հայագիտական ամբիոնի գաղմ-
բացմանը:

Ա Ր Ե Ի

Լոգանք առած ներմակ գոյնով,
Այսօր արեւ պիտի գծեմ:
Բայց երբ գգամ,
Քէ արեւը չի բոլրնկիր,
Պիտի բերեմ նոր կտաւ մը
Եւ նոր արեւ պիտի գծեմ,
Իմ մատնեռուս հրով բարի
Եւ սպիտակ յամառ գոյնով
Որ քիչ առաջ արեւային յամախանքի վերածուեցաւ...

Եւ արեւը
Պիտի յարդի սուրբ խորհուրդովը հեքանա
Եւ եթէ օր մը ճաքըռտի շրջանահն իր
Անհրպելի պիտի մնայ արեւն իմ յար,
արավիեան
Քազաւարին մերկ ըլլալու նշմարտութեան
նոյն կասկածով, ու ծիծաղով մտեցող
Զնորագուած անտեմ աչքեր կը կրնն դեռ...

Բայց պաստառս արեւայեղ
Այսօր արեւ կը ծայտի,
Ամպերն արեւ կը տեղան,
Հողը արեւ կը տեմչայ,
Ծառերն արեւ կը ծլին,
Ծովն ու աստղը, վարդն ու ֆաւսը
ու տակաւին մանուկները, ազբիրները,
ձեր աչքերուն, կոյր աչքերուն պատրոյզները
Կը ճաքըռտին, կը բոլրնկին, կը հառունման եւ լիացած՝
Արեւ ու խունկ, արեւ ու սէր կ'արեւեն...

Հայելիին հորիզոնները քանդող հայեացքներով,
Ձեր աչքերը տարրալուծել ու վերլուծել
օր մը,
պահ մը,
Երբեւիցէ փորձած էք
Այնպէս՝ ինչպէս կոյրը միայն իր աչքերուն՝
Իր քանճրագոյն պաստառին արեւները կը պեղէ...
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՍՈՍԻ ՅԱԿՈՒԲԵԱՆ

ՍՈՍԻ ՅԱԿՈՒԲԵԱՆ ծնած է Լիբանանի Շքորա գիւղաւայտը, 1970ին: Նախկրրութիւնը ստացած է Պէյրութի Բարգումեան Ազգ. վարժարանիմ մէջ, երկրորդական ուսումը՝ Նշամ Փայանեան ձև. մարան: Այժմ (ուզէ՞քի (Պելճիքա) համալսարանիմ մէջ կը ետեմ) Արեւելեան լեզուագիտութեամ:

== ԵՐԿՐՈՐԳ ՊԱՏԸ ==

— Տիարրոն 18րդ դարու աճէնէն կարկառուն գրողներէն մէկն է, — հընչեց ուսուցչուհիին չոր ձայնը:

Անոր դէմ, հարիւրի մօտ ծարաւ տրդաք, անհամբեր կը սպասէին դալիք նորութեան. նոր հանգրուանի մը առջեւ կը գտնուէին ու սպասում մը կը յորդէր տնոնց նայուածքներէն. կը սպասէին կախարդանքի մը:

Երկրորդական ուսման աւարտին, Սոնա ինք եւս որոշեց երթալ Համալսարան:

Աճէն ոք այդ մասին խօսք մը ունէր բնիլիք. գործնական, շահաբեր նիւթերու կարգին, ուսուցիչներէն մէկը կատակով՝

— Դուն աղջիկ ես, Համալսարանը ի՞նչ պիտի ընես, — ըսած էր, — դնա՛, ամուսնացիր:

Իսկ բարեկամ մը՝

— Ս'ա Համալսարանէն ինչ սորվեցայ, որ դուն բան մը պիտի սորվես, — ըսաւ:

Այս բոլորը, սակայն, հաղիւ կը լսէր ինք. իր որոշումը վճռական դարձնելու Համար, կը պակսէր միայն անոր՝ իր բարեկամին կարծիքը:

— Հետեւէ քու բնազդիդ. կ'ուզես աւելի լաւ թափանցել գրքերու խորհուրդին՝ ըրէ այդ մէկը:

Ու այսպէս, օր մը, Սոնա ինքն ալ մտած էր Համալսարան կոչուած այդ անըմբռնելի խորհուրդէն ներս:

— Տիարրոն 18րդ դարու մեծագոյն գրողներէն մէկն է...

Փորձեց անկողմնակալօրէն հետեւիլ: Տրուած գնահատանքներն ու բացատրութիւնները անարձագանգ մնացին սովայն իր մօտ, տակաւին անորոշ խլրտում մը դգաց. անդիմազիծ գժգոհութիւն մը ու անձեւ դժկամութիւն մը պատեցին հօղին: Չկրցաւ հետեւիլ դասախօսութեան. իր ներաշխարհին մէջ ուրիշ փիլիսոփայութիւններու ծարաւը կար: Պատրանաթափ եղաւ: Չանձրացաւ ու քնացաւ:

Յաջորդ պահերուն, Սոնայի խանդալտութիւնը աւելի պակսեցաւ: Տիարրոյին յաջորդեց Աթենտակալը, ապա Միւսէն...

Սոնա փորձեց անոնց մօտ գտնել իր քաղաքը, անոր փողոցները, աճէն օր տեսած մարդիկը, ժխորը, լոյսերը, դովազները, մարդոց աչքերուն անձկու-

բիւր, կեղծաւոր ժպիտը նոյնիսկ, փոր-
 ձեց դռնել ինքզինքը եւ ոչինչ, ոչինչ
 դատաւայր բոլորէն: Հին աղնուականներ
 իրենց տօրեայով, փառամոլութիւննե-
 րով տողանցեցին նորէն: Անոնց շաւղը-
 ւած փառարանութիւնը շարունակուե-
 ցաւ, բոլորին «տաղանդները» միաձուլ-
 ւեցան իրարու, ուսուցիչներու ձայները
 կաղմեցին չոր ու անճոռնի համերգ մը:
 — Տիտրոս մեծ...
 — Սթենտհալ մեծ...
 — Միւսէ մեծ...

*

— Ինչպէ՞ս անցաւ, — Հարցուց Սո-
 նայի բարեկամը, երբ առաջին օրը, հան-
 դեպեցան իրենց սովորական ժամագրա-
 վայրը՝ Փնրկոյալ:

— Վա՛տ... Տիտրոս ծամծեցինք:
 Տիտր ժպիտ մը դժագրուեցաւ քա-
 րեկամի շրթներուն. չափորժեցաւ այս
 շուտափոյթ գծագրանքէն:

— Առաջին օրն է դեռ. կր վարժուիս:
 Չարժացաւ Սոնա. տարիներէ ի վեր
 իր հոգին չվարժուելու օրինակներով յե-
 ցուցած այս նոյն հոգի՞ն էր, որ հիմա
 այս ձեւով կ'արտայայտուէր:

— Սիւսլ չհասկնաս, — անդրադար-
 ձաւ միւրը իր ձգած տպաւորութեան վը-
 րայ, — չես սիրեր՝ լա՛ւ. բայց վճիռնե-
 րու համար դեռ շատ կանուխ է:

Թէն Սոնա կը հասկնար դիմացինը,
 բայց զայն կ'ընկալէր անոր կեցուածքէն:
 Տարիներ տընած էր զինքը այսպէս կըտ-
 րուկ, վճռական, յամառօրէն ինքնավրա-
 տա՛ն դարձնելու համար ու, հիմա, կը
 փորձէր չէզոքացնել իր իսկ սորվեցու-
 ցաները:

Առաջին անգամ ըլլալով, քննական
 նայուածքով մտեցաւ անոր:

Չհամոզուեցաւ: Իր աստուածները
 դժուարութիւններ կը յարուցանէին: Ու
 նոր էին անոնք, խիստ, մաքուր, հեքիա-
 թային...

Շարունակեց սակայն ներկայ ըլլալ
 դարձեթացքներուն. փորձեց գործադրել
 իրեն յանձնարարուածները, շարունա-
 կեց օրը քանի մը անգամ լսել «մեծե-

ր»ուն դողարանութիւնը...

Տասնը՛հինգ շարաթ՝ անընդհատ Տի-
 տրոս, անընդհատ՝ Սթենտհալ, անընդ-
 հատ՝ Միւսէ... Միւսէ, Տիտրոս, Սթենտ-
 հալ... Սթենտհալ, Միւսէ, Տիտրոս...

— Տիտրոս... — սկսաւ ուսուցչու-
 հիին ձայնը, ու դէժքի քմծիծաղին մէջ
 պատկերացան միւս բոլոր ուսուցիչնե-
 րուն անօրինակ յանկերգները. քմծիծա-
 ղը ստացաւ արհամարհանքի բնոյթ մը՝
 ուղղուած հոն, այդ ուսուցչուհին ու
 միւսները մտիկ ընող հարիւրի մօտ տղոց
 հասցէին:

«... 30 տարեկան տղան եօթը տարի
 առաջ սկսաւ գրել «Է՛ր փրօտ վերպալ»
 վէպը եւ եօթը տարուան մէջ գրեց եօթը
 դիրք ու

«... Փշրեցէ՛ք տպակիներ...»
 — Տիտրոս մեծ գրող մըն է...

... «Քաղցկեղտարմիրու տաղաւա-
 ր»ին մէջ մարդ մը յուսահատ ճիւղ մը
 արձակեց: «Քաղցկեղտարմիրու տաղա-
 ւար»ին մէջ մեռնող այդ մարդուն հալ-
 ւայն յուզում մը լեցուց Սոնայի սիրտը,
 հարստացուց զինք, մինչ՝

— Սթենտհալ մեծ գրող մըն է:
 — Միւսէ՛...

Սիզիֆի ուտերուն ժայռը գրած հե-
 ղինակը դառն ժպիտով մը մասնակցեցաւ
 իր ձանձրոյթին: Սիզիֆի հեղինակը գը-
 թաց այդ տղոց:

15 շարաթ անընդհատ, հին հեղինակ-
 ները բոլոր ձեւերով հոլովուեցան ուսու-
 ցիչներու բերնին մէջ, ու անոր դիմաց,
 մօտ հարիւր հոգի, ու անոնց հետ Սոնա,
 պարտադրաբար կամ ոչ՝ ծծեցին այդ
 գնահատանքները:

Սոնա յաճախ խուսափեցաւ, իր
 ռազմախիտներուն հետ տառապեցաւ,
 տպակիներ փշրեց. ուրիշ օր մը՝ «անիծ-
 քալ քանաստեղծ»ին հետ հաշիւով ու տա-
 րաշխարհիկ զգայնութիւններով գինով-
 ցաւ եւ, շատ յաճախ, իր ընդզգումը
 պարփակեց ուրիշ սիրելի մը այնքան ա-
 նիմաստ, բայց հրապուրել մէկ տղին
 մէջ...

«Un Certain Blaise Pascal, etcetera...
 etcetera...»

✱

Լճի շարժքը, Տիարըն ու իր հոյ-
լը դասարանին մէջ դարձան ախրական ւ
Երեսուն տարեկան տղան մրճահարեց ա-
ւելի ուժգնօրէն.

«Փշրեցէք ապակիները, ազատազրե-
ցէք դուք ձեզ, ազատագրէ՛... փշրէ՛,
փշրէ՛, փշրէ՛...»

«Տիարըն մեծ...» ու յանկերգը ար-
ձագանցեց՝

«Սթենտալ մեծ...»

«Միւսէ մեծ...»

Յանկերգը վերածուեցաւ ժխորի, ըմ-
բոսապոսի ախրք անեցաւ իր մէջ. ժր-
խորը խլացուց զինք. «Տիարըն մեծ...
մեծ... մեծ...»

— Յիմա՛ր մը... — պոթկաց յան-
կարծ Սոնա իր անկիւնէն:

Շուրջինները բան չհասկցան. իր լե-
ղուն անձանոթ էր անոնց:

Ապա, արճամտրհելով ուսուցչուհին,
վաղեց դուրս՝ բակ, բակէն ալ դուրս՝
հեռացաւ...

Երկար թափառեցաւ փողոցներուն
մէջ. տարօրինակ զգացում մը տիրած էր
իրեն. մթնոլորտէն դուրս ապրողի մը պէս
թեթեւ կը զգար ինքզինք. կը քալէր, ու
քայլերը թափլթի մը տպաւորութիւնը կու
տային իրեն. ծանրութեան ո՛չ մէկ զգալ-
նութիւն կ'ունենար, ծանրութիւնը զէրո-
յի իսկ հաստար չէր:

✱

Իրիկոսան դէմ, Սոնա գնաց Փերկո-
ւա, ուր պիտի սպասէր իրեն իր բարե-
կամը:

— Տիարըն չկայ, մեռա՛ւ, — ըսաւ
Սոնա յուզուած:

Միւսը շիտեցաւ, շարունակեց ըստ
հետեւի:

30 տարեկան տղան հրճուեցաւ. մէ-
կը յաջողած էր փշրել ապակի մը...

— Ակայ, մեռա՛ւ, մեռցուցի՛... —
ճշաց անգամ մըն ալ:

Արագ պատմեց տպաւորութիւնները,
չնչապառ եղաւ, յորդեցաւ հրճուան-
քով:

Շոք մը անցաւ բարեկամին աչքերէն
այս խենթութեան ի տես. ըստ հանդե-
ցաւ սակայն այդ շողը...

Ահռելիօրէն նիւթական հարցում մը
սարսոացուց Սոնան.

— Իսկ հիմա, ի՞նչ պիտի ընես...

Դառնացաւ Սոնա յանկարծ, օտա-
բացաւ դէմինը.

— Ձե՛մ որոշած տակաւին:

— Վերադարձիր ուրեմն... եւ փոր-
ձէ հասկնալ:

Բեկուեցաւ յանկարծ. չէր սպասը
այս կեցուածքին. դառնացաւ դիմացինը:

Ազնուականներու եւ նիւթապէս բա-
ւարարուածներու տպաւորութիւնը ձգող
մարդոց բանակ մը լեցուց Փերկոյան:

Միծաղեցաւ, ծաղրեց զինք ու իր անձ-
կութիւնը: Անոնց հեղանական ծիծաղը
արձագանգեց իր մէջ, մեծցաւ, ծուռլե-
ցաւ, լեցուց մթնոլորտը:

«Բաղցկեղաւորձները քիչ մը աւելի
դունտեցան. ափրիկեան արեւը կորու-
ցուց իր կիզիչ ուժգնութիւնը. 30 տարե-
կան աղան ուղեց փշրել բարձրացող երկ-
րորդ պատր...»

Փերկոյան փոքրացաւ յանկարծ, օղը
խտացաւ, թանձրացաւ:

Սոնա շիրջաւ շնչել, շիտեցաւ...
վաղելով հեռացաւ:

Գլխիկոր թափառեցաւ քիչ մը. հա-
զիւ քալել սորված՝ ահա, ամբողջու-
թեամբ առանձին կը մնար:

Վհատեցաւ...

Վերապտաւ ինքզինք շատ շուտ...
Իր աստուածներուն յամառութեան
առջև՝ նոր քաղութիւն մը թափ տուաւ
իրեն...

Հոգիին մէջ թէեւ թեւաբեկ բան մը
կծկուեցաւ, սարսոաց ցուրտէն ու հրճ-
ծեց, բայց Սոնա՝ նոր որոշումով վերա-
դարձաւ...

Իր աստուածները պէտք ունէին ի-
րեն...

ՍՕՍԻ ՅԱԿՈԲԵԼԷՆ

ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ

ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ ծնած է Պէյրուք, 1932ին: Նախկրթութիւնը ստացած է Պէյրուքի Քառասուն Մանկամեջ վարժարանին մէջ, երկրորդական ուսումը՝ տեղւոյն Սոփիա Յակոբեան գոյէն: Կը գրագի ուսուցչութեամբ, հետեւելով ճոյն ասնն ՍԷՄ ժողովի համալսարանի ձայնագրական ունեւորի դասընթացներուն:

ՈՐՊԵՍՉԻ ՄՆԱՍ...

Վաղն առաւօտ իսկ,
Ափերուս սեղմած
Տաք ատրճանակ՝
Փողոց պիտ' իջնեմ
Ու պիտի բախեմ
Այս չար աշխարհի
Բոլոր դուռները,
Որպէսզի գտնեմ,
ես բոլոր անոնք,
Որ կը կանչուին
ձիջող քու անունով,
Որպէսզի տեսնեմ
ես բոլոր անոնք,
Որ ինձ կը ժպտին
Ա՛յս, քու ժպտով,
Որպէսզի ճշդեմ
ես բոլոր անոնք,
Որ կրնան նայիլ
Բիբերուն մէջ իմ
Քու սո՛ւր նայուածքով,
Քու սո՛ւր նայուածքով:

.....
Ու երբ որ գտնեմ
Այս բոլորն՝ այո՛,
Ա՛յ պիտի ջնջեմ
Այդ մէկ անունը
Աշխարհի բոլոր
Բոլոր ցանկերէն,
Պիտի խորտակեմ
Այդ խենթ ժպտը
Որ խենթեցունել
Կրնայ պի՛ս միայն:
Պիտի ջախջախեմ
Այդ բոց աչքերը
Որ կրնան ծակել
Իմ բիբերը լոկ,
Այս բոլորն՝ այո՛,
Որպէսզի օր մը,

Չըլլայ որ ապրի
Ոչ իսկ մէկ անհատ,
Որ կը յանդգնի,
Ըսելու ինձի,
Թէ՛ ինքը, արդէ՛ն
Օ՛հ, ինք կը կուտ
ձիջող քու անունը.

Ու ինք կը փորձէ,
Ժպտիլ այն հուրով,
Որ քուկը է միայն,
Ու ինք կը նայի,
Աչքերով իր վոյգ
Բիբերուն իմ հուր,
ձիջող նման բեպի:

* *

Չէ՛, չկայ, հոգի,
(Պէտք չէ որ ըլլայ)
Ոչ իսկ մէկ հոգի,
Որ իր անունով,
Որ իր աչքերով,
Իր հմայքներով
Կամ քմայքներով
Քեզ յիշեցնէ ինք:
Ու դեռ միշտ այսպէս,
Ատրճանակս,
Սէրըս ու եսս,
Երեքս ալ՝ «հոգի»,
Չար հոգիներու մեծ ոճրագործներ,
Մեծ հոգիներու խենթ ոճրագործներ,
Պիտի շրջինք միշտ,
Մինչեւ որ գտնենք,
Շուտով սպաննենք,
Ու ոչինչ գտնենք,
Այ սպաննելիք:
Որպէսզի մնաս եւ դուն անմահ:

ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԵՐԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԵՐԵԱՆ ծնած է Սուրբոյ Հայկա Բագաւը, 1851ին: Նախակրթութիւնը ստացած է Պէրթաքի Ազգային Կիլիկեան վարժարանին մէջ, երկրորդական ուսումը՝ տեղւոյն Սոփիա Յակոբեան զարէն: Կը հետեւի Պի. Պի. Էս. վարժարանի շարունակ մեթոններու մասնագիտութեան:

Գ Ի Շ Ե Ր - Ց Ե Ր Ե Կ

ձերմակ ջուր կայ ոչ քերուս մէջ

— Անրուժելի —

Շաղը, կարօտի շողմ համբուրելով կը մատնէ

Գեմքեր, մարմիններ, ձեւեր

Անկարելիօրէն այլանդակ, սքանչելի, տխուր...

Աշխարհի մը դէմ անհազորդ

Ինքնուրանգում ես կը դառնամ

Ու շուկներ կը փնտռեմ:

Մեծութիւնը

Հին բարեկամի մը նման

Կը բարեւէ

Ու կը սպռակ գիշերուան, որ կ'ուշանայ:

Քաղաքը լոյս է հիմա:

Իբրեւ կաթը լուսինի՝

Կը սփռուիմ ամէնուր

Կը թափիմ՝ ննջող

Մերկ մարմիններու տխրութեան վրայ,

Երազի, հանգստութեան

Եւ միմակ մարդոց:

Օ՛, լուծուած եմ քաղաքին մէջ,

Որ ծովու ջերմ աւազներուն

Կարապի հման գլուխը խրած

Խոկումներու սնորոշ հեռուները կը դիտէ:

Իրանք եմ այս խաւարին,
 Որ խաւար չէ երբեք... Ինձ մէ
 Բխող չեմ տխրութիւն,
 Ինձ մութայն աշխարհ քափանցիկ,
 Որ կը կերտէ շարունակ
 Ձիւ: Տուչերու կատակամով
 Արեան երակներ կը ճիւղաւորէ:

Ու ցերեկը կը խտամայ.
 Աստուղ՝ այլանդակ, պատկերները պիտի գծէ
 Համադրումին.

Հասարակաց գիծը կը կազմուի
 — Կշիտը —
 Անհատականութիւններ, ձեւեր, պէտք է շնչունին
 — Կշիտը —

Ի՞նչ կը մնայ, ի՞նչ կը մնայ:
 Կինք՝ փուշեր կը ծագվեն:
 Ձորցած փուշեր: Կը ներկեն
 Կը գետեղեն քաղարներու մէջ հողէ:
 Ինձնախաբէտութեան, երջանկութեան
 Հագար անգամ փարձուած
 Իմաստագուրկ ծագիկներ:
 Հանգստութեան հիւանդապահ սենեակներ:

Երկիրը ծածկուած է միտերով:

Ճերմակ ջուր կայ աչքերուն մէջ
 — Անբուժելի —
 Քանի՞ տարի տակաւին
 Պիտի կրնամ ապրիլ այսպէս:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐՆԱՆ

ՀՆԱԶԱՆԴ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՀՆԱԶԱՆԴ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ ծնած է Լիբանանի Թրիփոլի թաղաքը, 1951ին: Նախակրթությունը ստացած է Պեյրաիի ազգային վարժարաններում մէջ, երկրորդական ուսումը՝ Օսփիա նահանգում գոլէժ: Կը գրադի ուսուցչութեամբ, հետեւելով նոյն ասան մանկավարժական դասընթացներու:

Յ Ե Խ Ը...

Փողոցներու տաժանելի ազմուկ: Մարդիկ կ'երթեւեկեն: Կ'երթեւեկեն իրարու հետ, իրարու նման: Անի կը փորձէ ձուլուիլ անոնց դէմքերու մոայլութեան մէջ: Այդ մտայն դէմքերը պիտի արձանացնեն իր դէմքն ալ:

Ու Անի տաղտկալի իրականութեան ծանրութեան տակ՝ կը փախէ՝ դիտելով սեւ ու մրուտ պատերը:

Տուփ մը կ'իյնայ գետին, փոքր ու տժգոյն լուցկիի տուփ մը, անիկա սպրդած էր նեղ պատուհանէ մը դուրս. պարտալ էր՝ բոլոր անարժէք առարկաներուն նման:

Անի խնամքով կը վերցնէ գայն գետնէն, աչքերը կը խորասուզուին անոր նեղ անկիւններուն շուրջ, կը փնտռէ փայտի կտոր մը. ժամանակին անոր մէջ գետնադուռ փայտի կտորներէն մէկը. կը փնտռէ՝ քսելու համար գայն դուրսի չոր տախտակին, որպէսզի վառի ու ցուրտ փողոցներու մութ անկիւնին մէջ Անիի հագիին պարփակուած մեռելային ցրտութիւնը փարատի փոքր լուցկիին ճառագայթումին ներքեւ:

Տուփը դատարկ է. Անիի աչքերը կը մեծցնեն անոր անկիւնները. տուփը կը մեծնայ, կը տարածուի, կը նմանի իրենց տան, այն մեծ ու անկիւնաւոր տան, ուր օրերու դանդաղ սպառումին հետ շրջած էր Անիին՝ փնտռելով փոքր ճրագ մը, զգալու մեղմ լոյսի մը տախտակները:

Կատու մը կը վազէ. շան մը հաջոցը կը հետեւի անոր քայլերուն, երկուքը կը վազեն իրարու հետեւ արագ, անընդհատ: Անոնք պիտի վազեն միշտ, բերելու պիտի հանդիպին իրարու, կամ պիտի վազեն շարունակ, սա-

կայն անխուսափելիորէն, յարատեւօրէն պիտի ապրին իրարմէ վախճուլու ու փախչելու տառապամբը:

Տուները հանգչած են իրարու մօտ. լռչի մտառայթմերուն ստուերը կը տարածուի փողոցի սեւ սալաշաղկի վրայ: Կատուն ու շունը կ'անհետան: Անի կը քալէ:

Հին պատկերներու ցնցոտիացած յուշերը կու գան գարնուելու սուսներու պատերուն: Անի կը դիտէ: Մափաւարութիւններու տարափ մը կը խլացնէ իր փոքր ակնջները, ձայները կու գան կենդանացնելու պատերու պատկերները: Անի կը ձուլուի անոնց մտերմութեան մէջ: Անոր պրկուած դէմքին վրայ կը սաւառնի մեղմ ժպիտ մը: Այդ պատկերներուն մէջ կը դիտէ փոքր «Անի»-ն: Ան հիմա կը բարձրանայ բեմ: Մայրը ձեռքերը կը սեղմէ. արդունքի կաթիլներ կը սահին մօր մաշած ձեռքերուն վրայ ու այդ արցունքներու ողորումով ան կ'ապրի իր փոքր ազգկան մեծ ուրախութիւնը:

Պատի մը տակ կանգնած, հանդիսարանի գեղեցիկ մթնալարին մէջ՝ Անի կը գտարհանայ ու իր աչքերուն փայտակունով լուցիլի փոքր տուփը կը տեսնէ լեցուն, կը զգայ անոր ծանրութիւնը. իր մանկութեան շրջանին տուփը եղած էր միշտ այդպէս: Անիկա շէնքի մը պատերուն վրայ ստղծուած սարդած էր պատուհանէ մը ներս ու իր փոքր կայծերով լուսաւորած էր շուրջը, ուրախացնելով բոլորը:

Պատկերները անհետացած են: Անիի դէմքը կը պրկուի: Ան այդ պատկերները տեսած էր յաճախ: Յիշած էր գանձէ ա'յն օրէն սկսեալ. երբ ինք անկարող եղած էր ստեղծել նոր պատկերներ: Անցեալէն փոխուցուած ու անցեալը յիշեցնող պատկերները ձուլուած էին իր մտքին մէջ. խեղդած էին զինք ա'յն աստիճան, որ օր մը, բոլոր օրերէն տարրեր օր մը, երբ ան ուզած էր քանդել անցեալը, փշրել գայն իր ձեռքերուն մէջ. ստեղծելու համար ներկայ մը, քարոս ու հանելի ներկայ մը, իր երկտաւարութիւնի սանչերը ամբողջացնող ներկայ մը. անս' այդ օր, ան կարսնցուցած էր ամէն ինչ: Սկսած էր պայքարիլ իր մէջ ստեղծուած հասանքներուն դէմ, պայքարած էր ա'յն աստիճան, որ իր փոքր հոգիւն ու տան սահմանափակ շրջապատը անկարող եղած էին պարփակել զինք, ու Անի իջած էր փողոց:

Փողոցը ցուրտ է:

Անի նստած է գետին, տան մը պագ սեմին վրայ: Ոչ ոք պիտի չլլէ դուրս: Ուրախութիւնը ա'յնքան խանդավառած է մարդը ու միօրինակութիւնը ա'յնքան միօրինակ դարձուցած է անոնց կեանքը, որ ոչ ոք պիտի համարձակի զինք շրջապատող ցանկապատէն դուրս գալ:

Անի կը դիտէ մամբան:

Իր ու մամբան միջեւ տեսնուող մտերմութիւն մը հաստատուած էր:

Տասնութ տարիներու երկար վազ մը կատարած էր այդ մամբան: Այդ չոր մայրիկն վրայ քալած էր, դիտած էր շուրջը, յափշտակած էր ամենուն ամէնօրեայ տրամադրութիւնը: Խանութներու կարգաւարումը ու վաճառորդներուն պատկերները կը տեսնէր տակաւին փողոց չելած ու երբ սկսէր այդ մտերմութիւն մամբան քալել, իրեն այնպէս կը թուէր, թէ կեանքն էր, որ կը սկսէր հոս՝ վերջանալու համար օտար ու անձանօք աշխարհ մը...:

Փողոցը քարքարոտ էր. մարդիկ շտկեցին:

Փողոցը ազտատ էր, մարդիկ մաքրեցին:

Անոնք ազմկատ քաղաքակրթութիւն մը ստեղծեցին այդ անմեղ փողոցին մէջ, քալեցին ա'յնքան երկար, որ անիկա կրկին ազտատ ու քարքարոտ

դարձաւ ու սպասեց, մինչեւ որ գան ուրիշներ, նորեր, մաքրելու եւ կրկին յստակացնելու համար գայն :

Անի իջած էր հոն ամէն անգամ, որ տան ծանրութիւնը զգացած էր իր վտիտ ուսերուն վրայ : Ամէն անգամ, երբ ուզած էր փախչիլ մարդոցմէ, ինքզինքնէն, ուրիշներու ձեռքերով կերտուած ու իրեն համար գրուելի դարձած իր իսկ պատկերէն : Ու ահա այդ նզնաժամային վայրկեաններուն փոփոցեց երբեւեկները՝ նա՛յն մարդերը սեղմած էին զինք իրենց միտմանը : Անի ուզած էր խալել ազատ, սակայն կարծես գետինը իր մագնիսական ուժով եկած էր ուղղելու իր ճայները հո՛ն, ուր ամէնքը կ'ուզողէին :

Ան ուզած էր վայրկեան մը կանգնիլ, չխալել, թայց անցորդներու նայածները ուղղած էին զինք շէշի իր նակատագրական ուղին :

Այս գիշեր փողոցը ամայի էր ու մերկ :

Այս գիշերուան մթութենէն օգտուելով՝ ան կու գար նշողելու իր ու փողոցին միջեւ ստեղծուած հին մտերմութիւնը :

Ոչ ոք կար դուրսը : Հիմա փողոցը գերծ էր մարդոց ազդեցութենէն ու առաջին անգամ ըլլալով՝ ան կը զգար ազատութիւնը, ազատութիւնը փողոցին հետ ըլլալու, ինք իր հետ ըլլալու :

Գետինը խոնաւ է :

Տեխի կոյտեր կան ամէն կողմ :

Անի կը մտնեայ ցեխին, ձեռքերը կը մխրճէ անոնց խոնաւ անկիւնները, անհամդարտ շարժումներով կը խառնէ այդ խոնաւ գունտերը՝ փողոցին կզերբը հաստատուած լոյսի նառագայթներուն տակ :

Կուտակուած այդ ցեղը դէմքը կը պատկերացնէ :

Հին օրերէն յառնող փոքր ազգկան մը դէմքը :

Անից է այդ, փոքր Անին :

Անի կը դիտէ իր դէմքը - լոյսի նառագայթները կ'իյնան ցեխի կոյտին, դէմքի բոլոր անկիւններուն : Ու այդ լնացած անկիւններուն մէջ՝ ան կը փնտրուէ փոքրիկին աչքերը, ու այդ աչքերու լայն խոռոչներուն մէջ լոյսի նառագայթները կը խեղդուին . կը խրին ներս, տեսնելով՝ թէ դէմքը աչք չունի ու այդ խոռոչները խոնաւ են ու մուրճ՝ փողոցի բոլոր անկիւններուն պէս :

Անի նստած է պատկերին դիմաց : Քիչ ետք պիտի անձրեւէ, հովը պիտի փչէ : Արեւ պիտի ըլլայ, մարդիկ պիտի անցնին, ծամօթները, քարեկամները, մայրը, հայրը, բոլորը...

Անոնք պիտի ժպտին, պիտի պարեն եւ ուրախանան մարդու մը ամբողջ ուրախութեամբ . թերեւս պիտի լան ու գայրանան, թայց փոքր Անիի ցեխէ արձանը պիտի մնայ անշարժ : Ան աչքեր չունի, որ տեսնէ շուրջը թաւալող հոսանքներուն ստեղծած հետաքրքրութիւնը :

Անից եղած էր այսպէս, այդ ցեխէ արձանին պէս : Արձանին կուրտութիւնը կուրցուցած էր շրջակայքը : Ամէն մարդ սիրած էր այդ մեռելային ու անհազարդ արձանը : Անի դիտած էր շուրջը՝ առանց շան մը տեսնելու . այդ կոյր աչքերը միօրինակութիւն մը ստեղծած էին իր մէջ ու լուսաւոր առաւուտ մը, երբ գարնան գուարթ տեսիլին պէս կենսաբան սկսած էր ժայտիլ իրեն, երբ մարդիկ իրենց իսկ ձեռքերով աչքեր գտնեղած էին այդ ցեխէ արձանին մուրճ խոռոչներուն մէջ՝ Անի վատ խլրտուտ մը զգացած էր : Հիմա այդ ցեխէ արձանին լուսաւոր աչքերուն դիմաց ոչ ոք կը համարձակէր պարել, խնդալ, լալ : Ամէն ինչ խեղդուած էր այդ աչքերու փայլատակուտին ներքեւ . խեղդուած էր նաեւ իր ցեխէ անհաղորդ դիմագիծը :

Աչքերը սկսած էին պայտարիլ ցեխին դէմ: Անի իր լայն օչքերը մխր-
նած էր մտերիմներու գեղեցիկ աչքերուն մէջ ու առաջին անգամ ըլլալով
զգացած էր անոնց նայուածքներուն տախտիւնը:

Կեանքը ձմրան մտայլ գիշերուան մը նման պիտի նեղէ խեղճ ու ան-
մեղ խրմիթներու հանգարտութիւնը աւ պիտի առաջնարդէ գանձի դէպի լու-
սաւոր ու գեղեցիկ փողոցներ:

Ու անա այդ փողոցներուն մէջ նայն մարդոց ձեռքերով պիտի ստեղ-
ծելի տառապանքը: Անոնք ընդարձակ դաշտերու մէջ հոռոտներու անհաւա-
սարակչութեան տակ պիտի պայտարին, պիտի պայտարին վաղանցուկ իրա-
կանութիւններու դաժանութեան դէմ, պիտի պայտարին իրարու դէմ, պիտի
պայտարին պահելու համար իրենց ինքնութիւնը, վերադառնալու իրենց
նախկին վիճակին ու լալու անոր քաջակայութիւնը:

Տարիներու ազդեցութեամբ ու փորձառութեամբ շաղախուած ու ան-
նոց բրտութեամբ կերտուած այդ կոշտ ու միօրինակ ցեխը, որ իր ստե-
մաննայն մէջ պարփակած էր Անին ու դժոխային աչքերու խանդավառու-
թենէն վրդոված՝ պայտարած էր անոր մատղայ հագիին հետ: Պայտար մը,
որուն ընթացքին Անի պիտի չփափաէր խորտակել իր մէջ ստեղծուած ան-
շունչ պատկերը, խորտակել ցեխը, կո՛յր ցեխը: Ու այդ պայտարէն ու օրե-
րու ձանձորայթէն փախչելու եւ իր աչքերու լուսաւորութիւնը տարածելու
համար՝ գիշեր մը, տառապալի՛ գիշեր մը, Անի զգաց կոյր գարնան մը հեւ-
քը...:

Յուրտ է:

Անի կանգնած է հոն՝ փողոցին մէջ:

Տերու մը կ'իյնայ գետին: Չար ու փօքր տերու մը, որ կը փշուրի փո-
չոցի կարծրութեան վրայ:

Անի կը նետուի ցեխին վրայ, ցեխի կոյտը չոր տերուի մը նման կ'իյ-
նայ գետին: Աչքեր կը մնան հոն, վերը, այդ բարձր ծառին նման, որմէ
փրթած էր չար տերուը: Աչքերը իրենց մերկութեան մէջ կը վազեն՝ փնտռե-
լու հին ու մաշած ձեռքեր, որոնք հաստատած էին այդ աչքերը հոս, այդ
ձեռքերը ուզած էին տեսնել աչքերու ուրախութիւնը, բայց իրենց ակնկալու-
թիւնը մնացած էր կոյր, որովհետեւ աչքերը որոշած էին չժպտիլ ա՛յնքան
ատեն, որ ցեխը գոյութիւն ունէր:

Անի փնտռեց այդ ձեռքերը: Զարկու մութ դուռներ ու իր գարկին ար-
ձագանգը լսեց միայն. յառաջացաւ ու իր յառաջացումին մէջ մնաց միշտ
նոյն տեղը:

Աչքերը յոգնած էին:

Անի իր աչքերու գայրայթին մէջ խեղճած էր ու հանգարտեցուցած ու-
րիշներու պրկուած դէմքերը, որոնք, հիմա, ցեխեր դարձած՝ նստած էին
տան մութ անկիւնները:

Ցեխը տերուի մը պէս ինկաւ: Անի կ'ուզէ տեղաւորել աչքերը արձանին
վրայ: Արձանը կը կանգնի. բայց աչքերը կը մնան միշտ վեր: Կը խորտակէ
արձանը, կը շինէ ուրիշ մը ու անա նայն միօրինակութեամբ ցեխն ու աչքե-
րը ելեկարական հոսանքներու նման կը վանեն գիրար:

Անի բալթըսկին միճակ մնաց:

Ան իչած էր փողոց՝ խորտակելու համար իր մէջ անած փօքր ու ան-
մեղ ազդեցած մը պատկերը: Ինք ուզած էր խորտակել փողոցը, որովհետեւ
անոր տաղալայի իրականութիւնները սկսած էին փօքր գեղեցկութիւններ
ստեղծել ամէն կողմէ: Անի հարաւաճած էր գանձի գետնէն, շքեղալայէն, ամէն

անկիւնէ ու այդ գեղեցկութիւններով գինովցած՝ փորձած էր փշրիլ ամէն ինչ. որ կրնար խլացնել ու դարձնել զինք անփոյշ :

Այս մութ գիշերին Անի ելած էր տունէն, որովհետեւ հան կար պարտակաւարտութիւններու անուծելի կոշտ մը: Ան իբր իր փոքրոց՝ փնտտելու կեանքի, ապրելու ազատութիւնը ու ամայութեան մէջ կեանքին ստեղծած պատկերները, օրերու եւ տարիներու հեռավոր չէին կրնար ոչնչացնել զիրար: Յետի պատկերը պիտի մնար միշտ աչքերէն հեռու ու ինք պիտի ապրէր յարստութիւն գտնուող նոյնացնելու տառապանքը՝ այն շահն ու կատուի մտան, որովք էիլ առաջ փողոցի ամայութեան մէջ եկած էին հալածելու զիրար ու պայքարելու այնքան ատեն, որ ճակատագրակաճորէն կը զգային իրարու դէմ պայքարելու ապրումը:

Գիշերը կը կրճէ ծամերը ու կը մխրճուի իր զգեստին մէջ:

Անի համբան կը շարունակէ, կ'ուզուի տուն:

Տեխ չկայ այլեւս: Չկան նաեւ աչքերը: Պայքարը հասած է իր վանհանին. էիլ ետք պիտի սկսի նորը: Անի կը մտնէ տուն:

Ոչ ոք անհանգիստ կը զգայ ինքզինք:

Մայրն ու հայրը նստած են:

Սեղանին վրայ մամեր կը վառին:

Անի անոնց տախտակներ կը մտնի:

Օրացոյցը կախուած է դիմացը, ամսուն 26ն է, Սեպտեմբեր 26. իր ծննդեան օրը:

Մամերը պիտի մարին:

Անի կը վազէ, կը պարփակէ գտնուող իր ձեռքերուն մէջ, կը դիտէ հօրն ու մօրը հանգարտ գէտները, կը սպասէ անոնց պրկումին, սակայն ամէն ինչ հանդարտ է՝ աւագին նման:

Անի շրջապատած է մամերը: Ան բնաւ պիտի չմարէ գտնուող, անոնք պիտի վառին ու ինք, անոնց մօտ, պիտի մնայ երկար, մինչեւ որ այդ լուսաւոր մամերու տախտակներ ձուլուի իր մէջ ու անոնց տախտակներ մօրն ու հօրը դէմքը այրի. պրկուի՝ պահելու համար Անին իրենց մօտ...:

ՀՆԱԶԱՆԴ ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ



ՆԱԶԱՐԷԹ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՆԱԶԱՐԷԹ ՊԵՐՊԵՐԵԱՆ ծնած է Սուրբայ Հայրոց Բաղաբը, 1951ին: Նախակրթութիւնը ստացած է Պէյրուսի Աճառ Գոսար-Յեան վարժարանին մէջ, երկրորդական ուսումը՝ սեպտեմբր 1968ին Յակոբեան գոյէն: Այժմ կը յաճայի Լիբանանի պետական համալսարանը, Եստեպոլ լրագրութեան:

Յ Ա Ճ Ա Խ Ա Ն Վ

Բառերու մէջ մեծ կ'ապրիմք
 Ու ազնուի մէջ կորսուող շշուկներու նման որբ՝
 Լուսանցքային կարօտներու կը փարիմք
 Ու հետքերու, ստուերներու մէջ թաղուած
 Հին-հին յուշեր,
 Հին-հին կանչեր,
 Օր ու գիշեր կ'որոնանք,
 Կը պարպուինք խորութենէ, թռիչքէ
 Ու պերճաշուք քաղերու տակ՝
 Մեր խորհուրդին,
 Մեր խեղճութեան մերկութիւնը կը ծածկենք.
 Ու մերժուած, անշահեկան կոյսի նման
 Խոտայներու
 (Մեր բառերուն)
 Մէջ կ'ամփոփուինք,
 Աչքերու մէջ կ'ապաստանինք
 Ու լռութեան
 Եւ գոյներու
 Ենթադասին մէջ ոտնակոխ
 Մեր հին գոյնը,
 Մեր հին լռութիւնը,
 Ուրիշներու փշրանքներուն մէջ կը խառնենք
 Եւ աշխարհի, տիեզերքի ահագնութեան դէմ դողալով՝
 Լռութի շերտեր
 Ու գոյներու քառակուսի կառայցներ
 Մենք կը շարենք կողմ-կողմի,
 Մենք կը շարենք գէմ յանդիման, ուսուցի
 Ու անոնց թաց հայելիին մէջ նայելով՝
 Կասկածներու ինչ-որ խաղով,
 Սարսուտներու ինչ-որ պարով,
 Համբոյրներով, գգուամէներով, զուգորդութեամբ կ'արբենանք
 Ու կը փախչինք՝
 Արմատներու կարծրացումէն,
 Ճիւղերու մէջ ծլարձակուող աւիշէն,
 Տերեւներու արգանդին մէջ պտղաւորուող համբոյրէն
 Կը սարսափինք՝
 Մեր էութեան ջերմութենէն,
 Մեր ֆայերուն, հարուածներուն ժայթքումէն,
 Մեր ջիւղերուն, մեր արիւնին, մեր սերմերուն խլրտումէն.
 Ու երկունքի ժամը երբ գայ
 Կա՛մ կը մեռնինք.
 Տանկարծօրէն կ'անշնչանանք
 Եւ կամ ամուլ խամախիկներ ու հոսպիտներ կը ծնինք...

ՆԱԶԱՐԷԹ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ք Ն Ա Ր Ժ Ի Ն Պ Ա Շ Ե Ա Ն

ՔՆԱՐ ԺԻՆՊԱՇԵԱՆ ծծած է Սուրբայ Հայկոյ Բագսը, 1951թ.՝
Կախարհաբանը ստացած է Պէյրուքի Փառասուն Մանկանց
վարժարանին մէջ, երկրորդական ուսումը՝ տեղւոյն Սոփիա Յո-
կոբեան գոլէն: Այժմ կը յամախէ Հայկագեան գոլէն, հետեւեղով
անգլիական գրականութեան:

Մ Ա Ն Ո Ւ Կ Ը . . .

Երազիս մէջ մանուկ մը մեռաւ:
Ես կը կարծէի, որ մանուկները կը ծնին ժիւն:
Զլացի անոր համար. առի դայն գիրկս, փորձեցի տաքցնել,
բայց չկրցայ. . .
Իջայ փողոց, Վերադարձայ՝ կնոջ մը սիրտը ձեռքիս: Մա-
նուկը շտաքցաւ, մնաց անշարժ: Պահեցի մարմինը, որ մարմին
մը չէր. ան չէր ապրած, ուրեմն չէր կրնար մեռնել: Հարկ էր
կեանք տալ անոր, ապրեցնել, մեծցնել: Մեծցնե՞լ: Յետոյ բոլո-
րին պէս կ'ըլլար, ան ալ կը մեռնէր: Մեծերը կը մեռնին:
Մանուկը շարժիլ սկսաւ, բացաւ աչքերը, գոցեց դանտնք:
Զյուսահատեցայ, ան պիտի ապրէր, թէեւ դժուար, բայց
անպայման պիտի ապրէր:
Շրթունքները շարժեցան, «կեանք» աղերսեցին անոնք:
Նոյն ատեն զգացի, որ բան մը ծնաւ կուրծքիս տակ, մեծցաւ,
մեծցաւ ա՛յնքան, որ իր մէջ առաւ զիս ու մանուկը՝
Սիրտս:
Սիրտս բռնեց մեր ձեռքերէն եւ տարաւ փողոց: Մանուկը
աշխոյժ էր, նոր ծնած էր ան, ոչինչ չէր տեսած, ոչինչին մէջ
անգամ բան մը տեսնել կ'ուզէր, կ'ուրախանար, կը յուսար, կե-
րազէր: Ի՞նչ լաւ, որ ապրեցաւ այս պզտիկը, թող միշտ մօտս
մնայ՝ իր եռանդով, իր ժպիտով, վերջ չճանչցող իր յոյսերով:
Ան պիտի մեծնայ:
Կը սարսափիմ այդ հեռանկարէն: Կ'ուզեմ արգելել իր ա-
ճումը. . .

Թող մնայ այսպէս, մանուկ, իր պզտիկ աշխարհին մէջ:
Թող չմեծնայ, մեծերուն աշխարհը մեծ է եւ լաւ չէ:

Մեծերու աշխարհին մէջ համեմատութիւնները խախտած
են. վիշտը մեծ է, ուրախութիւնը՝ փոքր, ծնունդը քիչ է, մա-
հը՝ շատ:

Դիմացի մայթէն կիւն մը եւ մարդ մը թեւ թեւի յառաջա-
յան մեր կողմը: Մարդը խափշիկ էր: Մանուկը փորձեց գուշակել
անոնց ազդականական կապը. քոյր ու եղբայր չեն, ըսաւ ու ան-
ցաւ Իսկ ես որքա՛ն տառապած էի այդ սեւ տեսիլքին համար:
Տունը, փողոցին մէջ, աշխարհին վրայ գայն տեսած էի, գայն ե-
րգած... եւ մերժած: Տառապանքս ու վիշտս ճերմակ խորհուր-
դի մը մէջ լուծած՝ խմած էի այդ թոյնը, բայց չէի մեռած, ո-
րովհետեւ մանուկ իմ ականջներուս, տաննակ մը ուսուցիչներ
տա՛նն անգամ աւելի եռանդ ու գորով խոսացուցած իրենց ձայնին
մէջ՝ փսիսացած էին:

— Արարասի գազաթը ծածկուած է յաւերժական ճերմակ
ձիւնով:

Ես այս բոլորը պիտի չըսեմ մանուկին: Թող ան չտառապի
հեռաւոր, անհասանելի կարօտով մը, ճերմակ անորոշութեամբ
մը, քանդող բմբուսութեամբ մը. սպառիչ բայց վարդագոյն ե-
րգով մը թող չտանջուի մանուկը, թող չմեծնայ...:

Բայց եթէ յանկարծ լեռ մը գծելու համար ինծի դիմէ՝ ես
ո՞ր լեռը քանդակեմ իր սպասումին դիմաց, ո՞ր գետին յորդանոս
ղնացքը ներարկեմ անոր արեան մէջ, ո՞ր երկնքին կապտան ու
վարդագոյնը դնեմ աչքերուն հորիզոնին, ես ի՞նչ ընեմ այն ա-
տեն, ի՞նչ...:

Գոյները գորշ երանդ մը հագան: Արեւը սկսաւ հեռանալ.
մանուկը քաշեց ձեռքէս. վազեցինք, բայց չհասանք արեւին:

Մայրամուտ էր. մանուկը սիրեց այդ պահը, հորիզոնին
հողեհը երազային քող մը դրաւ անոր գէմքին, ան կը մեծնար,
սարսափեցայ:

Թեթեւ անձրեւ մը սկսաւ իր ողբը հիւսել, ուղեցի վերա-
դառնալ, մանուկը յամառեցաւ: Ուղեցի ըսել անոր, որ թեթեւ
մաղուող անձրեւները տխուր կ'ըլլան, մայրամուտը տխուր կ'ըլ-
լայ, դոյները աւելի գորշ կ'երեւին, բայց ոչինչ ըսի, այդ բո-
լորը թող չգիտնայ ան:

Մուրացկան մը ձեռքը բացաւ եւ հաց ուղեց: Մանուկը չը-
հակցաւ:

— Հաց կ'ուզէ, չունի, — ըսի:
— Մենք ունինք, — ըսաւ:
Անձրեւի կաթիլ մը հոսեցաւ այտէն, սրբեցի, մատներս
այրեցան...:

Դունն է մը պզտիկ աղայ մը դուրս վազեց եւ սկսաւ ցատ-
կըռտել, փորձեցի մանուկը տանիլ անոր մօտ, թող խաղար քիչ
մը, զուարճանար, մոռնար տաք անձրեւն ու արցունքները:

— Շատ պզտիկ է այդ աղան, — առարկեց մանուկը եւ ա-
ւելի սեղմեց ձեռքս:

Փողոցին լոյսերը վառիլ սկսան: Գետնափոր սրահէ մը աղմուկ եւ երաժշտութիւն կը յորգէր: Մանուկը քարշ տուաւ դիս: Ուղեցի արգիլել, ուղեցի ըսել անոր, որ հոն պարը շարժում չէ միայն, երգը երաժշտութիւն չէ միայն. հոն աւելի տառապանք կայ, հոն կիները կը պարեն եւ կը ծերանան...:

Բայց դաջինք:

Մանուկը պարեց:

Շարժումները հետզհետէ մեղաւոր կշռոյթ հագան, թեւերը երկնցան, օձաձեւ դալարումներով դարձան աշխարհի շուրջ, երկրագունտը տափակցաւ եւ կծկուեցաւ այդ թեւերուն մէջ, երկրագունտը լուծուեցաւ մանուկին մէջ, թեւերուն օղակը նեղցաւ, շուրջը օդ չկար:

Վաղեցի մանուկին մօտը: Ան գետին ինկաւ, բայց չմեռաւ: Գրկեցի գայն, սկսայ վազել փողոցներէն: Մութ էր, բան չէի տեսներ, մանուկին դէմքը չէի տեսներ, հեղուկ մը ողողեց դէմքըս, անձրեւը գաղբած էր:

Ե՛ս չունչ տուի անոր եւ ան պէ՛տք էր ապրէր, երկար, շա՛ւ երկար...:

Կեանքը կարծուածին չափ ալ կարճ չէ: Վէպը կեանք չէ:


Հասանք տուն:

Մանուկը սահեցաւ գրկէս վար: Վաղեցի լոյսերը: Անկողնին վրայ մանուկ մը կար, որ ինծի կը նմանէր եւ ճերմակ մազեր ունէր: Ան չէր լար. չար ու հեգնական ժպիտ մը ծռած էր շրթները:

Մանուկը մօտեցաւ ինծի. թուղթ մը առաւ. երկրագունտ մը գծեց, լեռ մը անջատեց անկէ. փողոց մը նկարեց, ուր մուրացկաններ կային. չէնք մը՝ կարմիր ներկեց: Ապա քանի մը դիժներով կնճիռներ ձեւացուց թուղթին վրայ եւ կնճիռներու պարապութիւնը ճերմակ աչքերով լեցուց:

ՔՆԱՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ





**ԼՈՒՐԵՐ՝ ՅԵՏԱԶԳՈՒԱԾ ՅՕԴՈՒԱԾՆԵՐՈՒ
ԵՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ...**

Հայաստանի երիտասարդ բանաստեղծներու ստեղծագործութիւններուն, անոնց ըստ ողբերթի խօսքերուն, ևս դեռ բանաստեղծութեան մասին իրենց աստճանատ սեփական կարծիքներուն ու Պարոյր Սեւակի գրութեան կողքին՝ սրտած էինք սայլ Վարսուճ Թադևոսի 1971 թիւ 11-ի մէջ երեւցած հարցարանին վեցերորդ և վերջին՝ «ի՞նչ կ'աւելի գրական ճորտնրին մասին» հարցումին տրուած 13 գրողներու պատասխանները, ինչպէս նաեւ կանխող էջերուն մէջ յիշատակուած «Սովետական գրականութիւն» ամսագրին ու Վերական բերք՝ էջերուն տեղի ունեցած բանավեճերուն մասնակցած չուրջ 26 գրողներու կարծիքներէն ըստուած կական հատուածներ, բայց կամքէ անկախ պատճառներով՝ արդէն կատարուած այդ աշխատանքը յետաձգեցինք Վազինէի յաջորդ թիւին:

Առհասարակ այսօրուան երիտասարդ գրականութեան մասին ընդհանուր գաղափար մը տալու համար ընթերցողին, Հայաստանի երիտասարդներուն ստեղծագործական էջերուն ու բանաստեղծական կարծիքներուն առջեւ՝ այս թիւով պիտի տայինք նաեւ «Ընդհանուր ակնարկ» յետպատերազմեան գրականութեամբ վրայ խորագրով Տիգրան Ռեզեյի պատրաստած ընդարձակ, ևս մեր երիտասարդ աշխատակիցներէն Սոսի Յակոբեանի կողմէ հայտնուած «Ընդհանուր ակնարկ» հեղինակներ, գրութիւններ, ձգտումներ» անուն ուրիշ գրութիւն մը, որ կը սույնցէ ֆրանսական բանաստեղծութեան 1971-ին ներկայացուցած պատկերին բոլոր երեսները, բայց կամքէ անկախ պատճառներով դարձեալ՝ այդ երկու գրութիւնները ևս յետաձգեցինք մեր յաջորդ թիւին:

Տիգրան Ռեզեյի և Սոսի Յակոբեանի պատրաստած վերոյիշեալ գրութիւններուն հետ, խորագրութիւնս իր տրամադրութեան առջև ունի Պէյրուսի նոր հասած «Ընդհանուր ակնարկ» վերջին թիւը (128), ուր, Ֆրանսիացի գրողներու այս տարուան փաստանոթն առթիւ՝ իրենց կրթամտեայ հանդէսին խորագրութիւնը կը ներկայացնէ մասնագիտներու կողմէ ստորագրուած նոյնքան շահեկան լարք մը յօդուածներ, որոնց մէջ կարեւոր մասն պիտի տեսնուին յոյժ թելադրական խորագրերները:— «Բանաստեղծութեան և բացայայտ փնտառումին միջև» (Գերմանիա), «Անգլիոյ երիտասարդ գրականութիւնը», «Էկստրանսիական գեղեցիկ և ուրիշ ոչինչ» (Միացեալ Նահանգներ), «Նորաստեղծ և արականութիւն միջև» (Լատին Ամերիկա), և այլն:

«Վազինէի Նոյնմերձի և Դեկտեմբերի համարներուն մէջ՝ ընթերցող առթիւ՝ և նաեւ կարողու. յիշեալ բոլոր ակնարկները:

ԿՆՈՋ ՄԸ ԿԵԱՆՔԸ



(ՋԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԻ
ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ
ԸՆԴՄԵՋԷՆ)



3 — ՆՈՐ ՆՊԱՏԱԿԸ

Դժգոհ էւ նորութիւններու հետամուտ Չ. Եսայեանը Խ. Հայաստանի մէջ վերջապէս կը դանդաղեցնէր իր կուտակուած անհանգիստ ուժերը արձակելու համար: Արտասահմանի իր մտերիմներուն վերապահութիւնը իրեն կը ներշնչէր այն զգացումը, որ մեծ վտանգի մը կը խիզախէ եւ այդ փոխանակ զգաստութեան կանչելու զինք, ընդհակառակն, արամազրութիւնները աւելի էւս կը բարձրացնէր եւ անօրինակ յանդգնութեամբ եւ հպարտութեամբ կը լեցնէր զինք:

Ինչպէս պիտի տեսնենք հետագային ալ, յանդգնութիւնն ու հպարտութիւնը միշտ ալ կարեւոր դեր կատարած են իր կեանքին մէջ: Ինչպէս Վերջին քաժակը ինչ մէջ կը յայտնէ. «Իմ հոգիս անսովոր յանգիստութիւններ ունի. կարող եմ մեռնիլ վախէս, քայքայ երբեք չեմ բնկրկիր... իմ հպարտութեան զգացումս քոյլ չի տար, ոչ մտայնիկ աննպատակ բանի վր մէջ տեղի տամ վախի զգացումով»:

Թէեւ զգայնութիւնը տիրական ձեւով ուղղած է իր կեանքը եւ ճակատագրական աղբիւրներէն ունեցած է վրան, սակայն, Չ. Եսայեան բաւական փորձառութիւն եւ իրատեսութիւն ունէր ըմբռնելու համար, որ իբրեւ զրոգիտուհի անկեղծօրէն հրաժարելով հանդերձ հին զազափարաբանութենէ մը, կրնար յանկարծ ժամաւոր հարցերու մէջ «արամազրութեանց անհաշուելիութիւն» ունենալ, իր «ունակութիւն դարձած մտածելակերպը» կրնար զինք հակազդեցութեան մէջ դնել, նոր կարգերու հիմնական սկզբունքներէն բխող վարքաչօքին հետ:

Այս վտանգը նախազգուշով հանդերձ, Չ. Եսայեան յամուռեցաւ վարչակարգը արդարացին՝ հետեւեալ պատճառաբանութիւնը առաջացնելով խօսքի ազատութեան սեղմումներուն ի նպաստ. «Բաւական է ուղղամիտ ուշադրութեամբ անդրադառնալ... արպէսզի հասկնանք եւ հասկնալով ընդունինք, որ

վիստութեան, նահանջի, վարձու մի պատճառ եղող բոլոր ներարկումները պէտք է արգիլել — արգիլել նոյնիսկ ամենափոխառ միջոցներով — որպէսզի պրոպետարական տիկտատուրայի տակ նորագոյտ աշխատատեղերը յաջողի իր նիւթական և մտաւոր շէնքը կառուցանել» («Պրամէթէոս ազատագրուած»):

Այս կարծիքը կը յայանէր Ձ. Եսայեան իր խանդավառ ու լաւատես օրերուն, երբ ըլլորովին տարուած էր նո՛ր գաղափարարանութեամբ: Սակայն այդ շրջանի իր տեսակէաներուն ամէնէն ընդվզեցուցիչը հայ յեղափոխութեան հանդէպ իր գերբարոյութիւնն է: Հետեւելով խորհրդային բարոյչափութեան, Ձ. Եսայեան ձայնակցեցաւ ա՛յն տեսակէտին, թէ հայկական ֆարգերուն պատճառը յեղափոխութիւնն էր: Ինչպէ՞ս կարելի է հայտեցնել այս հաստատումը «Աւերակներուն մէջ»ի սպորմներուն հետ: Ձ. Եսայեան ինչպէ՞ս կրնար մոռնալ անցեալը, ինչպէ՞ս կրնար սպաննել սահմանցուցիչ դէպքերը իր «Երկրորդութեան բլիթներուն մէջ»: Ո՛չ մէկ բացատրութիւն կրնայ արդարացնել թուրքին հանդէպ այս անպատասխանատու հագեցութիւնը:

Տարիներ ետք, դառն փորձառութիւնը Ձ. Եսայեանի սիրտը յոռեակտութեամբ պիտի լեցնէր, մինչև որ բաժակը յորդէր և անխուսփելիս պատահէր...

Է.— ՀԻԱՍՔԱՓՈՒԹԻՒՆԸ

Ձ. Եսայեան վերջնականապէս Հայաստան հաստատուեցաւ 1934ին: Ատեն մը խանդավառ նամակներ գրեց իր արտասահմանի բարեկամներուն, սպա՛ կապը խզուեցաւ...

Հայաստանի մէջ ան հրատարակեց իր մտնկութեան յուշերը՝ «Սիլիիտարի պարտէզները» խորագրին տակ ևւ ձգեց 1936ին աւարտած ձեռագիր մը՝ «Բարպա Խաչիկ», երկարապատում, ճապող ևւ նախորդ դործերուն հետ տրոջ կրկնութիւններ անեցող վէպ մը, որ կը փորձէր ներկայացնել Հայաստանի սպարած ողբերգութիւնը: Այս վէպը, վերջապէս, լոյս տեսաւ 1964ին:

Այս վերջին գրութեան մէջ ակներեւ է, որ զգայուն, զօրեղ աչք ունեցող գրագիրուհին շուտով բժրունեց մեքենակաւորէն կազմակերպուած ընկերութեան մը սեղմումները, ուր ամէն անօրինութիւն կը խեղճուի բարոյչափութեան աննկարագրելի հեղեղի մը մէջ, ուր ամէն քննադատութեան վեր փոքրաթիւ խմբակ մը էշխանութեան ասնձերը իր ձեռքերուն մէջ կը կեդրոնացնէ ևւ ազատական գաղափարներու դիմակին ներքեւ մեքենայութիւններ կը սարքէ, անհատական ձգտումներ կը արորէ: Մինչդեռ իր գրականութիւնը «զօրեղ նսականութեան» մը պատկերն էր, հիմնուած էր լոկ անձնական սպորմներու վրայ ևւ նոյնիսկ խորհրդային կարգերու տակ ան գրեց իր մանկութեան յուշերը ևւ չկրցաւ ենթարկուիլ սպարտուած գրականութեան պարտադրանքին, չկրցաւ արտայայտել լոկ ընկերային պահանջներ, ինչպէս նախապէս յաւանանց էր ջատագործի:

Իր պատրանաթափ հոգիին տուայտանքը ի յայտ կու գայ «Բարպա Խաչիկ»ի մէջ. «Մարդ արարածը այնքան տպակամուած է, որ չ'արժեր անք մասին մտածել: Ես կը նախընտրեմ մնալ գաղափարներու վիտ մաքրութեան մէջ: Եթէ դու ռիգես այդ գաղափարներէն մէկը գործադրել մտրոց վրայ, մարդիկը չեն ազնուանար, իսկ գաղափարը կ'ազարտուի»:

Սակայն հակառակ անոր, որ ազագան լաւատես արթութեամբ դիմագրուելու ուղղով Ձ. Եսայեանը դարձած էր յոռեակտ ու կ'արհամարհէր ժարգ-

կութիւնը իր ամբողջութեան մէջ, հոգեկան բացառիկ հակասութեամբ մը ան չէր կրնար անտարբեր մնալ, չէր կրնար լռել ի տես զառանձին թշուառութեան: Վաղ մահկութենէն յայտնի էր իր դուրսի զգացումը, որ էութիւնը կը զայլարէր ի տես անարդարութեան, ի տես մարդկային տառապանքին (տես թիթեղագործին դրուագը «Սիլիիտարի պարտէզները»-ու մէջ, անձկութիւնը «Սպասման արահին մէջ», թշուառ բանուորներուն տաղնապը «Կրակէ շապիկը»-ին մէջ):

Շուրջը տիրող կամայականութիւնները, կասկածի հեղձուցիչ մթնոլորտը, որակով ցածին շատր պայքարը որակով բարձրին դէմ խորապէս վրդովեցին Ջ. Յոսեփանը եւ ան իր խառնուածքին յատուկ բուն հակադրեցութեամբ ընդգեցաւ ու ի վերջոյ պոռթկաց:

«Բարպա հաշիկ»-ի մէջ, հետեւեալ յատկանշական ձևով կ'արտայայտուի համայնավար կարգերու մասին. «Գալով մարդոց հաւասարութեան, ստիկա ներդաշնակութեան խնդիր մըն է, որուն կը հասնին զագաթները: Տես ըստ, տղաս, անտառ... անոր բարձր ծառերու զագաթները իրարու հետ կը ներդաշնակուին եւ հաւասարապէս կ'ընդունին արեւին լոյսը: Երբ անտառուն կ'անուխ բարձր տեղէ մը դիտես անտառը, կը տեսնես, թէ ինչպէս մեղմօրէն օրօրուելով, անոր սագաթները կը սօսափին երեւանմազ: Ամեն ինչ լոյս է, կայծկիտում, դառն հրաժշտութիւն: Այդպէս պիտի ըլլայ նաեւ մարդկութիւնը... Ծառերը իրենց կատարներով կը միանան իրարու եւ կը մրմնցնեն քաղցր մեղմի, կեանքի ուրախութեան տաղը, որովհետեւ անոնք հասած են հաւասարութեան: Բայց մտիր անգամ մը անտառին մէջ եւ կը տեսնես, թէ ինչ վայրագ պայտար կայ այդ կենդանի, բայց անշարժ եւ անխօս եւութիւններու մէջ: Անօգուտ ճեղքներ, մակարոյժ քոյսեր կ'ուզեն խափանել ծառերու անը, անոնք կը աղան, բայց իրենց շօշափուկներով կը ձրգտին կանչիլ բարձր ծառերու փափուկ մասերուն՝ ծծելու համար անոնց կեանքի սակուն հիւրը: Մարդկութիւնը, տղաս, մեր օրերուն դեռ անտառին մութ խորքին մէջ է: Պէտք է անողոժ պայտարի այդ մակարոյժներու դէմ՝ անելու, բարձրանալու եւ հասնելու համար կատարներու հաւասարութեան»:

Ու վաթսուներկ աստեցող վաստակաւոր գրադիտուհին դարձեալ դադար չճանչցաւ, դարձեալ պայքարի ձեռնարկեց, պաշտպանելու համար «կեանքի իրաւունք ունեցողները»՝ որակով բարձրը, որ ինկած էր որակով նեղ ու գաւազիլ ցանցին մէջ:

Ան կը գիտակցէր վարչակարգի դաժանութեան, կը գիտակցէր, որ դրագէտը իրաւունք չունէր ազատական եւ անձնական զաղափարներ արտայայտելու, կը գիտակցէր, որ այլեւս դիրքափոխում կարելի չէր, սակայն չէր կրնար ընկրկիլ. կեցած էր անդունդի եզրին եւ ճշմտամտային վայրկեանին, իրեն յատուկ հպարտութեամբ եւ արիութեամբ վճռեց մահուան գնով իսկ կատարել իր խղճի պարտքը: («Պէտք է մեռնիլ գիտնալ, ապրելու իրաւունք ձեռք բերելու համար»: «Տես «Բարպա հաշիկ»):

Պատահեցաւ անխուսափելին: 1937ի ակտեւութիւնը հայ համայնավարներու եւ գրագէտներու աննախընթաց ձերբակալութիւններուն եւ մաքրագործումներուն ընթացքին, Ջ. Յոսեփանն ալ ամբաստանուեցաւ իբրեւ հակախղափարական, կամ թերեւս իբրեւ բուրժուա-նացիոնայիտ, Փաշխտական լրտես, դաշնակցական վիժուածք կամ պարզապէս իբրեւ ժողովուրդի թշնամի եւ այս անհիմն վերագրումները ամբալնդուած անձիւղ փաստերով, կեղծ փաստաթուղթերով, շինծու պատմութիւններով, հազարաւորներու հետ զինք ալ արտրեւ տուին դէպի հիւսիս...:

Մինչև իր մահը, 1942ին, Չ. Եսայանն ասպրեցաւ ճամբարներու ներփակութեան անձկութիւնը, օրերը քարշ տուաւ սարսափելի աշխարհի մը մէջ, ուր զինեմքը ճգովք էր, աշխատանքը՝ տառապանք, սրտեղ — այդ մասին հոգացել էր հաճախեց մի հեղինակ, — չկար ոչ մի գեղեցիկ բան, ոչ մի, ոչ մի...» (տես աջօտրական գրագէտ Մկրտիչ Արմէնի «Պատմութեանցից յանձնել ձեզ» պատմութեան քերական հաւաքածոյին զեպիսարդական դպեակը) :

Ճամբարային տաժանելի տարիներուն, երբ նախորդ կեանքի դաշտը զուտեան հետ տակաւ կը կորսուէր փրկութեան կամ վիճակի փոփոխութեան ամէն յոյս, քաղաքական կալանաւոր Չ. Եսայանը խորելով շրջապատի անանական կեանքէն, հաւանաբար յաճախ կ'ամփոփուէր ինքն իր մէջ ու յամառելով բարձր պահել իր ալեհեր գլուխը, հաշուեյարդարը կ'ընէր իր տարիներուն : Հաւանաբար տանջալի քաղցրութեամբ համակուած իր Հողին յետադարձ ակնարկի պարգեւած պայծառատեսութեամբ կը դիտէր իր քայտն ուղին՝ ոգորումի տարիները, ցանկութիւնները, պայքարը, նուաճումները, աստապանքը, նահանջը, հիասթափութիւնը : Ան մերթ յառաջացած էր հաստատա զետեի վրայ, մերթ ճապաղած անորոշութիւններու մէջ, մերթ արիւրար ճակատած դժուարութիւններու դէմ, մերթ ալ դժգոհած ու հեղձած էր իր յակից բնկերներն ու զաղափարակիցները : Իր օրերը մշտնջենական յուզումներու ելեւէջը ունէին՝ փառատեսնութեան տաղանգներ, հաւատքով լիքը սլացումներ, ինչպէս նաեւ սրտարեկութիւններ : Սովորութիւններու, զղացումներու, պայծառադրական վերաբերումներու թանձր մշտնջեն մէջէն՝ ան միշտ փնտասած էր ինքզինքը, իր Հողին եւ յանձնուած էր անոր : Ու վերացած ճամբարի դուրջ իրականութենէն, ամփոփուած իր հողի ատանձնութեան մէջ, կ'արթննային հին երգերն ու վէպերը, կը տողանցէին դէմքերը անոնց, որոնք հիացում, սէր, կամ նոյնիսկ վաղանցուկ գորովանք մը ներշնչած էին իրեն եւ այս բոլորին համար սիրտը ջերմ երախտադիտութեամբ կը փափանէր, տարօրինակ խաղաղութիւն մը եւ հանդարտութիւն մը կ'ողջէր Հողին :

Չ. Եսայանի վաստակը զինք կը գարձնէ մեր ամէնէն ուշադրաւ դրսագիտուհին : Ան սերունդներուն կտակած է իր կեանքն ու իր ժողովուրդին ճգնաժամը : կանացի հոգեբանութեան դերանուրբ արտայայտութիւնները, ինչպէս նաեւ կրկնական արհաւիրքին սահմակեցուցիչ պատկերն ու ժողովուրդին հերոսական մաքառումը պիտի մնան ժամանակը հեզող քանդակներ : Այս մտայուն արժէքը բաւարար է, որ մոտցուին անհատին զեզերումներն ու անկումները՝ հողեկան վերիփայտումներու շրջանի մը մէջ :

Իր զլուխ գործոցներով հմայուած, ամէն ընթերցող անկասկած կը մղուի դնահատանքով ու հասկացողութեամբ մեղմելու մշտական ցաւը անոր, որ ամբողջ կեանքը հայ գրականութեան ծառայելէ եւ իր ժողովուրդին դժբախտ ճակատագրով տարապելէ, մաշելէ ետք, աչքերը փակեց հետուր աչքիս ճակատագրի մը անկութիւն ճամբարին մէջ, անտարբեր կալանաւորներու ստոն սկիւրակին տակ :

ՍՈՐԱ ԱՅԹԻՆԱՆ

(Շար. 3 եւ վերջ)



Կըսուի, թէ «Ռեզիզիւր»ը կը ներկայացնէ Թուրքիան ձգելէ (1933) առաջ՝ Իոնիսքոյի ունեցած ապրումները, ապրումները ա՛յն օրերուն, երբ իր ծանօթները աւելի եւ աւելի՛ կը յարէին Երկաթէ անունը կրող Փաշիօթ շարժումին: Այս մասին ինք ըրած է հետեւեալ հաստատումը.

«Ըստ սովորականին, վերադարձայ իմ մտասեւեռումներու: Յիշեցի, թէ կեանքիս ընթացքին մեծապէս ազդուած էի զազափարական հասանք կոչուած իրականութենէն, անոր արագ եզափոխութենէն, անոր վարակիչ հանգամանքէն, որ շատ կը նմանի համաճարակի ուժին: Մարդիկ կ'արտօնեն իրենք իրենց յանկարծօրէն ենթարկուի նոր կրօնքի մը, վարդապետութեան մը կամ մոլոխանդութեան մը խուժումին... Նման վայրկեաններու՝ մենք ականատես վկաները կ'ըլլանք մտադրական ճշմարիտ փոփոխութեան մը: Չեմ գիտեր, նշարա՞ծ է՞ք թէ ոչ, բայց երբ մարդիկ դադրին ձեր զազափարակները բաժնել, երբ դուք այ-

ԷՕԺԵՆ ԻՈՆԵՍԻՔՕ

Թ Ա Տ Ր Ո Ն

Ե Ի

Հ Ա Կ Ա - Թ Ա Տ Ր Ո Ն

ԳՐԵՑ՝

ՄԱՐԹԻՆ ԷՍԻ

լիս չկարենաք դուք ձեզ հասկնալի դարձնել անոնց, կ'ունենաք ա՛յն տպաւորութիւնը, թէ զազաներու, օրինակ, ռեզիզիւրներու դէմ յանդիման կը գրտնուիք: Անոնք օժտուած են մաքրութեան եւ վայրագութեան այդ խառնուրդով: Անոնք քեզ պիտի սպաննէին գիտակցութիւններու լաւագոյնով: Եւ վերջին ֆառորդ դարուն, պատմութիւնը մեզի ցոյց տուած է, որ մարդիկ ա՛յ միայն նմանեցան ռեզիզիւրներու, այլևս վերածուեցան իսկական ռեզիզիւրներու»:

Տիրաւորութի մէջ ներկայացուած «Ռեզիզիւր»ի առաջին բեմադրութեան ընթացքին, գերման հանդիսատեսները անմիջապէս ճանչցան տիպարներու անձնաւորած հարցերը, որոնք արտացոլացումն էին ա՛յն ապրումներուն, զորոքերմանացիները ունեցան, երբ չկրցան դիմադրել շիթլէրի արտօնակներուն: Թատերախաղին կարգ մը տիպարները կ'ուզեն ըլլալ Թանճրամօրթ գոյութիւններ, որովհետեւ կը սիրեն բիրտ ուժ եւ այն պարզութիւնը, որ ծնունդ կ'առնէ մարդկային չափազանց մեղծ ապրումներու ճնշումէն: Ուրիշներ նոյնը կ'ընեն, որովհետեւ կը հաւատան, թէ ռեզիզիւրները կրկին վերադարձնելու միակ ճամբան՝ անոնց մտածելակերպը հասկնալն է, եւ դեռ ուրիշներ, մասնա-

ւորարար Տէյդին, պարզապէս չեն կրնար
Հանդուրժել մեծամասնութենէն տարբեր
ըլլալու իրողութիւնը: Ռեզոլյուիւրստը
ն'չ միայն Աջ ամբողջատիրականերու,
այլև Ձախ ամբողջատիրականներու
ախտն է, անիկա պատշաճականութեան
մասին է նոյն ատեն:

«Ռեզոլյուիւր»ը զուարթ թատերախաղ
մըն է: Անիկա կը յորդի փայլուն տար-
բերով եւ ի տարբերութիւն Իոնեքոբոյի
չառ մը թատերախաղերուն, շատ դիւ-
րամաշնչի կը թուի: Լոնտոնի «Թայմզ»
թերթը «Ռեզոլյուիւր»ին նուիրած իր քըն-
արկուծը խորագրեց Հեռեւեալ բառե-
րով: «Իոնեքոբոյի քաւնրախաղը չափա-
զանց դիւրամաշնչի է»:

Սակայն, իսկապէս այդքան դիւրա-
հասկնալի՞ է անիկա: Ինչպէս Պերնար
Ֆրանզէօյ, «Քայլիւ տիւ Բուլժ տը Փա-
քաֆիգիէն» մէջ՝ Հանճարեղ յօդուածով
մը կը նշէ՝ Պերանժէի Հաւատքի վերջին
խոստովանութիւնը եւ անոր նախկին
պիղուծները՝ ոնքեղջիւրին վրայ մարդ
էակին ունեցած դերակայութեան մասին՝
Հետաքրքրականօրէն կը նմանին «Ապս-
քան հաւկիթներում մէջ է» (L'Avenir est
dans les Cieux) եւ «Պարտականութեան
զոհներ» (Victims du Devoir) թատեր-
գութեան մէջ եղած կեցցի՝ ներմակ ցեղը
ազդակներուն: Եթէ քննարկելու ըլլանք
Պերանժէի վերջին զրոյցը իր ընկերոջ՝
Տիւտարի Հետ, պիտի տեսնենք, թէ ան
իր մարդ մնալու ցանկութիւնը կը պատ-
ճատարանէ բնագլխով ա'յն յենարանով,
որուն Համար կը դատապարտէ ոնքեղ-
ջիւրը: Աւելի, Ու. Էրբ կ'անդրադառնայ այս
սխալին, զայն կը սրբազրէ՝ պարզապէս՝
բնագը փոխարինելով նախազգացում
բառով: Աւելին. Պերանժէ, վերջաւորու-
թեան, խորապէս կը ցաւի, որ իրեն Հա-
մար անկարելի է ոնքեղջիւրի մը վերած-
ւելլ: Մարդկութեան Հանդէպ ունեցած
Հաւատքին մասին անոր արհամարհական
վերջին արտայայտութիւնը կը նմանի
անհասանելի խաղողին ուղղուած ազուէսի
արհամարհանքին: Պերանժէ շատ Հեռու
է Հերոսաւայնի վերջին կեցուածք մը ու-
նենալէ. անոր արհամարհանքը դաւելտա-

կան եւ կերպազանչական բնոյթ մը
կը կրէ ու թատերախաղին բնոյճանուր ի-
մաստը այնքան ալ պարզ չէ, ինչպէս կը
փորձեն ջոյց տալ կարգ մը քննադատներ:
Թատերախաղին մեղի փոխանցած ար-
Համարհանքին անհեթեթութիւնն է ա'յն-
քան, որքան Համակերպութիւնը, ոչքեր-
պութիւնը անհաստապատին, որ չի կր-
նար միանալ նուազ զգայուն ժարդոց եր-
ջանիկ ամբոխին, տրուեստադէտին ար-
տաքանախ Հոգեվիճակը, որ կը կարգէ
Քաֆքայի եւ թոյմա Մանի նման Հե-
ղինակներու գրականութեան առանցքը:
«Ռեզոլյուիւր»ին վերջաւորութեան, Պե-
րանժէի կացութիւնը ձեւով մը կը նմանի
այլակերպութեան ուրիշ դո՛նի մը՝ Քաֆ-
քայի կրէկար Մամային: Մամա վերած-
ւած էր Հակայական միջատի մը, մինչ-
դեռ միւս մարդերը բու՛րն ալ կը պա-
Հէին իրենց բնականօրէն վիճակը: Մնալով
մարդկային վերջին էակը՝ Պերանժէ ճիշդ
ու ճիշդ Մամայի կացութեան մէջ է, ու-
րովհետեւ Հիմա, որ ոնքեղջիւր ըլլալը
բնական երեւոյթ է՝ մարդ ըլլալն է, որ
կը դառնայ Հրէշային: Իր վերջին ճառին
մէջ՝ Պերանժէ կ'որոշայ իր մարթին ճե-
րմակութիւնն ու թուլութիւնը եւ կը տես-
չայ ունենալ թանձրամորթի կարծր ու
գոց-կանայ զրահը: Աւ մարդկութեան
կողքին կանգնելէ առաջ՝ կը պտտայ իր
որոշումը.

— Հրէշ մըն եմ ես, պարզապէս երէշ
մը:

Եթէ «Ռեզոլյուիւր»ը Հակահոսանք մըն
է պատշաճականութեան (conformism) եւ
անդդալութեան դէմ — ինչ որ որոշապէս
է՛ արդէն — անիկա կը կնէ նաեւ ա'յն
անհաստապատը, որ առաջինութեան մը
կը վերածէ իր գերակայութիւնը թէ՛ իր-
բեւ արուեստադէտ եւ թէ՛ իրբեւ զգայուն
էակ: Հո՛ս է, որ թատերախաղը կը դե-
րազանցէ փրփոկանտին դերապարզու-
թիւնը եւ կը դառնայ վաւերական մէկ
արտայայտութիւնը մարդկային կացու-
թեան ճակատադրական բարդութեան եւ
անխուսափելի անհեթեթութեան: Պե-
րանժէի վերջին կեցուածքին մէջ այս
կրկնարժէքը (ambivalence) դրսեւորող

խաղարկութիւն մը միայն կրնայ տալ թատերախաղին ամբողջական դեղինցուկութիւնը:

Պերանտէ Հետագային ի յայտ կու գայ երկու ուրիշ թատերախաղերու մէջ՝ «Ողի անցորդը» (Le Piéton de l'Air) եւ «Թագաւորը կը մեռնի» (Le roi se meurt): Վերջինը, զոր Իոննէսթօ աւարտեց «Օղի անցորդը» թատերախաղէն ետք, բեմադրութեան անկէ առաջ: Անիկա առաջին անգամ ներկայացուեցաւ 15 Դեկտեմբեր 1962ին, Ժագ Մոքլէրի կողմէ, մինչ «Օղի անցորդը» բեմադրութեան 8 Փետրուար 1963ին, Օտտոնի մէջ, Ժան-Լուի Պարրոյի բեմադրութեամբ եւ դերակատարութեամբ:

«Օղի անցորդը» թատերախաղին մէջ Պերանտէ մեզի կը ներկայանայ իր կնոջ ընկերակցութեամբ, Շակալի կամ Ութրիլլոյի աննոցով պատկերացուած Անգլիոյ մը մէջ: «Ճաղատ երգչուհի» թատերախաղին մէջ տրուած է Անգլիոյ ուղղութեամբ մաշած տեղիկութիւնները կը կրկնուին Հոս եւս: Ասիայն, թատերախաղը իր դազաթնակէտին կը հասնի, երբ Պերանտէ, որ թոյնու կարողութիւն ձեռք ձգած է եւ միտամանակ անտեսանելի դարձած՝ կը վերադառնայ ու կը նկարագրէ իրապէ՛ս դժոխային տեսարան մը: Հոս, Պերանտէ՛ ա՛յն արուեստագէտն է, որ փոխ առ փոխ ենթակայ է թռիչքներու եւ անկումներու եւ մարդկային կացութեան հանդէպ իր ներաշխարհի խորունկ ջերմութեամբ, օտարացումի (alienation) կ'ենթարկէ նոյնի՛սկ մեկուսացածները:

«Թագաւորը կը մեռնի» թատերախաղը՝ նոյնպէս մութ իրրիւ թատերախաղ՝ կը նշէ Իոննէսթոյի անցքը դէպի դասական, պաշտօնական զպտածութեան մը նոր խաւէն ներս: Հիմա, Պերանտէ թագաւոր է. սակայն, իր ազդեցութիւնը ոկած է տկարանալ, իր թագաւորութիւնը անկումի մէջ է եւ տեղեակ է, որ պիտի մահանայ մէկուկէս ժամուան ընթացքին: Այսպիսով, ամբողջ թատերախաղը կը վերածուի Պերանտէ թագաւորի անողոք, կանխածրագրուած, ծիսական

անկումին ու մահուան: Մինչ ան կը կորսնցնէ իր ազդեցութիւնը իր պահակին (մեացած վերջին դինուորը), ծառային ու երկու կիններուն վրայ՝ իր աշխարհը բաժան-բաժան կ'ըլլայ, նոյնիսկ կարասիները կ'անհետանան: Վերջաւորութեան, ան առանձին կը մնայ պարտութեան մէջ՝ նստած իր դահլիճ վրայ: Հետզհետէ այդ կացութիւնն ալ կը ձուլուի մեզ օգին մէջ:

«Մարալը եւ քաղցը» (La Soif et la Faim) թատերախաղով, Իոննէսթօ վերջնականապէս ճանչցուեցաւ իրրիւ նոր դասական: Թատերախոյր ստանձնուեցաւ եւ բեմադրութեան Բոմբէտի Ֆրանսէզի կողմէ, Ռոպէրթ Նիլլի գլխաւոր դերակատարութեամբ՝ 28 Փետրուար 1966ին: Սոյն թատերախաղը կը ներկայացնէ Պերանտէի նմանող հերոս մը, որ պարզապէս ժան կը կոչուի եւ որ լքելով իր կինն ու ընտանիքը, ապարդիւնօրէն կը սպասէ երազային կնոջ մը, որուն հետ կը կարծէ ժամագրուած ըլլալ: Վերջաւորութեան, ան հանդիսատես կ'ըլլայ տարօրինակ արարողութեան մը, որ տեղի կ'ունենայ Իրարու կից կառուցուած վանքի մը, դորանոցի մը եւ բանտի մը մէջ: Թրիփ եւ Պրեիթոլ, որոնք կը ներկայացնեն կեանքի եւ թատրոնի տարբեր յմբռնումները (անկարկութիւնը կը վերաբերի Պրեիթի, որ միշտ Իոննէսթոյի նախընտրած հսկաներէն է՝ պարզապէս շատ յստակ է): Մինչդեռ իբրեւ ազդեցիկ թատրոն՝ «Մարալը եւ քաղցը» շատ քիչ յարակցութիւն ունի եւ ընդհանրապէս կ'իյնայ հին ժամանակներու յատուկ վիպապաշտութեան մը մէջ: Հեզնական է մանաւանդ՝ Իոննէսթոյի պաշտօնական ընդունելութիւնը Ֆրանսայի մէջ դործով մը, որ անպայմանօրէն յաջող չէ եւ գրողը չի յատկանշեր:

Իբրեւ թատերագիր Իոննէսթոյի ստացած հռչակին համաշխարհային ծաւալը ապշեցուցիչ երեւոյթ մը եղաւ: Ան ճճաղատ երգչուհի» թատերախաղը գրել սկսաւ, երբ արդէն երեսունըվեց տարեկան էր: Երկար ատեն կաշկանդուած եւ արտայայտութեան ձգտող ուժի մը պոռթկումին վկայութիւնն է «Ճաղատ

երգչուհիմ», պոռթկումը ա՛յն ուժին, որ հարազատ ձեռքը կը փնտռէր զբուռու-ւելու համար եւ որ յանկարծ իր արտա-յայտական ուրոյն կերպը ստացաւ եր-կախօսութեամբ: Անդլերէն դասադրքի մը մէջ զոյութիւն ունեցող պատրաստի եր-կախօսութիւն մը Իոնեսթոյի մէջ արթն-ցուց թատերագրի իր ճշմարիտ կոչումը: Մինչ այդ, ան ատած էր թատրոնը պար-զապէս անոր համար, որ թատրոնին նախնական եւ ընդունուած կերպերը խո-տոր կը համեմատէին իր թատերական սեփական յղացումներուն եւ ներհայե-ցողութեան (intuition): Իր ամբողջ կեան-քի ընթացքին գրած էր, ինչպէս որ կը խոստովանի 1930ին հրատարակուած իր օրագրութեան զանազան հատուածներուն մէջ, բայց այդ ակնարկութիւնները եւ նոթերը կը մնան զուտ անձնական ընտել կողմ սեւագրութիւններ: Բայց Իոնեսթո-յի օրագրութեան այդ նոյն հատուածին մէջ՝ թատերագիրը կը ներկայացնէ թա-տերական սէնչի մը զազափարը — կին մը կը խօսի բնական զուտուող մար-դու մը հետ եւ կը խաղայ յայտնապէս զգացական բարձր տեսարան մը, բոլորու-վին էլիշէ եւ կրկնուած ձայնադրեալ նոյն նախադասութիւններով, առանց իմացնե-լու ընթերցողին (կամ Հանդիսատեսին), թէ ինչ է իր հետապնդած նպատակը: Այս կարճ սէնչը ցոյց կու տայ, որ Իո-նեսթոյի մտքին մէջ արդէն կը խմորուէին թատերական թեմաներու ա՛յն սողերը, զորո տասը տարի ետք միայն, իւրացու-մի մեթոտին շնորհիւ՝ Հանրութեան պի-տի ներկայացնէր, իբրեւ թատերագիր թաղուն մնացած իր մէկ ուժին յանկար-ծական փայտատակումով:

Իոնեսթո բարձրօրէն ներդրած էր (intuitive) գրող մըն է: Ան անձամբ կը բացատրէ յախտակու իր եղանակը, թէ մը յափազանցուած, բայց միաժամանակ համոզիչ ձեւով մը, երբ կ'ըսէ.

«Ճայտնապէս դժուար է քատերգու-թիւմ մը գրել. անիկա կը պահանջէ ֆի-զիկական նկատառելի ճիգ մը: Մարդ պէտք է կայնի, որ ինքնին յագեցուցիչ է: Ետոյ պէտք է նստի, հագիւ հաշտը-

ւած կայնելու զազափարին հետ, յետոյ պէտք է ձեռք առնէ գրիչ մը, որ կրնայ ծանր ըլլալ, պէտք է վերցնէ բիշ մը թուղթ, գոր կրնայ նաեւ չգտնել, ապա պէտք է նստի սեղանի մը առջեւ, որ յա-նայ կը կոտրի արմուկին ճնշումէն...: Միւս կողմէ՝ յարաբերաբար դիւրին է քատերգութիւն մը յօրինել, առանց գայն գրի առնելու: Դիւրին է երեւակայնի գայն, երազելի գայն, կառուցել կիսաճան վիճակի մը մէջ: Այս պարագային, մարդ պէտք է ինքզինքին թոյլատրէ շարժիլ՝ առանց հսկելու իր արարքներուն: Առանց բու գիտակցութեանը՝ կը ձեւաւորուի տիպար մը, որ կը կանչէ միւսները: Ա-ռաջին տիպարը կը սկսի յօսել, առաջին դիմադարձութիւնը (retort) եղած է, ա-ռաջին մտքը կը գարնուի, յարորդը կը հետեւի մեքենայարար: Ինքզինք կը մնա կրտսերական, կ'ունկնդրես. կը դիտես ա՛յն բոլորը, որ տեղի կ'ունենան ներքին պատասխան վրայ»:

Իոնեսթո ինքնեկութիւնը (spontaneité) կը նկատէ ստեղծագործական կարեւոր ազդակ մը: «Դրել սկսելէ առաջ՝ ոչ մէկ զազափար կ'ունենամ: Գազափարները կը ներկայանան ինձի, երբ գրած եմ արդէն քատերախաղը. կամ երբ բնա չեմ գրել: Կը նստաւ, որ արուեստի ստեղծու-ցործութիւնը ինքնաբերաբար յագեցնէրու արդիւնք է, ա՛նուազն ինձի համար: Ատիկա բնա չի նշանակեր, որ Իոնեսթո իր զրականութիւնը կը նկատէ անիմաստ եւ աննպատակ: Ընդհակառակն, յանկար-ծօրէն ներկայացած երեւակայութեան գործունէութիւնը ճանաչողական եւ պայ-թուցիկ հանգամանք մը ունի: «Նրեւա-կայութիւնը գործօն է. անիկա նախա-մի մեքստ մըն է. ամէն ինչ, որ երեւա-կայութեան կը բխի՝ իրա է, ոչինչ իրա է, եթէ էրեւակայութեան ծնունդ չէ»: Աժէն ինչ, որ կը ցայտէ երեւակայութե-նէն՝ Հողերանական իրականութեան մը արտայայտութիւնն է: «Եւ որովհետեւ արուեստագէտը իրականութիւնը կը բռնէ ուղղակիօրէն, ապա ուրեմն՝ իրա փիլի-սոփայ մըն է: Եւ անոր իրա փիլիսոփա-յական տեսութեան ձեւակերպումէն, խո-

բարեկենդանի և սրբաբաններն է, որ կը թիփ
անոր մեծութիւնը» :

Ստեղծագործ երեւակայութեան ինք-
նեկութիւնը, ինքն իր մէջ, փրկիստփո-
յական պայթումին եւ գիւտին մէկ գոր-
ծիքն է : Բայց ինքնարուի ըլլալ՝ չի նշու-
նակեր անարուեստ ըլլալ : Իրաւ արուես-
տադէտը իր թեքիթը միջոցները հասցու-
ցած կ'ըլլայ այնպիսի՝ մակարդակի մը,
ուր կրնայ դանձը օգտագործել, առանց
գիտակից անդրադարձումի, ճի՛շդ այն-
պէս, ինչպէս լաւագէտ մարդուած պարող
մը, որ կրնայ ամբողջովին կեդրոնանալ՝
ներկայացնելու համար երաժշտութեան
եւ իր անձնուարած տիպարին ներ-
գաշնակ շարժումները : Իոնեսքօ, սա-
կայն, երբէք զանց չ'առնէր թատերգու-
թեան կառուցումի աշխատանքներուն կա-
րելորութիւնը : ան վարպետ աշխատող
մըն է եւ միաժամանակ դասական մը՝
այդ գեանի վրայ : Իոնեսքօ կը հաւատայ,
որ «յառաջագահ գրողներու նպատակը
պէտք է ըլլայ վերագտնել — եւ ոչ թէ
գիւտը ընել — քատրոնի յաւերժական
մեկունը եւ մտնուած խելայնքունը ա-
մենն քիւրք գոյալիկանը : Մենք պէտք
է քանց անենք քիւրք ասոյթները եւ ա-
զատագրուինք քառուն «առանգապահու-
թեան», մենք պէտք է վերագտնենք ապ-
րող եւ իրաւ ասանդութիւնը» :

Ահա թէ ինչու Իոնեսքօ ճիշդ կ'ընէր
(preoccupied) մէկտեղել թատրոնի զան-
խառն տարրերը, ըողողեծելով եւ մեր-
կացնելով նոյն ատեն արարքին մեքենա-
կանութիւնը, եթէ նոյնիսկ անիկա, այդ
մեքենականութիւնը իմաստէ զուրկ ըլ-
լայ : Ճիշդ այդ պատճառով է դարձեալ,
որ Իոնեսքօ չէր սիրէր Լապիէը, մինչ
ճմայուած էր Ֆէյտոյով եւ նոյնիսկ կը
զարժանար կարգ մը նմանութիւններ
գտնելով իր թատերգութիւններուն եւ
Ֆէյտոյի զաւեշտերուն (farce) միջեւ : —
«Ոչ թէ նիւթի ընտրութեան, այլ ի-
րենց կիրարկած կշռոյթին մէջ : «Լաւն
ականքին մէջ» (La Puce à l'Oreille) քա-
տերգութեան պէս կառոյց ունեցող գոր-
ծերուն մէջ, օրինակ, գոյութիւն ունի
շարժումի տեսակ մը երազութիւն (acce-

leration), յառաջիազացք եւ տեսակ մը
խենթութիւն : Անոր մէջ մարդ պէտք է
գտնէ քատրոնիմ էութիւնը, կամ ա՛նկը-
լագն երգիծանքին էութիւնը... Որովնե-
տեւ, թող Ֆէյտօ ներէ, ո՛չ իր զազա-
փարները (գորս արդէն չունի), ոչ ալ իր
տիպարներուն պատմութիւնը (որոնք ան-
պէտք են) յառաջիազացքի նպատակը կը
քերթն իր քատրոնիմ, այլ այդ յառաջ-
իազացքը կու գայ իր խենթութեան եւ
երեւութապէս կանոնաւորուած մեքենա-
կանութեան» :

Իոնեսքօ իր դասականութիւնն ու
բնատրոնի մեքենականութեան անխառն
դոյալիկանքին՝ վերտեղեման փորձը կը
բաղդատէ Ֆէյտոյի զաւեշտերուն մէջ
դոյութիւն ունեցող աստիճանական զար-
գացումի սկզբունքին հետ : Օրինակ,
«Իտալը» թատերգութեան մէջ, ոչ մէկ
պատմութիւն կայ, բայց եւ այնպէս նիւ-
թին զարգացումը ակնհերե է : Ես կը
փորձեմ այդ զարգացումը յաջողեցնել մը-
տածումներու, զգացումի մը, կարու-
թեան մը եւ անձկութեան մը աստիճա-
նական խառնուրդով : Նիւթը պարզապէս
պատրուակ մըն է տիպարներուն խառ-
կութեան համար, սկսելով երգիծանքէն,
եւ յանդիշու համար աստիճանական
բարձրացումի մը : Նիւթը պարզապէս յե-
նարան մըն է, պատրուակ մը այդ գորտ-
ման օգտին» : «Ճաղատ երգչուհի» մի-
շեւ «Ռեգիսիւր»ը, Իոնեսքոյի մօտ այդ
խառնուրդը եւ արարքին զորացումը կը
ներկայացնեն այդ հիմնական սկզբունքը :
Իոնեսքոյի թատերգութիւններուն մեւը,
որոնք կը հակադրուին Պեքէթի եւ Ադա-
մովի (մինչեւ իր խղումը Անհեթեթի
Թատրոնէն) թատերական մեքենան, օ-
րոնք ընդհանրապէս չըջանակաձեւ են եւ
կը վերադառնան սկզբնական կացութեան
կամ անոր համապատասխան վիճակին,
կը վերադառնան զէրօյին, երբ նախա-
կան արարքը կը դառնայ փուճ, այնպէս
որ՝ ո՛չ մէկ տարբերութիւն պիտի ընէր,
եթէ ոչինչ պատահած ըլլար : Ճիշդ է, որ
«Ճաղատ երգչուհի» եւ «Իտալը» թատեր-
գութիւնները կ'աւարտին այնպէս, ինչ-
պէս սկսած էին, — առանցիկ կ'աւարտի

երբ Մարթինները (կամ փարիզեան բե-
 մադրութեան մէջ Սմիթները) կը վերա-
 դառնան նոյն երկարասութեան, զոր ու-
 նեցած էին թատերգութեան մուտքին,
 իսկ «Իստը» կ'աւարտի նոր դասի սկսող
 նոր աշակերտի մը մուտքով: Բայց «Ճա-
 դատ երգչուիին» թատերախաղի պարա-
 զային, վախճանը եղբակցութիւն մըն է:
 Իոնեսքոյի սկզբնական նպատակը եղած
 էր գազաթնակէտին հասցընել աւարտա-
 կան տեսարանի խռովքը, դայն ուղղա-
 կիտէն հակադրելով հանդիսատեսներու
 յարձակողականին: Եւ «Իստը» թատեր-
 գութեան պարադային, զիտենք, որ այդ
 օրուան ձեռք աշակերտը պիտի սպաննուի
 նոյն վայրագ ձեւով, ինչպէս սպաննուած
 է քառասներորդը, — եւ թէ՛ տեղի պի-
 տի ունենայ ուրիշ անխուսափելի եւ նոյն
 իսկ աւելի վայրագ արարք մը, այսինքն՝
 դէպքերու զուգաթացումը: Ասիկա, ի-
 րակաւութեան մէջ, կաղապարն է Իոնես-
 քոյի թատերական զրեյաձեւին: Մենք կը
 հանդիպինք նոյն երազութեան եւ թանձ-
 րացումին «ժազ» թատերգութեան մէջ,
 ուր բոցակայ չէ մոլեգնութիւնը. անոնց՝
 երազումին եւ թանձրացումին կը հան-
 զիպիք նոյնպէս «Նոր վարձակալային ա-
 ճող ստարկաներու տեսարանին մէջ: ՔԱ-
 րտներն աւելի եւ աւելի խնդրուած
 սենեակին, ինչպէս նաեւ «Ինգլիզիլը»ի
 այլակերպութիւններու բողբոջող թիւին
 մէջ:

Ուժգնութիւնը, խտացումը եւ զարգա-
 ցումը, այսուհանդերձ, ինչպէս Իոնեսքո
 կը շնչէ, պէտք չէ շփոթուին պատմու-
 թիւն պատմողներու, պատմութիւնը մաս-
 նաւոր աւարտի մը հասցնելու ճիգին
 հետ: Վերականգնողական մէջ, գազաթ-
 նակէտը կը յանգի հարցի մը վերջնական
 լուծումին: Եւ Իոնեսքո կը խորշի «պատ-
 ճառարանուած թատերգութիւններէ, ո-
 րոնք կառուցուած կ'ըլլան հաւաքարա-
 նութեան (syllogisme) մը պէս, որոնցմէ
 վերջին տեսարանը տրամաբանական եղ-
 րակացութիւնը կը հանդիսանայ նախը-
 թաց տեսարաններուն»: Իոնեսքո կը հար-
 ւածէ պատմողական ընոյթ կրող եւ մի-

շեւ տեղամ լաւ թխուած թատերգու-
 թիւնները:

«Ես թատերգութիւն չեմ գրեր՝ պատ-
 մութիւն մը պատմելու համար: Թատերա-
 նը չի կրնար գիցցագներգութիւն ըլլալ...
 պարզապէս անո՛ր համար, որ անկիւս
 թատրոն է: Ինձի համար, թատերգու-
 թիւն մը նկարագրութիւնն ու զարգացու-
 մը չէ այնպիսի պատմութեան մը, որ
 կրնայ գրուած ըլլալ իբրեւ վէպ, կամ
 իբրեւ շարժանկարի սենարիօ: Թատեր-
 գութիւնը կառոյց (structure) մըն է, որ
 կը քաղկանայ շարք մը գիտակցուած վի-
 ծակներէ, կամ կացութիւններէ, որոնք
 հետզհետէ կը գործանան, աւելի եւ աւելի
 կը խտանան, յետոյ յամկարծ տակնուվը-
 րայ կ'ըլլան, կամ կը պարզանան դարձ-
 եալ. կամ կը յանգնին անեյանելի կացու-
 թեան մը»:

Լաւ թխուած թատերգութեան մը
 ներութիւնը կամ տրամաբանուած կա-
 ռոյցը ոչինչ կ'արժեն Իոնեսքոյի հա-
 մար: Փոխարէնը, ան կը նախընտրէ թա-
 տերգութեան զօրացումը եւ հոգեբանա-
 կան ճգնաժամի աստիճանական բարձրա-
 ցումը: Այս տեսակէտը յաջողցնելու հա-
 մար, հեղինակ մը, Իոնեսքոյի տեսակէ-
 տով, ենթակայ չէ որեւէ օրէնքի կամ
 կաշկանդումի:

«Ամէն քան արտօնուած է թատրոնին
 մէջ, — տիպարներ կեանքի կոչել. ա-
 ռարկայացնել անձաւորեան վիճակները,
 դրսեւորել ներքին աշխարհը: Այս ձեւը
 ո՛չ միայն արտօնուած է, այլեւ թելադ-
 րելի — արարքը միացնել յատկանիշներու,
 շնչաւորել առարկաները, կենդանացնել
 տնժարը եւ թանձրացնել խորհրդանիշնե-
 րը: Եւ այսպէս, մինչ քառերը կ'արտա-
 յայտուին շարժումով, արարքներով եւ
 գիմնախաղերով, որոնք տեղը կը գրուեն
 նայնիմեք այդ քառերու ա՛յն պարագա-
 յին, երբ այլեւս քառերը անգոր կը դառ-
 նան: Միտ կողմէ՛ թեմի նիւթական ա-
 ռարկաները. իյեմ կարգին, գորութեամբ
 կ'օժտեն այս բոլորը»:

Այս ձեւով՝ լեզուն կը ստանայ յա-
 րաբերաբար նուազ կարեւոր պաշտօն մը:

Ըստ Իոնեսքոյի, թատրոնը չի կրնար յուսեր սուսցանել՝ մրցելու համար արտայայտութեան ա՛յն ձեւերուն հետ, որոնց մէջ լեզուն ունի ամբողջովին ինքնուրոյն կերտուածք մը, ինչպէս փիլիսոփայութեան դատողական բոլորակներ, բանաստեղծութեան կամ վիպական սեպին նկարագրական լեզուն։ Այս պատճառներով, կը շարունակէ Իոնեսքո, թատերական լեզուի գործածութիւնը կը սահմանափակուի «ելիկախօսութեան մէջ, ուր բառերը կը բախին իրարու, կը պայտառին իրարու դէմ»։ Թատրոնի պարագային, լեզուն ինքն իր մէջ ամբողջութիւն մը չի ներկայացներ, այլ անկապարզացէս տարբեր է՝ այլ տարբերու շարքին։ Հեղինակը կրնայ զայն սպառնործել տգտորէն, կրնայ գործողութիւնը հակադրել բնագրին, կամ, եթէ ուզէ, ամբողջական կործանումի կ'ենթարկէ տիպարներու լեզուն։ Այս մէկը նոյնպէս հընարք մըն է ինքնին, որ կը ծառայէ իրբիւ զօրացման ազգակ, բան մը, որ ընդզօնի է Իոնեսքոյի թատրոնին մէջ։ Լեզուն կրնայ վերածուիլ թատերական նիւթի մը՝ եթէ կարենանք տնօր ընծայել իր ծայրայեղ տենղը։ Օժտելու համար թատրոնը իր իրաւ արժեւորումով, որ կը ստացուի՝ սպառնործելով չափազանցութիւնները, բառերը պէտք է կիրարկուին իրենց ծայրագոյն առումներով, լեզուն պէտք է սասնայ ծառայողական պայթուցիկ ուժ մը, կամ պէտք է ինքզինք խորտակէ՝ իմաստները բովանդակելու իր անկարութեան հետեւանքով։

Իոնեսքոյի թատրոնը նմոյշ մըն է գորացումի, երազութեան, խտացումի, ծրարներութեան, որոնք կը հասնին մինչեւ ա՛յն կէտը, ուր հոգեբանական մղումը կը վերածուի անտանելի մոլուցքի մը (the patter of orgasm)։ Անիկա պէտք է շարունակուի յայտնակերպումով մը, որ, իր կարգին, պէտք է սգեկրչէ մղումը՝ գոյացնելու համար հանդիսարութեան զգայնութիւնը։ Այս ազատագրումը կը ստանայ խնդուքի մը ձեւը։ Ահա թէ ինչո՞ւ վաւերական են Իոնեսքոյի թատերաբանքերը։

«Իմ պարագայիս, — կ'ըսէ Իոնեսքո, — երբեք ի վիճակի չեմ եղած հասկնալու երգիծանքին եւ ոգեբերգութեան միջև գոյութիւն ունեցող տարբերութիւնները։ Քանի որ երգիծանքը բնագոյնի մղումն է աննեքեքին, ինծի կը քուի, թէ անկա աւելի զօրութեամբ կրնայ նպաստել հիասքափութեան մը ծնունդին, քան ոգեբերգութիւնը ի՛նքնը։ Երգիծանքը փախուստի ոչ մէկ միջոց կը ձգէ։ Կրնայ «կը նպաստէ հիասքափութեան», թայց իրականութեան մէջ անկա կ'անցնի հիասքափութեան կամ յոյսի ստեմաններէն անդին»։

Բայց ասիկա արդէն ճշմարիտ դրսևորումն է ազատագրութեամբ ձեռք բերած խնդուքին։

«Էլիմարը մեզ գիտակից կը դարձընէ, օժտելով մեզ մարդուն ոգեբերգական կամ յեղյեղուկ կացութիւնը ըմբռնելու ազատ պայծառատեսութեամբ մը... Ո՛չ միայն բնագոյնական ոգին, այլև հիւմուրը կարծիութիւն մըն է, որ մեզի տրուած է՝ կարծեալ անցատուելու համար եղբրագաւեշտական մարդկային մեր դրութեան, լինելութեան տատուկէն, — սակայն ա՛յն պարագային միայն, երբ արդէն յագթանարած, յազնցած եւ լաւապէս ճանչցած ենք այդ բոլորը։ Փիտակցելու համար, թէ ինչ է սարսփիւն եւ խնդալու՛ համար անոր վրայ, անբաւժեշտ է տիրապետել այդ սարսփիւն... Տրամաբանութիւնը կը դրսևորէ ինքզինք աննեքեքի անտրամաբանականութեան մէջ, որմէ մենք խուսափած ենք։ Խնդուքը առանձինն ոչ մէկ թապու (tabou) կը յարգէ, խնդուքը առանձինն գոյութիւն ունի նոր հակաթապու թապուներու ստեղծումին մէջ։ Երգիծանքը առանձինն կրնայ մեզի տալ գոյութեան ոգեբերգութիւնը կրելու ուժը։ Իրերու ճշմարիտ բնութիւնը, ճշմարտութիւնը ինքն կրնայ մեզի ընծայելու միայն երեւակայնութեամբ, որ ինքնին անկա իրական է, քան ո՛րք իրականութիւնը»։

Սակայն, եթէ Իոնեսքո կրկին ու կրկին կը պնդէ իր թատրոնին հետապոստական ու ճանաչողական գծերն

վրայ, մարդ միշտ պէտք է ի մտի ունենալ ճանաչումի ա՛յն տեսակը, զոր ան կ'ուզէ հաղորդել: Շփոթահար քննադատներ, որոնք առաջին անգամ կը հանդիպին «Արքունիքը» եւ «Որսագործը» թատերախաղերուն օրինակով գրուած Իոնեսքոյի այլ թատերախաղերուն, անխուսափելիօրէն հարց կու տան, թէ ի՞նչ նպատակ կը հետապնդեն անոնք: Ի վերջոյ, մենք բոլորս գիտնք, որ մարդիկ դժուարութիւն ունին հաղորդակցելու իրենց անձնական փորձառութիւններուն, ինչպէս նաեւ դիտենք, որ մահը անխուսափելի է: Այն վայրկեանին, որ հանդիսատեսը կը հասկնայ, թէ ո՛ւր կը տանի զինք հեղինակը, թատերախաղը պէտք է աւարտի: Իսկ ընդունուած եւ բանաձեւուած (formulated) բարոյակներ չէ, զոր Իոնեսքոյ կը փորձէ փոխանցել, ան կ'ուզէ փոխանցել իր փորձառութիւնը այնպէս, ինչպէս ինք կը զգայ զայն՝ խնդրոյ առարկայ կացութիւններուն մէջ: Սխալ է կարծել, որ մարդկային փորձառութիւններու պարտադրելը կրնան դրուել Ծրարուած եւ յսակօրէն բանաձեւուած դեղահաստերու ձեւին մէջ, որոնք կրնան ուղեցոյց ըլլալ Թատրոնին: Այդ պատճառով է, որ Իոնեսքոյի քննադատութիւնը, անոր վայրագ երգիծանքը կը փորձէ կործանել համեմատական ա՛յն խաղանքը, զոր յետոյ ինքը, փորձառութեան քոլորովին անկատ, կրնայ հաղորդել մէկ անձին ուրիշի մը: Ասիկա, եթէ կրնայ երբեքից անդի ունենալ, զուրկ կը բերուի միայն արուեստագէտի ստեղծագործ արարքին շնորհիւ: Բանաստեղծը, օրինակ, որ կրնայ բան մը փոխանցել իր փորձառութեանէն, կրնայ նաեւ կարելիութիւն առնուել մարդէ հակի մը զգալու ա՛յն, զոր ինք անձնապէս ապրած է:

Գիտական ոչ մէկ բացատրութիւն կրնայ յստակացնել այն զգացումը, զոր մարդ կ'ապրի, երբ սիրահարուած է: Երկրասարգի մը կրնայ ըսուած ըլլալ եւ ան կը կարծէ, որ իրեն արդէն ծանօթ է այդ ապրումը, բայց երբ իրապէս կ'ուսննայ այդ բոլորին փորձառութիւնը, կ'անդրադառնայ, որ այդ մասին որեւէ

ճանաչում ճիշդ ու ամբողջական չէ եղած: Միւս կողմէ՝ ջերթուած մը, կամ երաժշտական կտոր մը ի վրնակի է հասողորդելու, հոր չէ թէ սահմանափակ ձեւով մը, զգացումի եւ փորձառութեան իրաւութիւնը: Նոյնպէս ալ, Իոնեսքոյ, «Որսագործ»ին նման թատերգութեան մէջ, չի փորձեր երկար արարներով պատել մահուան անխուսափելիութիւնը այնպէս, ինչպէս կարգ մը քննադատներ կը խորհին: Իոնեսքոյ կը փորձէ մեզ ժղել զգալու ա՛յն՝ որ կը զգացուի, երբ կը բախիս մարդկային այս հիմնական փորձառութեան: Ան կը փորձէ բացատրել ա՛յն՝ զոր կարելի է զգալ վերջաւորութեան, երբ դէժ յանդիման կու գունջ բիրտ իրականութեան հետ, որ ո՛չ մէկ աւարկութիւն կը վերցնէ եւ ոչ մէկ փոխուստ կ'արտօնէ կեանքի վախճանական իրականութեանէն: Թատերախաղի աւարտին, օրինակ, երբ Պերանժէ կ'ենթարկուի ոճրագործին դանակին, վերջին ճիշտ մը կը պայքարի ա՛յն գիտակցութեամբ, որ մենք պէտք է մահը դիմադրուենք առանց անկէ խուսափելի փորձելու, առանց զայն բացատրել ջանալու, սահմանելու, — աօհա, իր կարգին, համահաւասար է խորհրդատու փորձառութեան մը: Ճիշդ է, որ թատերախաղին միւս տիպարները, ճարտարագէտը կամ էտուրբտը կ'ընդունին ոճրագործին ներկայութիւնը իր անխուսափելի ներկայութիւն: Ճարտարութիւնը ա՛յն է, որ վերջինները այդ ձեւով կը վարուին, որովհետեւ իրենց կը պակսի մտածելու կարողութիւնը, երեւակայութիւնը եւ նախապաշարումի բարդոյթիւնը: Անոնք չեն կրցած թափանցել մահուան դոյութեան փորձառութեան եւ, հետեւաբար, կը ձախողին դիմադրուել զայն եւ կը դառնան կիսամեռ արարածներ:

Իոնեսքոյի թատրոնին նպատակը եղած է հանդիսատեսը զգաստացնելու, մարդկային կացութեան մասին անոր ճանաչումը խորացնելու եւ Պերանժէի ապրած փորձառութիւնը ըմբռնել տալու ձգտումը:

Մենք նոր տեղեկութիւն մը չենք

ակնկալեր բանաստեղծութենէ մը: Ժամանակի կամ մահուան անխուսափելիութեան մասին գրուած ապրող բանաստեղծութիւն մը աննկատ չի մնար քննադատներու կողմէ ա՛յն պարզ պատճառով, որ անիկա, այդ բանաստեղծութիւնը նոր ճշմարտութիւններ չի հաղորդեր մեզի: Իոնեսքոյի թատրոնը բանաստեղծական թատրոն մըն է, թատրոն մը, որ կը զբաղէ գոյութեան վիճակներու աւրնշուրթիւններով, որոնք հաղորդելիք գրեթէ արագոյն հարցերն են, որովհետեւ յիշուին, որ լայնօրէն կը բովանդակէ նախակազմուած, ստուած խորհրդանիշներ, անձնական փորձառութիւն մը գրեւորելու փորձէն աւելի՝ կը ձգտի աւելի խորթիւն: Երբ Ա.ը կ'ըսէ «տիրահարուած եմ», Բ.ը ատկէ կը հեռանայ պարզապէս սիրոյ իր փորձառութիւնը, կամ՝ ակնուկաւած փորձառութիւնը, որ կրնայ բոլորովին տարբեր բան մը ըլլալ թէ՛ իր տեսակին մէջ եւ թէ՛ իր խոտութեամբ, եւ, հետեւաբար, փոխանակ իր գոյութեան իմաստը հաղորդած ըլլալու, պարզապէս կը ձեւանայ Բ.ին զգալու իրայատուկ եղանակը: Որով՝ ոչ մէկ տիրական հաղորդակցութիւն տեղի ունեցած կ'ըլլայ: Երկուքն ալ բանաստեղծութեան կր ձեռն իրենց սեփական փորձառութիւններուն, մէջ, ինչպէս առաջ: Ահա թէ ինչո՛ւ Իոնեսքոյ իր անձնական գործին մասին, փորձելով հաղորդել անհայտը՝

Եթէ, ամէն պարագայի, լեզուն անհաղորդական գործիք մըն է, հետեւաբար ծրագրուած է եւ ընդհանուր, եւ տակաւին կարծրացած է ընդհանրացումներով ու քարացած՝ քիչէններով, աւելի արգելք մըն է, քան միջոց դէպի հարազատ հաղորդակցութիւնը. տակաւին՝ բանաստեղծական ձեւի զգայնութիւնն է փորձառութիւնն թելադրուած թափանցում մը ուրիշ արարածի մը գիտակցութենէն ներս՝ պէտք է փորձուի աւելի հիմնական մակարդակի մը վրայ, այսինքն՝ նախա՝ կամ ստորա-բառային մակարդակին փորձառութեան նախնական մակարդակի մը: Ասիկա երեւակայու-

թեան եւ խորհրդապաշտութեան նպաստն է, որ կ'ապահովէ յաջողութիւնը քննարկան բանաստեղծութեան, իր կարգին, միանալով կըսութեան տարրերու, ձայնային որակին եւ բառային զուգորդութիւններու:

Իոնեսքոյի թատրոնին մէջ նոյն մտեցումը կը փորձուի մարդկային հիմնական կացութիւններու գործածութեան մէջ եւս, որոնք կոչ կ'ուզեն ուղղակի եւ գրեթէ Ֆիզիքական պատասխանատուութեան մը, այնպէս, ինչպէս հստակ պատրաստութեան վայրկեանի մը մէջ կը զարնէ ոստիկանին, կրկէսին մէջ միմաստութիւններ կ'ընէ ինկող աթոռներով, կամ համար Ֆիլմի մը ընթացքին, երբ հերոսները անուշեղէններ կը նետեն իրարու դէմքերուն: Ասոնք բոլոր կ'արթնցնեն ուղղակի եւ օրգանային (visceral) պատասխանատուութիւն մը հանդիսականներուն մէջ: Միտցելով նման հիմնական եւ գրգռիչ զգացական պատկերներ աւելի եւ աւելի բարդ կատարներու եւ օգտուելով մարդկային աւելի բարդ կացութիւններու փորձառութիւնն է՝ Իոնեսքոյ աստիճանաբար կը զարբնէ իր թատրոնը՝ վերանելով զայն գործիքի մը:

Այս մէկուն պարագային, ան հաւասարապէս չի յաջողիր, բայց կը յաջողի «Դասը», «Արտաները», «Ժագը», «ԱՄՆ-սէն», «Նոր վայրակալը», եւ «Պատկանութեան գոհերը» անուն թատերախաղերով, որոնց մէջ Իոնեսքոյ յաղթականօրէն բեմ կը հանէ իր անձնական փորձառութիւնը եւ կը փոխանցէ զայն հանդիսատեսին: Կրնայ ճիշդ ըլլալ, որ իր ամբողջութեան մէջ այսպիսի հիմնական, թէեւ բազմաբեմէ եւ բարդ մտային վիճակներ աւելի կը յարմարին միարար կարճ թատերախաղերու, կամ նոյնիսկ սփռելու, քան երկարաւունջ թատերախաղերու: Տակաւին՝ «ՈՅրագործ»-ին օրինակով թատերախաղ մը ցոյց կու տայ, թէ կարելի է իրերահիւսել փորձառութեան նմանօրինակ պատկերներու շարք մը, ձեռք բերելու համար աւելի բարդ կառույց մը: «Ռեզիդիւ»-ը, որ նաեւ կը

ճատնէ թատերական աւելի երկարաշունչ ձեւ մը նուաճելու Իոնեսքոյի կարողութիւնը, շատ կը ծօտենայ ձգտումնաւոր թատերախաղի մը եւ առիթ կու տայ վիճարանութեան:

Անշուտ, անանդական թատրոնը եւս միշտ եղած է մարդկային հիմնական փորձառութիւններուն հետ հաղորդակցելու միջոց մը, բայց այս տուեալը յաճախ ստորադաստուած է ուրիշ գործօններու, ինչպէս, օրինակ, պատմութիւն մը պատմելու արարքին կամ դաղափարներու քննարկման: Իոնեսքո կը փորձէ մեկուսացնել այս մէկ տուեալը, ա՛յն՝ զոր ինք կը նկատէ ստոր մը, որ կրնայ կազմակերպել թատերախաղին գերազանց իրարարումը, եւ ուր անիկա կը դերակատարէ արուեստի արտայայտութեան բոլոր միւս ձեւերը եւ առաջացնել անխառն եւ ամբողջականօրէն թատերական թատրոնը:

Այն թերեւէ անդիմադրելիութիւնը, զոր տեղափոխելով Իոնեսքո կը փորձէ թատերադրի իր լրումին հասնել՝ իսկապէս հիանալի է:

«Ճողապտ երգչուի» անուն թատերախաղին մէջ միայն, որ իր առաջին եւ զանազան ձեւերու մէջ պարզագոյն թատերախաղի է, Այէն Պոսքէ առանձնապէս ձեւաւոր քան երեսունից «կատակերգութեան բաղադրիչ տարրերը» (recipes of the comic), դասաւորուած միայն շարժումի միաստիճանով — այսինքն՝ տեսարաններ, որ ոչինչ կը պատահէ —, տիպարներու ինքնութեան կորուստը, մուրեքցնող խորագիրը, մեքենայական անակնկալը, կեղծ-տարաշխարհայնութիւնը, կեղծ արժարանութիւնը, ժամանակագրական յաղորդականութեան ջնջումը, զոյգերու ծնարկութիւնը (proliferation) (այսինքն՝ ողջ ընտանիք մը, որ կը կոչուի Պոպի Ուաթսըն), յիշողութեան պակասը, եղերազաւեշտական անակնկալը (պատուհին կ'ըսէ. «Ես Շերլոք Հոլմսն եմ»), նոյն բանին համար արուած հակասական բացատրութիւններու համակերպութիւնը, երկախօսութեան բնորոշումը, եւ սխալ ակնկալութիւններու

դարգացումը զէպի անխառնօրէն Բլիշտացած ռնարանական հնարքներ, ինքնաշարժ ճշմարտութիւններ, բանաստեղծական ձայնարանութիւն, գերիրապատական ասացուածքներ, օտար լեզուներու գործածութիւն, իմաստի ամբողջական կորուստ եւ լեզուի այլասերում:

Կարելի է տակաւին աւելցնել այս ցանկին վրայ Իոնեսքոյի աւելի ուշ գրած թատերախաղերուն մէջ գոյութիւն ունեցող յատկանշական բազմաթիւ այլ հրահարները եւ ամէնէն առաջ՝ նիթերու ծնարկումն ու շնչաւորումը, ներդաշնակութեան կորուստը անհատ տիպարներու, որոնք կը փոխեն իրենց բնութիւնը մեր աչքերուն առջեւ, հայելիին դանազան արդեցութիւնները, որոնց մէջ թատերախաղը կը վերածուի վիճարանական նիթի մը նոյնի՛նքն թատերախաղին մէջ, եւ արտարեմական երկախօսութիւնը, որ կը թելադրէ անհատին մեկուսացումը անիմաստ կտրճ խօսակցութեան մը մէջ, զանազանութեան կորուստը շնչաւոր եւ անշունչ առարկաներու միջեւ, հակադրութիւնը բնորոշ տիպարներու երեսութեան պոստկերպումին եւ իրական գոյութեան երեւումին (երիտասարդ աղջիկը, որ իրականութեան մէջ պիտաւոր պարոն մըն է՝ «Ամուսնաւթեան քեկնաձու սպասուիին» (Maid to marry) թատերախաղին մէջ), հանճարը, որ դուրս չուերի («Առաջնորդը» (The Leader) թատերախաղին մէջ), բեմական այլակերպումի գործածութիւնը («Պատկերը» եւ «Ինկեղջիւրը» թատերախաղերուն մէջ), ինչպէս նաեւ շարք մը ուրիշներ:

Ի՞նչ են, ուրեմն, հիմնական կացութիւնները եւ փորձառութիւնները, զորս Իոնեսքո օգտագործելով այս զանազան ճարտութիւնը եւ եղերազաւեշտական դիւտերը կ'ուղէ հաղորդել: Հնարքն՝ ը պարզապէս: Իոնեսքոյի թատրոնը ունի երկու հիմնական պոյմաններ, որոնք յաճախ համագոյ են նոյն խաղին մէջ: Այս երկուքն աւելի փոքրը բողոք մըն է ընդդէմ մեր օրերու մեքենայացած քաղցեմի մահացու քաղաքակրթութեան, անկումային արժէքներուն եւ ա-

սոնց իբրև հետեանք՝ ի յայտ եկած կեանքին առհասարակ արժեքը մինչև իրենցս կր պարտաւէ աշխարհ մը, որ կորսնցուցած է իր բնականցական չափերը, ուր մարդկային էակներ այլևս չեն ապրիր խորհուրդի մը զգայնութիւնը, ոչ իսկ պատկասանք մը՝ իրենց սեփական գոյութեան հանդէպ: Բրանոյ լիզուի մը կատարի հեղանջին ետին՝ գոյութիւն սենի չբժշկանք մը՝ կեանքը բանաստեղծականօրէն բնկայելու արարքին համար:

Վերք կ'արթննամ կենսաբաշխ առատութիւն մը, գիշերային քունէն, ինչպէս նաեւ իմացական սպառիչ քունէ մը, յանկարծօրէն կը գզուսեմ իմ գոյութիւնէն եւ տիեզերական ներկայութենէն: այսպէսով՝ ամէն բան կը քուի տարօրինակ եւ միատեմանակ՝ ընտանի ինձի, երբ գոյութիւն ունեցաւ այդանքը կը խուժէ վրաս — այս գրագրութիւնը եւ այս բնագրը կը պատկանի բոլոր մարդոց եւ բոլոր ժամանակներու: Մտի այս վիճակին արտայայտութիւնը կրնամք գտնել գրեթէ միեւնոյն բաներով, բոլոր բանաստեղծութիւններու, խորհրդապատկերներու եւ փիլիսոփաներու մօտ, որոնք կը գտնեն միշտ այնպէս, ինչպէս եւ իմքս:

Բայց եթէ Իոնեսքս վայրագօրէն կը յարձակի կեանքի ձեւի մը վրայ, որ խորհրդապատկեր է գոյութիւնը, ասիկա չի նշանակեր, թէ ինք մարդկային գոյութեան ներկցորդութեան ամբողջական պատասխարում մը կը նկատէ իբրև խաղաղական (euphorique) վիճակ մը: Ընդհանրապէս, գոյութիւն ունենալու բնագրը, զոր ինք կը փորձէ հագորդել, ինքնին յուսահատական ճիշտ մըն է: Հիմնական թեմաները, որոնք կը պատահին իր խաղերուն մէջ՝ կը յայտնակերպին առանձնութիւններն ու մեկուսացումները, ուրիշներու հետ չկարենալ հաղորդակցելու իր դժուարութիւնը, իր ենթակայութիւնը արտաքին ճշումներու ու ընկերութեան մեքենական պատշաճականութեան (comformité), ինչպէս նաեւ ենթակայութիւնը իր իսկ անհատականութեան կողմէ՝ բանեցում ճշումներուն — սեռայնութիւնը եւ յանցանքի հետեւողական զգացում-

ներն ու անձկութիւնները, որոնք կը բռնաբանեն անձի մը ինքնութեան անորոշուելուն եւ մահուան որոշակութեան:

Եթէ Պէրէթի թատերախաղերուն մէջ հիմնական օրինակները իրարմէ անկարգուղի են, իրարու յրացուցիչ անհասկանութիւններ, եւ Աղամուլի թատրոնին մէջ դիւար հակառող ամոյներ, որոնք միատեմանակ թէ՛ արտաքին եւ թէ՛ ներքին ապրումներուն (extrovert - introvert) արժէք տուող մարդիկ են, Իոնեսքսի մօտ ամէնէն յաճախող է պրիմալ ամուսնացած գոյցն է՝ բնտանիքը — տէր եւ տիկ: Սմիթ, Ամէտէ եւ Մատլէն, Շուպէրթ եւ իր Մատլէնը, Վերտներուն մէջ ծեր մարդը եւ իր պատուը, Ժակ Բոնտանիքը «Ժագ» եւ «Ապագան հակիթներուն մէջ է» թատերախաղերուն մէջ, Բրոֆֆեսօրը եւ իր սպասուհին (որ միատեմանակ կրնէ եւ մայր իրեն համար) Վալըր թատերգութեան, եւ «Պատկերը» թատերախաղին մէջ հարուստը եւ իր գոյրը: Այս հիմնական օրինակներն մէջ, կրնն ընդհանրապէս կը խաղայ հիացիկ բայց միատեմանակ սողակալի դեր մը, որ իր ամուսինը հանդուրժող դերն է: Իոնեսքսի աւելի ուշ գրած թատերախաղերուն մէջ՝ Պերանձէ միակ եւ մեկուսացած անձ մըն է, բայց իր բաշխուչիւր պարագայի ան նաեւ սիրահարուած է իտալական եւ հասկցող երիտասարդ աշխատատեղուհի մը՝ Տէնի - Տէյթի, որ կ'անձնաւորէ նոյնինքն չորհրդ, գեղեցկութիւնը եւ ձեռնբերելիքը (savoir - faire):

Իոնեսքսի տիպարները կրնան մեկուսացուիլ եւ առանձնանալ բնականցական առումով, բայց անոնք բացարձակապէս չեն կրնար նմանիլ Պէրէթի եւ Աղամուլի թատերախաղերուն եւ մերժումներուն (outcasts) եւ ասիկա ձեռով մը կ'անձնակերպի իրենց մեկուսացման յուսահատականութիւնը եւ անհեթեթութիւնը — անոնք միմեկին հակառակ այն իրողութեան, որ օրգանական անգամներն են համար գործակցութեան մը: Ասիկայն, ինչպէս «Ժագ» թատերգութեան մէջ կը տեսնենք ամէնէն աւելի, ընտանիքը ընկերային

ճնշումը գործիք մըն է՝ յանուն պատ-
շահակոնիտի (comformité), որ նոյ-
նիսկ չի կրնար դիմադրել քաղցր եւ սի-
րելի Տէյլիֆին՝ «Բնագեղջիւրքին մէջ»:

Այսուհանդերձ, ընկերակցութեան
ներկայութիւնը եւ ընտանեկան յարաբե-
րութիւնները թեթեւութիւն մը կը կու-
տան Իոնեսքոյի աշխարհին յուսահատու-
կան կացութեան: Միայն պիտի ըլլար
Իոնեսքոյի դիրքը համարել ամբողջական
յոռետեսութիւն մը: Ան կ'ուզէ գոյու-
թիւնը դարձնել ամբողջովին վաւերա-
կան, ամբողջովին ապրուած, մարդը
դնելով մարդկային կացութեան բիրտ
իրականութիւններուն գէժ յանդիման:
Բայց անկեալ եւս ազատագրումի ձեւ մըն
է: Վարդկային կացութեան անհեթե-
թութեան վրայ յարձակիլը, — ըսած է
Իոնեսքո, — ոչ-անհեթեթ (non-absurdi-
té) կացութիւնը հաստատելու ձեւ մըն
է: Այլապէս, ուրիշ ո՛ր կրնար գոյու-
թիւն ունենալ այս բոլորին վկայութիւ-
նը... (պոստտայական ուսմունքին մէջ
գոյութիւն չունի նման ուղղակի ուսու-
ցում մը, այլ հոն կայ միայն ելքի մը
եւ յայտնութեան մը մնայուն որոնումը:
Ոչինչ զիս աւելի յոռետես կը դարձնէ,
քան յոռետես չըլլալու հարկադրանքը:
Ես կը դիմեմ, որ յուսայբուծի իրաքան-
տումն է, ուրիշ ամէն ոք պէտք է ազա-
տորէն փորձէ հլիք մը դանկը):

Յուսահատ կացութեան ճիշդ այս
հաստատումը, որ կարող կը դարձնէ
հանդիսատեսը դիմակայելու համար այդ
բոլորը բաց աչքերով, կը յաջողցնէ ան-
բաղձալի պզտուամենքու չէզոքացում մը,
ազատագրում մը: Մի՞թէ կողիպիտս եւ

Լիբ Իրենց մարդկային կացութեան ամ-
բողջական յուսայբուծին եւ անհեթե-
թութեան համակերպողներ չէ՞ն: Այսու-
հանդերձ, Իրենց ողբերգութիւնները պի-
րենք ազատագրող փորձառութիւններ են:

Իոնեսքո ինքը միշտ ընդգրկմացած է
այն պաղապարին, որ իբրեւ առաջապահ
հեղինակ դուրս կը մնայ աւանդութեան
հիմնական հոսանքէն: Ան կը սինդէ, որ
առաջապահ շարժումը պարզապէս ա-
ւանդութեան անհետացած մասերուն վե-
րայայտումն է: Եւ ուրեմն, երբ ինք
կ'ընդունի, թէ Քորնէլլ կը ձանձրացնէ
զինք, Շելլէր անհանդուրժելի է, Մա-
րիօ՝ դատարկաբան, Միւսէ՝ ճշդիմ,
Վինյի՝ անբեմադրելի, Վիքթոր Զիւկո՝
ծիճաղելի, Լադիլ՝ տահնելի, Տիւմա որ-
դին՝ ծիճաղելիորէն զգացական, Օսքար
Ուսայլո՝ դիւրին, Իրսէն՝ ճնշիլ, Սթրեն-
պերկ՝ անշնորհք, Փիլանտէլլո՝ ժամա-
նակավրէպ, Ժիրօտու եւ Քոզթո՝ մակե-
րեսային, ան ինզքինք կը նկատէ իբրեւ
աւանդութեան մէկ մասնիկը, այն աւան-
գութեան, որ կ'ընդգրկէ Սոֆոկլէսը, Էս-
քիլէսը, Շէյքսպիրը, Քէյսթը եւ Պիտ-
նէրը, պարզապէս որովհետեւ վերջին
այս հեղինակները գրադած են մարդկա-
յին կացութեամբ՝ անոր բոլոր կոպիտ
անհեթեթութիւններով:

Միայն ժամանակը կրնայ ցոյց տալ,
թէ մինչեւ ե՞րբ Իոնեսքո պիտի մնայ այդ
ձեռն աւանդութեան հիմնական հոսանքին
մէկ մասնիկը:

Այսուհանդերձ, յստակ է այն, որ
իբ գործը կը ներկայացնէ հերոսական ի-
րաւ փորձ մը՝ խորտակելու համար
մարդկային փոխաբերութեան սաւ-
մանները:

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻ

(Շար. 7 եւ վերջ)



ՄՈՆԵԴ

Եթէ աչքերդ չունենային
 գոյնը լուսինի,
 Յերկիւան մը սատափեայ գոյնով,
 Յոգնութեամբ եւ հուրով,
 Թէ չունենայիր
 Ռոտատու մը հովում,
 Եւ թէ չըլլայիր
 Դուն շաքաթ մը բոյր,

Եւ թէ չըլլայիր
 Ժամանակը դալկահար,
 Ուր աշունը պատաղիկին
 Փաթթուելով կը բարձրանայ,
 Եւ թէ չըլլայիր
 Այն հացը, զոր լուսնկան
 կը պատրաստէ,
 Երբ կը հսկէ՝ երկնքին մէջ
 Իր ալիւրով,

Պիտի երբեք չսիրէի թեզ,
 սիրելի՛ս.
 Համբոյրիդ մէջ աշխարհն ամէն
 կը ձուլեմ,

Աւագը, ժամանակը եւ
 Մառն անձրեւի,
 Ամէն ինչ կ'ապրի՝
 Ռալէսզի ապրիմ.
 Առանց նահանջի
 Եւ կը տեսնեմ ամէն ինչ,
 Ու կը տեսնեմ
 Ամէն ինչի մէջ տրտիտ
 Ներկայութիւնդ բովիչ...

ՓԱՊԼՕ ՆԵՐՈՒՏԱ

ՓԱՊԼՕ ՆԵՐՈՒՏԱ

1971Ի ՆՈՊԵՆԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԻՈՐԸ


Հոկտեմբեր 22ին, Եւզեփ Ակոզեմիայի Նոպէլեան դրական մրցանակի
 ծիւրին հռչակուող մրցանակը յատկացուց շիլիցի բանաստեղծ Փապլօ Նե-
 րուտայի:

Փապլօ Ներուտա ծնած է 1904ին: 17 տարեկանին արդէն իբրեւ բա-
 նաստեղծ կը տարածուի իր անունը, իսկ 20 տարեկանին իր լուս ընծայած
 «Արթոյ Քամ Երգեր Եւ յուսահատ Երգ մը» անուն գործը, որմէ Հատին Ամե-
 րիկայի մէջ կը սպասուի երկու միլիոն օրինակ, կը նուիրադարձէ իր Համբուր:
 Այնուհետեւ, Ներուտա յաջորդաբար լուս կ'ընծայէ շուրջ քսան Հատորներ:
 որոնք կը թարգմանուին բազմաթիւ լեզուներու:

Գրականութեան կողքին, Ներուտա ունեցած է նաեւ յեղափոխական եւ
 քաղաքական գործունէութիւն մը: Ներկայիս Փարիզի մէջ իբրեւ դեպքան կը
 ներկայացնէ իր երկիրը:

Յաջորդով աւելի լայնօրէն պիտի անդրադարձանք Փապլօ Ներուտային ու
 գործին:

digitised by



ՇՆՈՐՀԱՅԱԿԱՆ ԳԻՐԵԱՄԲ ԱՍՏՅԱՆՔ

- ԿԱՐՕՏ (Պատմաբանություն), Ա. Հայկազ, Պեյ-րուք, 1971
- ՔԱՌՈՒՂՅՈՒՆ (Բանաստեղծություններ), Վ. Օշա-կան, Պեյրուք, 1971
- ՅԱՐԱԼԵՅՆԵՐՈՒՆ ԳԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ (Պատ-մաբանություն), Ե. Շահնուբ, Պեյրուք, 1971

ՄԱՍՈՒԿԻ ՏԱՆ Է ԵՒ ՀՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄԵ

ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
 ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՍՓԻՒՆՔԱԶԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒՆ
 (1940 — 1965)

ՄՕՏ ՕՐԷՆ

ՄՕՏ ՕՐԷՆ

ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄԵ
 ԽՈՍՐՈՎ ԱՍՈՅԵԱՆ
 Կ Է Տ Ե Ր...
 (ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԻՒՆՆԵՐ)

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارزين كارتيك قزنجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն
 ԱՍՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
 ԵՒ ԿՐԹԻՆՈՍՏԵՐ

- ՎԱՐՁ ԽՍՐՈՎԻՐ
- Կ. ԱՍՈՅԵՆԻ
- ԽՍՐՈՎԻՐ
- Գ. ՄԵՆՁԵԱՆ

- ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ
- ԱՆԳԱՄՆԵՐ
- Յ. ԳԵՂԱՐԳ
- Տ. ՈՍԿՈՆԻ
- Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
- Ն. ՊԱՐԹԵՆԵԱՆ
- Ժ. ԱԹԱՐԵԱՆ
- ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԳԱՄՆԵՐԷ
- † ԵՒ ՊՅՈՒՆԵԱՆ

Խմբագրություն հասցե

G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban

Հեռախոսի թիվ 296898

ՏՊ. ՀԱՄԱԳՎԱՅԻՆ

A.R.A.R.@